

ՄԱՐԶԻԳ

հսլս


Մարզիկ

ՄՃԼԵ ՐԻԱՅԻԿԵ ՏՃԵՐԻԵ
ՏՎՃՐԻՃԱ ՃԵՄԵԻԵ ԻՓՄՆՏՄՆ ԲԻՐՈՒՒ

marzig

SPORTS MAGAZINE

347 ՏԱԼԻ, 2015, ԹԻԻ 1-3 (391-393) VOL. XXXIV N# 1-3 ԻՍՆԵ ՐԻԱԵԵ ԵՒ ՏՐԼԱՏՈՒՆ - ԵԸԸԸ ՐԵԸՄ Ի-Ը



Հ.Մ.Ը.Մ.Ի ՓՈՂԿԱՊԸ՝ ՀՌՈՄԻ ՖՐԱՆԶԻՍԲՈՍ ՊԱՊԻՆ



Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին առիթով Վատիկանի մէջ մատուցուած Ս. Պատարագին ներկայ գտնուեցաւ Հարաւային Ամերիկայէն պատուիրակութիւն մը, որուն մաս կազմեց Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղի ատենապետ եղբ. Հորասիո Թերզեան:

Այս առիթով, եղբ. Թերզեան հայուիցեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի անունով շնորհակալութիւն յայտնեց Հռոմի Ֆրանչիսքոս Պապին՝ մարդկային իրաւանց եւ յատկապէս հայուիցեան արդար իրաւունքներուն իր աջակցութեան համար: Ան նաեւ ծանօթացուց Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը, համաշխարհային կառոյցը եւ սկառուտական շարժումը, բացատրելով «Արարատ» խումբին տարած աշխատանքը աւելի քան 120 սկառուտներով:

Առ ի երախտագիտութիւն, եղբ. Թերզեան Պապին յանձնեց Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» սկառուտական խումբին փողկապը, յայտնելով թէ այդ մէկը զրկուած է Հ.Մ.Ը.Մ. «Արարատ»ի սկառուտներուն կողմէ:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՆՈՐ ՄԱՍՆԱԾԻԲՂԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԻԲՆԻԽԻ ՄԷՋ

30 Մայիս 2015-ին, Հ.Մ.Ը.Մ. օտարուեցաւ իր 107-րդ մասնաճիւղով, երբ Գերմանիոյ Միւնիխ քաղաքին մէջ կատարուեցաւ հանդիսաւոր հիմնադրութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն մասնաճիւղին: Այս առիթով Գերմանիա ժամանեց եւ միութեան դրօշն ու կանոնագիրը Միւնիխի մեկուսի վարչութեան ատենապետ եղբ. Գրիգոր Սարգիսեանին յանձնեց Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան:



Հ.Մ.Ը.Մ.ի Միւնիխի մասնաճիւղի հիմնադրութեան յաջորդեց Հայաստանի Ա. Հանրապետութեան 97-ամեակի տօնակատարութիւն, ուր խօսք առաւ եղբ. Գառնիկ Մկրտիչեան:

Միւնիխի մէջ, եղբ. Մկրտիչեան հանդիպում մը ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի նորաստեղծ մասնաճիւղի Սկառուտական Խորհուրդին հետ: Հանդիպումին պարզուեցաւ, որ այսօր Միւնիխի մէջ կան 34 սկառուտներ, որոնցմէ եօթն 3-6 տարեկան են, տասնմէկը՝ 6-12 տարեկան, տասներկուը՝ 12-18 տարեկան, իսկ չորսը՝ 18 տարեկանէն վեր: Անոնք կը գործեն քառանդամ

Սկառուտական Խորհուրդով մը, որուն ատենապետը նախկին իրաքահայ մըն է, որ շրջան մը գործած է Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի մէջ եւ այժմ հաստատուած է Գերմանիա: Մասնաճիւղը կը հաշուէ 60 անդամ:

Կատարուեցաւ նաեւ ժողովրդային հանդիպում մը, որուն ներկայ գտնուեցան նորաստեղծ մասնաճիւղին անդամները եւ Միւնիխ բնակող հայորդիները, մեծ մասամբ նախկին լիբանանահայեր եւ

իրաքահայեր: Հանդիպումին ներկայ գտնուեցաւ շրջանի հոգեւոր հովիւը, որ Միւնիխի եկեղեցական մարմնին անունով ընթերցեց Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղին ստեղծման շնորհաւորագիրը:

Յայտնենք, որ Հ.Մ.Ը.Մ.ի Միւնիխի նորաստեղծ մասնաճիւղին վարչութիւնը կը բաղկանայ հետեւեալներէն.- Գրիգոր Սարգիսեան՝ ատենապետ, Սեդա Տէր Ղուկասեան՝ ատենադպիր, Վիգէն Վարդանեան՝ գանձապահ, Սարգիս Բաշաչեան՝ հաշուապահ, Նորայր Մկրտիչեան՝ փոխ ատենապետ, Յովիկ Բարսեղեան՝ մարզական պատասխանատու եւ Սարգիս Մուշեղեան՝ գոյքապահ:

ԱՅՍ ԹԻԻԸ

3407 ՏԱՐԻ, 2015, ԹԻԻ 1-3 (391-393)

www.Homenetmen.org



Մարգական աճսաթերթ
Զրատարակութիւն՝
Հ.Մ.Ը.Մ.ի
Կեդրոնական Վարչութեան

ԽՄԲԱԳԻՐ
Վիգէն Աւագեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ

Սեւան Նազարեան (Ֆրանսա),
Սեդա Պէշլեան-Սաղազարեան,
Մարօ Քէշիշեան (Արեւմտեան
Մ. Նահանգներ), Յակոբ
Խաչատուրեան (Արեւելեան
Մ. Նահանգներ), Տիրան
Շահինեան (Գանատա), Ռազմիկ
Յովհաննիսեան (Հայաստան)

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ

Գրիգորիս Պողարեան
Պատրիկ Կիւլպէնկեան
Աբօ Մոսիկեան

ԹԵՔՆԻԲ ԱՆՁՆԱԿԱԶՄ

Էջադրում - Արշօ Պալեան
Գրաշարութիւն - Շողիկ Պոյաճեան
Colour Separation - Photogravure
Paklayan

Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն



ՀԱՍՅԷ

Պուրճ Համուտ, Նոր Մարաշ
«Սեւան» Շէնք, Գ. Յարկ
Հեռ: 00961 1 248043, 260117
E-mail: marzig@homenetmen.org
P.O. Box: 80486 B. Hammoud,
Lebanon

marzig
SPORTS MAGAZINE

ՅՐԻՈՒՄ-ՎԱՃԱՌ-Բ

Լիբանանի մէջ թերթին
ցրումը կը կատարուի
յատուկ ցրուիչով (71/ 239209):
Տարեկան բաժանորդագրութեան
սակ ճշդուած է՝ Լիբանան \$32
Միջին Արեւելեան եւ
Եւրոպական երկիրներ \$70,
Մ. Նահանգներ եւ Աւստրալիա \$75

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ


Թերթը ուղղակի Լիբանանէն
կը ստացուի անձնական
բաժանորդագրութեամբ:
Լիբանանէն դուրս թերթին
բաժանորդագրութիւնը
կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Մեկուսի
եւ Շրջանային Վարչութիւնները:



20

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Պատգամ 3
- Պատմութիւն 14
- Ակնարկ 17
- Մասնաճիւղէ Մասնաճիւղ 19
- Մեր Կորուստները 76



22



28



36



47



Խ
Մ
Բ
Ա
Գ
Ր
Ա
Կ
Ա
Ն

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԸՆԼԱԿՈՒ ՎԱՅԵԼՔԸ

Առհասարակ, վայելքը կապ-
ած է նիւթական արժէքնե-
րու: Մարդիկ հարստութիւն
կը վայելեն, դիրք ու հան-
գամանք կը վայելեն, աշ-
խարհը կը վայելեն: Դժուար է ըմբռնել,
որ կայ նաեւ վայելքի այլ տեսակ մը, որ
կապ ունի մարդկային արժէքներու ծա-
ռայութեան հետ, ազգային նուիրաբերու-
մի հասկացողութեան հետ:

Գաղափարի մարդն է միայն, որ
կրնայ նման վայելք ապրիլ: Անձնագոհ
մարդն է միայն, որ կրնայ ուրախանալ
եւ հպարտանալ այսպիսի վայելքով ապ-
րուած կեանքի մը փորձառութեամբ:

Հ.Մ.Ը.Մ.ականը գաղափարի մարդ է,
անձնագոհ է: Միութենականութիւնը վա-
յելք է իրեն համար: Օրինակը կու գայ հե-
ռաւոր Արժանթինէն, ուր կեանքի վեր-
ջալոյսին մօտեցած հաւատաւոր մը բա-
ռերը հատիկ-հատիկ ընտրելով կը խոս-
տովանի. «Ես ապրեցայ Հ.Մ.Ը.Մ.ական
ըլլալու վայելքը...»:

Կը խոստովանի ու կը բացատրէ.

Վայելք է ըլլալ միութեան մը մէջ, ուր
մեծ հայր, զաւակ եւ թոռնիկ միասին
կը գործեն, միասին ժամանակ կ'անցը-
նեն եւ միասին կը մեծանան: Ակումբը
տուն է Հ.Մ.Ը.Մ.ականին համար, իսկ
տունը՝ ակումբ, իր բարոյական, միութե-
նական եւ ազգային արժէքներով, հայա-
շունչ մթնոլորտով եւ ընկերային ապա-
հով միջավայրով:

Վայելք է ըլլալ միութեան մը մէջ, ուր
երիտասարդ մնալու բոլոր պայմաննե-
րը կան: Հ.Մ.Ը.Մ.ականը չի ծերանար, չի
յոգնիր: Յաղթանակներու բերկրանքը,
յաջողութիւններու գոհունակութիւնը ըս-
պիտակահեր մարդը անգամ կը պահէ
կայտառ ու կենսուրախ, ապագայի նը-
ւաճումներով միշտ խանդավառ:

Վայելք է ըլլալ միութեան մը մէջ, որ
աշխարհագրական սահման չի ճանչ-
նար: Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախա-

ղեր, բանակումներ եւ ժողովներ քով-քո-
վի կը բերեն աշխարհասփիռ հայեր,
որոնք կը ստեղծեն գեղեցիկ ծանօթու-
թիւններ, հաճելի մտերմութիւններ: Հ.Մ.-
Ը.Մ.ական մարդը կը ծանօթանայ աշ-
խարհի չորս ծագերը ապրող իր նմա-
նին, մարդո՛ւն, հայո՛ւն, միութենակա-
նին: Կը բաժնէ անոր մտահոգութիւննե-
րը: Կը կիսէ անոր յաջողութիւնները:

Վայելք է ըլլալ միութեան մը մէջ,
որուն հիմնադրութեան պայմանները եւ
հեռաւոր նպատակները կը նոյնանան իր
ժողովուրդի անկատար տենչերուն եւ
ազգային տեսլականներուն հետ: Հ.Մ.-
Ը.Մ.ի մէջ մարդ կ'ապրի ու կը գործէ հա-
յութեան հետ, Հայաստանի համար: Ինք-
նանպատակ գործունէութիւն չունի ան,
քանի Հ.Մ.Ը.Մ.ը ակումբ չէ, շահակցա-
կան ընկերակցութիւն չէ, այլ՝ ազգին
կարիքներէն ծնած, ազգին համար ապ-
րող միութիւն է:

Վայելք է ըլլալ միութեան մը մէջ,
որուն բովէն անցած են մեծեր եւ մեծու-
թիւններ: Սովորական միութիւն մը
եղած չէ Հ.Մ.Ը.Մ.ը եւ, հետեւաբար, սովո-
րական մարդիկ եղած չեն Հ.Մ.Ը.Մ.ի մէկ
դարեայ պատասխանատուները, որոնք
աշխարհին տուած են գերագոյն նուիր-
աբերումի գեղեցկագոյն օրինակները՝
Շաւարշ Քրիսեանէն Վահան Չերազ,
Վարդգէս Տէր Կարապետեանէն Վար-
դան Բախշեան: Առանց մոռնալու օրի-
նակները միւսներուն՝ անոնց, որոնք
իրենց բովանդակ կեանքը դարձուցին
ամենօրեայ նուիրաբերում, մարդկօրէն
ապրելու եւ հայօրէն գոյատեւելու
իրենց արդար իրաւունքին ի խնդիր:

«Ես ապրեցայ Հ.Մ.Ը.Մ.ական ըլլալու
վայելքը, իսկ դուք ինչո՞ւ չապրիք», կը
յարէ արժանթինահայ վաստակաշատ
եղբայրը եւ խորհրդածել կու տայ իր
հրաւերին մասին:

Իրա՛ւ, իսկ դուք ինչո՞ւ չապրիք այդ
վայելքը...

ՀԱՅԱԿԵՐՏՄԱՆ ԵՒ ՄԱՐԴԱԿԵՐՏՄԱՆ ՆՈՐ ՀԱՍՑԷ ՄԸ՝ Հ.Մ.Ը.Մ. ՄԻԻՆԻԽ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ
ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ԽՕՍՔԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ Ա.ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 97-ԱՄԵԱԿԻՆ
ԵՒ ՄԻԻՆԻԽԻ ՄԱՄՆԱՃԻԻՂԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ)

Մանուկ էինք, ամեն տարի, Մայիս 28ին, մեր վարժարաններուն մէջ կը մասնակցէինք ձեռնարկներու, տողանցքներու եւ հոն՝ մեր մատղաշ հոգիներուն մէջ անորոշ խորհուրդ մը կը դրոշմուէր: Այդ խորհուրդը տարիներու ընթացքին կը հասուննար ու կը բերեղանար ակումբներու յարկին տակ: Ատիկա կորսուած հայրենիքի անկախութեան խորհուրդն էր:



ղաքացիները, իրենց տանջահար սրտին եւ արծաթագոյն մազերուն հետ, իրական հայրենիքը տեսնելու կարօտը տարին Հալէպի, Պէյրութի, Պաղտատի, Միւնիխի թէ Լոս Անճելըսի գերեզմանատունները:

Ո՞վ կրնայ մոռնալ այդ բոլորը:

24 տարի առաջ, երբ Հայաստան վերանկախացաւ, հայրենի ղեկավարութիւնը պէտք չունեցաւ արխիւներու մէջ փնտռելու մեր պետականութեան արժէքները:

Այսպէս էր Սփիւռքի բոլոր գաղութներուն մէջ: Դպրոցներու շունչով եւ ակումբներու մթնոլորտով տեսլական մը կը հետապնդէինք, ստեղծած էինք հոգեկան հայրենիքներ եւ դարձած էինք անոնց քաղաքացիները: Ու մեզմէ քանիններո՞ւն հայրերն ու մեծ հայրերը, հոգեկան այդ հայրենիքներու քա-

ղը: Պէտք չունեցաւ, որովհետեւ մենք, հոգեկան հայրենիքի քաղաքացիներս, սփիւռքեան մաշեցնող պայմաններուն մէջ, «հայրենիքի դաւաճան» կոչուելու գնով՝ բարձր պահեցինք Եռագոյնը. մեր կուրծքը զարդարեց պետական զինանշանը եւ մեր շրթներուն վրայ 70 տարի հպարտօրէն հնչեց ազգային քայլերգը:

70 տարի մենք խորապէս համոզուեցանք, որ հայութիւնը ունի ներքին ուժականութիւնը, յատկանիշները, նաեւ գիտակցութիւնն ու կամքը՝ դիմագրաւելու իր դժուարութիւնները եւ ստեղծելու փայլուն ապագայ: Կը բաւէ որ համախմբուինք իրարու մօտ եւ ազգային տեսլականով առաջնորդուինք:

Կը բաւէ, որ կազմակերպուինք, հզօրանանք եւ ձեռք-ձեռքի տուած մեր ներքին տունը՝ մեր գաղութները եւ հայրենիքը շէնացնենք:

Այսօրուան մեր այցելութիւնը այստեղ, Արեւմտեան Եւրոպայի կեդրոնական այս քաղաքը, կը հետապնդէ այս նպատակը: Զգալի աշխուժութիւն ապրող Միւնիխի մեր գաղութին տալ նոր թափ ու կորով, որպէսզի ազգային կազմակերպման եւ հզօրացման աշխատանքները այսուհետեւ յառաջ տանի աւելի հաստատ քայլերով:



Նոր թափն ու կորովը պիտի ներարկուի ո՛չ թէ հրաշքով, այլ՝ հրաշքի համազոր գործ կատարող Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղի մը ստեղծումով: Հ.Մ.Ը.Մ. այսօր պիտի օժտուի իր 107-րդ մասնաճիւղով: Եւրոպական այս ցամաքամասը պիտի ունենայ հայակերտման եւ մարդակերտման նոր հասցէ մը՝ Հ.Մ.Ը.Մ. Միւնիխը, որ իբրեւ մէկ օղակը 107 օղակներ հաշուող համահայկական մեր միութեան, պիտի գայ իր նպաստը բերելու հայութեան գոյատեւման մեր երթին:



Եղբ. Գառնիկ Մկրտիչեան միութեան կանոնագիրը կը յանձնէ Միւնիխի մասնաճիւղի ատենապետ Եղբ. Գրիգոր Սարգիսեանին:

Յարգելիներ, Ժողովուրդներու պատմութեան մէջ հազաւազիւտ են մարզական այն միութիւնները, որոնք 97 տարի գոյատեւած են իրենց հիմնական առաքելութեամբ:

Մանաւանդ մեր օրերուն, երբ մարզական միութիւնները, քիչ բացառութեամբ, վերածուած են գործարար ընկերութիւններու, իսկ մարզիկները՝ վճարովի արհեստաւորներու:

Մեզի նման փոքր ու աշխարհի տարածքին սփռուած ժողովուրդի մը մէջ, գերմարդկային զոհողութիւններ կ'ենթադրէ 97 տարի մարզական եւ սկաուտական միութիւն մը պահելը եւ թիւով ու որակով տեւաբար յառաջդիմելը: Իսկ այդ զոհողութիւնները կը կատարէ մեր սքանչելի ժողովուրդը, որուն համար Հ.Մ.Ը.Մ-ը եղած է ու կը մնայ սերունդներու փրկութեան լաստը, մարզական առողջ միջավայրը, սկաուտական ազնիւ սկզբունքներու դարբնոցը, մէկ խօսքով՝ մարդակերտումի եզակի կեդրոնը:

Մարզանքն ու սկաուտութիւնը որպէս միջոց ունենալով, Հ.Մ.Ը.Մ. 97 տարի շարունակ իրեն դիմող սերունդներուն փոխանցեց ինքնավստահութիւն, արժանապատուութեան զգացում եւ ազգային պատկանելիութեան գիտակցութիւն, այլ խօսքով՝ ան հայկականութեան ազգային կնիքով դրոշմեց

երիտասարդ սերունդներ, Հ.Մ.Ը.Մ-ը դարձնելով, համագաղութային եւ համահայկական մեծ ընտանիք, կամուրջ՝ գաղութէ գաղութ եւ գաղութներէ հայրենիք:

Հ.Մ.Ը.Մ-ի կամրջող միութիւն մը ըլլալու փաստը կու տան համա-Հ.Մ.Ը.Մ-ական անոր նախաձեռնութիւնները, որոնք կ'իրագործուին մեծ յաջողութեամբ: Շուտով կը կատարուի Հ.Մ.Ը.Մ-ի Պատգամաւորական 11-րդ Ընդհանուր Ժողովը, որ համահայկական գործունէութեան նոր հորիզոններ կը բանայ պատկառելի այս միութեան դիմաց:

97-ամեակի տարին է 2015 թուականը: Բոլոր ամեակներու նման, 97-ամեակը եւս պէտք էր ըլլար տօնական ուրախութեան տարի, բայց այդպէս չէ, որովհետեւ մեր ուրախութեան մէջ մտահոգութիւն եւ թախիծ կայ: Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքը մտահոգութեամբ կը հետեւի իր պատմական ու ճառագայթող շրջաններէն՝ Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ եւ Իրաքի երբեմնի ծաղկուն շրջաններուն ապրած դժնդակ պայմաններուն: Հ.Մ.Ը.Մ-ի բովանդակ ընտանիքը այսօր կ'ապրի Սուրիոյ եւ Իրաքի շրջաններուն դժուարութիւնները, կը զգայ անոնց հետ եւ իր անսակարկ օգնութեան ձեռքը երկարած, կը մաղթէ որ շուտով խաղաղութիւնն ու անդորրութիւնը տիրեն եւ զոյգ շրջանները վերագտնեն իրենց անցեալի փայլուն օրերը:

Մենք կը յուսանք, միաժամանակ կը ջանանք համախմբել զոյգ շրջաններէն դուրս եկած եւ աշխարհի չորս ծագերը ապաստանած հայորդիները, քաջ գիտնալով որ Միջին Արեւելեան կազմակերպ գաղութներէ եկած մեր քոյրերն ու եղբայրները նոր միջավայրերու մէջ եւս կրնան գործել եւ արդիւնք տալ՝ հայութեան եւ Հայաստանին ի խնդիր, պայմանաւ որ գանոնք համախմբող եւ գործի մղող միութիւններ ըլլան, ինչպէս է պարագան Հ.Մ.Ը.Մ-ին:



Մասնաճիւղի վարչութեան անդամներ:

Այս իմաստով, յանուն Հ.Մ.Լ.Մ-ի Կեդրոնական Վարչութեան եւ յանուն Հ.Մ.Լ.Մ-ի մեծ ընտանիքի աշխարհասփիւռ մասնաճիւղերուն, մենք կը շնորհաւորենք Միւնիխի հայութեան անկախութեան տարեդարձը եւ իբրեւ տարեդարձի նուէր կը յայտարարենք հիմնադրութիւնը Հ.Մ.Լ.Մ-ի Միւնիխի մասնաճիւղին:

Միշտ բարձրանալ եւ բարձրացնել: Այս եղած է Հ.Մ.Լ.Մ-ի նշանաբանը:

Առանց ազգային գիտակցութեան, առանց կազմակերպ ու նուիրեալ շարքերու, առանց ֆիզիքապէս ու հոգեպէս տոկուն երիտասարդութեան կարելի, չէ հօր ու բարգաւաճ Հայաստան ունենալ: Ու եթէ բախտաւոր օր մը հայութեան պանծալի դրօշը պիտի ծածանի նաեւ բռնագրաւեալ մեր հայրենիքի երկնակամարին վրայ, այդ կը պահանջէ կամք, լաւագոյնին ձգտելու ճիգ եւ յարատեւութիւն:



Միւնիխի նորաստեղծ մասնաճիւղի սկանուտներու հետ:

Այս հաստատ համոզումներով կ'ողջունենք մեր նորագոյն մասնաճիւղին ստեղծումը, խոստանալով միշտ բարձր պահել այն դրօշը, որ մեզի աւանդ ձգուեցաւ միութեան հիմնադիրներուն կողմէ:

Այն դրօշը, զոր 97 տարի բարձր բռնեցին «հսկայ նուիրման... կամաւոր բանակ»ի հաւատաւոր անդամները:

Այն դրօշը, որ այսօր կը ծածանի Երեւանի ու Արցախի վերեւ, իսկ վաղը, պայծա՛ռ ապագային, պիտի ծածանի նաեւ Վանի, Մուշի, Սասունի, Կարսի եւ Արտահանի վրայ:

Կեցցէ՛ Հ.Մ.Լ.Մ-ը:

Կեցցէ՛ Հ.Մ.Լ.Մ-ը ստեղծող Միւնիխի հայութիւնը:

Եւ կեցցէ՛ Հ.Մ.Լ.Մ-ի 97-ամեայ երթին մնայուն փարոսը հանդիսացող Ազատ, Անկախ ու Միացեալ Հայաստանը:

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby


HOTEL



PAVILLON MONCEAU
PARIS

*Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating / air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.
The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.*

PAVILLON MONCEAU



43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com

Studio VICKEN 2005 PARIS

Հ.Մ.Ը.Մ.՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԱՐԺԷՔՆԵՐՈՎ ԼԻԱՑԱԾ ՄԹՆՈՒՈՐՏԸ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՐԱԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ՏԷՆԻ ՃՈՒՊԻԼԵԱՆԻ ԽՕՍՔԸ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍԻ ՄԱՄՆԱՃԻԻՂԻ ՊԱՏՄԱԳԻՐՔԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ 24 ՅՈՒՆԻՍ 2015-ԻՆ, ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ, ԱՐԺԱՆԹԻՆ)

1 918 թուականին ծրնունդ առաւ Հ.Մ.-Ը.Մ.-ը միութիւն մը, որ ապաստան եւ գուրգուրանք տուաւ թրքական անհանդուրժողականութեան եւ սարսափին զոհ գացած հազարաւոր որբերու: Ըստ իր սկզբունքներուն, միութիւնը անմիջապէս ծառայեց իր ազգի շահերուն, առաջին հերթին մարդկային օժանդակութիւն հասցնելով որբանոցներու, ապա՝ մարմնակրթութեան եւ ըսկառուարի միջոցով այդ որբերուն հայթայթելով հայկական ինքնութեան իմաստ:



1927 թուականի Սեպտեմբեր 27-էն ի վեր Հ.Մ.-Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղը միշտ յաղթահարած է իր դիմաց ցցուած մարտահրաւէրները, Մայր Հայրենիքի եւ համայն աշխարհի հայութեան ի նըպաստ դնելով իր փորձառութիւնը եւ յատկապէս՝ իր մարդուժը: Այսպէս, ան դերակատար եղած է ըՄփիւռքի կազմութեան հանգրուանին, Հայաստանին օժանդակած է երկրաշարժի ժամանակ, անկախութեան օրերուն, երբ Հ.Մ.-Ը.Մ.-ը վերադարձաւ հայրենի հող, ու ներկայիս՝ սուրիահայ իր եղբայրներուն անոնց դժուար կացութիւնը մեղմացնելու համար:

Ժամանակի բերումով, սկառուարի եւ մարդկանի միջոցով միութիւնը ստեղծեց դաստիարակութեան իրեն յատուկ միջոցը, որպէսզի իրեն դիմող մանուկներն ու պատանիները դառնան ղեկավար եւ առաջնորդ, մեր միութեան արժէքները քարոզելու աշխարհի տարածքին, ու Հ.Մ.-Ը.Մ.ի մասնաճիւղեր ստեղծելու այն բոլոր քաղաքներուն մէջ, ուր գոյութիւն ունի հայ համայնք:

Մեր միութեան անդամներն ու ղեկավարները առաջին տասնամեակներուն կատարեցին հսկայական աշխատանք, որուն շնորհիւ անոնք համայնքի ընտանիքները ներգրաւեցին Հ.Մ.-Ը.Մ.ի դրական եւ առողջ միջոցառումներին մէջ, ըլլալով իրերայաջորդ սերունդներու անձնական եւ հանրային զարգացման մէկ մասնիկը: Առ այդ, 1979 թուականին ծնունդ առաւ Գորտոպայի մասնաճիւղը եւ, աւելի ուշ՝ 1987 թուականին, Մոթէվիտէոյի մասնաճիւղը: Այսպէս ամբողջացաւ Հարաւային Ամերիկայի շրջանին երեք մասնաճիւղերու ներկայ կառուցը:

Երբ թուրքը որոշեց հայերու Ցեղասպանութիւնը եւ սեփական հողերէն աքսորը, առիթ տուաւ որ աշխարհի տարածքին ամէնուրեք ստեղծուին հարիւրաւոր փոքր Հայաստաններ, եւ Հ.Մ.-Ը.Մ.-ը դառնայ անոնցմէ իւրաքանչիւրին հիմնական սիւներէն մէկը:

Մասնաճիւղերու զարգացման իբրեւ արդիւնք, 1989 թուականին ստեղծուեցաւ Հ.Մ.-Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութիւնը, որուն պարտականութիւնն է համարել շրջանի մասնաճիւղերուն գործունէութիւնը, առաջնորդել միութեան աշխատանքները, հսկել անոնց ուղղութեան եւ մշակել շրջանի յարաբերութիւնները Հ.Մ.-Ը.Մ.ի համաշխարհային կառույցին հետ:

Այսպէս, 1927 թուականին ծնունդ առաւ Հ.Մ.-Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղը, եւ սկսաւ տարածել այն հիմնադիր արժէքները, որոնք միութիւնը կեանքի կոչեցին 97 տարիներ առաջ, ու Մայր Հայրենիքէն հազարաւոր քիլոմետրեր հեռու գինք մղեցին աշխատանքի՝ հայկական ինքնութիւնը պահպանելու համար:

Ահա 88 տարիներ անցած են Հ.Մ.Լ.Մ-ի Պուլենոս Այրէսի մասնաճիւղի ստեղծումէն ի վեր: Այդ տարիներու ընթացքին կատարուած են բազմաթիւ նախաձեռնութիւններ: Եկած ու անցած են հազարաւոր անդամներ, հարիւրաւոր ղեկավարներ: Կատարուած են բանակումներ եւ մարզական մրցաշարքեր, արձանագրուած են յաջողութիւններ եւ ձախողութիւններ, եւ այս ամբողջ գործունէութիւնը Հ.Մ.Լ.Մ-ը դարձուցած է ընկերային, մարզական եւ սկաուտական իւրայատուկ միջավայր մը, ուր կը շնչուի հայկական ոգի: Ստեղծուած է միջնորդութիւններ, թոռներ, ծնողներ եւ մեծ հայրեր, տարբեր սերունդներու ներկայացուցիչներ, կը գործեն կողք-կողքի, կազմելով Հ.Մ.Լ.Մ-ական ընտանիքը: Նման նախաձեռնութիւններու շնորհիւ կազմուած են հարիւրաւոր ընտանիքներ, ստեղծուած են յաւիտենական բարեկամութիւններ եւ հարիւրաւոր պատմութիւններ:




Երկրորդ՝ այս հսկայ ընտանիքին իւրաքանչիւր անդամին առօրեայ եւ գիտակից աշխատանքը, որ տարիներու ընթացքին օգնեց Հ.Մ.Լ.Մ-ի յաջողութեան, ո՛չ միայն իր սկաուտական կամ մարզական յաջողութիւններուն համար, այլ որովհետեւ անոնք միշտ հետեւեցան միութեան ուղղութիւններուն:

Այս բոլորը կարելի պիտի չ'ըլլար իրագործել եթէ գոյութիւն չ'ունենար Հ.Մ.Լ.Մ-ի նման միութիւն մը, որ ժամանակի ընթացքին գոյատեւեց իր հիմնադրութեան յստակ արժէքներով ու նպատակներով:

Այս յաջողութիւնը օրէ օր աւելի շօշափելի կը դառնայ, երբ հարիւրաւոր ընտանիքներ մեզի կը վստահին իրենց զաւակները, որոնք անկասկած անոնց ամէնէն թանկագին արժէքներն են: Մեզի կը վստահին, որպէսզի անոնք գան Հ.Մ.Լ.Մ. եւ մեծնան առողջ, բարեկամութեան, համերաշխութեան, հաւասարութեան, հայկական ինքնութեան արժէքներով լիացած միջնորդութիւն մը մէջ, այսինքն՝ Հ.Մ.Լ.Մ-ական ոգիով:

Այս մէկը կարելի է կատարել երկու ձեւով: Առաջին՝ կազմակերպական, շողկապուած իր սկզբունքներուն, ժողովներուն, վարչութիւններուն, ինչպէս նաեւ ատենագրութիւններուն հանդէպ ունեցած յարգանքին, որոնք ժամանակի բերումով պիտի դառնան անցնող սերունդներուն կողմէ տարած աշխատանքի պատմութեան փաստը եւ ապագայ սերունդներուն համար ուղղութիւն: Այդ պատճառով է որ կ'ողջունենք այս գիրքին հրատարակութեան նախաձեռնութիւնը:

Հ.Մ.Լ.Մ. իրեն նման միութիւնները եւ գաղափարակից կազմակերպութիւնները չի գերազանցեր իր հնութեամբ, իր կառուցներով, ո՛չ ալ հիմնադրութեան նպատակներով, այլ՝ իր առաջադրած յստակ նպատակներով, որոնց հետեւելով, առօրեայ աշխատանքով կարելի է հետեւիլ տեւական յաջողութիւններու առաջնորդող մնայուն ճանապարհի մը:



Ի վերջոյ, Հ.Մ.Լ.Մ-ը միջավայր մըն է, ուր տեղ կը գտնեն բոլոր անոնք որոնք կը փափաքին բարձրանալ եւ բարձրացել իրենց կողքին եղողները: Միայն այդ ձեւով կարելի պիտի ըլլայ յաջողութեան ճամբուն հետեւիլ:

Որովհետեւ եթէ Հ.Մ.Լ.Մ-ը զարգանայ, մեծնայ ու աճի, նաե՛ւ կ'աճի հայութիւնը եւ անոր պետականութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՀԱՐԱՏԱՑՆՈՂ ԱՐԺԷՔԱՒՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ

(«ՄԱՐԶԻԿ»Ի ԽՄԲԱԳԻՐ ԵՂԲ. ՎԻԳԷՆ ԱԻԱԳԵԱՆԻ ԽՕՍԳԸ՝
Հ.Մ.Ը.Մ.Ի ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍԻ ՄԱՄՆԱՃԻԻՂԻ
ՊԱՏՄԱԳԻՐՔԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ,
ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ 24 ՅՈՒՆԻՍ 2015-ԻՆ, ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ, ԱՐԺԱՆԹԻՆ)

Դժուար է այս պահուն խոստովանիլ, թէ ճիշդ ի՞նչն է որ մեզ մղեց հեռուոր Լիբանանէն գալու եւ այսօրուան այս շնորհահանդէսին ներկայ գտնուելու:

Շատերը կրնան խենթութիւն նկատել մեր քայլը, ուրիշներ հաւանաբար հարց տան, թէ գիրք մը կրնա՞յ այնքան հրաշագործ ուժ ունենալ իր մէջ, որ գրասէր մը մղէ տուն-տեղ ձգելու, գործ-ընտանիք մոռնալու եւ գիրքի մը շնորհահանդէսին մասնակցելու համար հազարաւոր մղոններ կտրելու:

Հրաշքներու ժամանակը շատոնց անցած է, սակայն գաղափարական խենթութիւններու ժամանակը տակաւին կը յամենայ եւ այսօր մեզի հոս բերողը գաղափարն է, ոգին է,



պատկառելի իր վաստակով եւ իւրայատուկ նկարագրորով:

Տարբեր է Պուէնոս Այրէսի Հ.Մ.Ը.Մ.ը: Տարբեր «համ ու հոտ» ունի ան: Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումները եւ մարզախաղերը տեւական կարօտը ունին այդ «համ ու հոտ»ին: Առանց անոնց՝ անգոյն եւ անհամ կը դառնան անոնք:

Ուր չկան Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի եւ ընդհանրապէս Հարաւային Ամերիկայի մեր եռանդուն մարզիկներն ու սկաուտները՝ հոն Հ.Մ.Ը.Մ.ական խանդավառութենէն եւ գրաւչութենէն պակաս մը կայ անպայման:

Մեր տեսածն է որ կը վկայենք, մեր ապրածն է որ կը խոստովանինք:

Ֆուտբոլի խաղէ մը պարտուիլ եւ «օլէ՛-օլէ՛»ներով ֆուտբոլի դաշտը օդը հանելը միայն այս շրջանին յատուկ է:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումներու ներկայ ըլլալ եւ Խոր Վիրապի մուտքին, Արարատի վեհանիստ շուքին տակ երգում կատարելը դարձեալ այս շրջանին յատուկ է միայն:

Եւ դեռ, համա-Հ.Մ.Ը.Մ.ական խորհրդաժողովներու ներկայ ըլլալ եւ բառարանի օգնութեամբ անսխալ հայերէն խօսիլը, երբ անդին ուրիշներ իրենց գիտցած հայերէնը մէկդի դրած՝ օտար լեզուով կ'արտայայտուին, դարձեալ այս շրջանին յատուկ է միայն:

Տարբեր է Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի շրջանը: Տարբեր է Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի շրջանը եւ, հետեւաբար, ան արժանի է տարբեր գուրգուրանքի, յարգանքի եւ զոհողութեան: Այնքան մը որ, իսկապէս կ'արժէ Պէյրութէն մինչեւ Պուէնոս Այրէս գալ եւ նման մասնաճիւղի մը պատմութեան գիրքին մասին խօսիլ:

Բայց նախքան այդ՝ այլ խոստովանութիւն մը եւս:

որուն եթէ անպայման անուն մը ուզենք տալ, Հ.Մ.Ը.Մ. պիտի ըսենք անվարան, Հ.Մ.Ը.Մ.ականութիւն՝ աւելի ճիշդ:

Այո, Հ.Մ.Ը.Մ.ը եւ Հ.Մ.Ը.Մ.ականութիւնը ունին մագնիսական այնքան մեծ ուժ, որ կարենան մարդիկ քով-քովի բերել, նպատակի մը շուրջ համախմբել, սրտի խօսք փոխանցել արժանաւորի մը, որ այս պարագային Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան Պուէնոս Այրէսի մասնաճիւղն է՝ 88-ամեայ

Տարբեր է Պուէնոս Այրէսի Հ.Մ.Ը.Մ.ը: Տարբեր «համ ու հոտ» ունի ան: Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումները եւ մարզախաղերը տեւական կարօտը ունին այդ «համ ու հոտ»ին: Առանց անոնց՝ անգոյն եւ անհամ կը դառնան անոնք:

Տարիներ առաջ, երբ կը պատրաստուէինք «Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագրականներու երկրորդ հատորը հրատարակել, մեծ եղաւ մեր զարմանքը, երբ անդրադարձանք, թէ «Մարզիկ»-ի խմբագրականներու առաջին հատորը 1990-ին լոյս տեսած է Հ.Մ.Լ.Մ-ի Պոլէնոս Այրէսի հաւատաւոր անդամներ՝ եղբայրներ Յարութիւն Մառուկեանի եւ Արթուրօ Յովհաննէսեանի ջանքերով:

Մեր զարմանքը կրկնուեցաւ ասկէ վեց տարիներ առաջ, երբ այս անգամ շրջանէն հաւատաւոր ու վաստակաւոր այլ եղբայր մը՝ Հ.Մ.Լ.Մ-ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Աբրահամ Ահարոնեան ինքնաբուխ կերպով նախաձեռնեց «Մարզիկ»-ի խմբագրականներու առաջին հատորին սպաներէն թարգմանութեան եւ հրատարակութեան: Եղբ. Ահարոնեան կատարեց նաեւ երկրորդ հատորին թարգմանութիւնը, զոր հրատարակեց 2011-ին:


Այս երեւոյթը, Հ.Մ.Լ.Մ-ական խօսքի ու մտքի հանդէպ ցուցաբերուած այս շրջանին օրինակելի մօտեցումը առիթ տուաւ մեզի խորհրդածելու եւ քիչ մըն ալ պրպտելու Հ.Մ.Լ.Մ-ի Պոլէնոս Այրէսի շրջանին պատմութիւնը, գիտնալու համար թէ ճիշդ ի՞նչն է որ այս շրջանը, Հ.Մ.Լ.Մ-ի մեծ ընտանիքին 10-րդ մասնաճիւղը, դարձուցած է այսքան իւրայատուկ եւ, առանց միութեան այլ շրջանները թերագնահատելու, թող ներուրի մեզի ըսելու՝ նախանձելի:

Պատասխանը մենք գտանք եղբ. Աբրահամ Ահարոնեանի աշխատասիրութեան մէջ, 85 տարիներու փառաւոր անցեալի մը հոյակապ էջերուն մէջ, ուր ներկայացուած են յաջորդական սերունդներու ջանքն ու քրտինքը՝ հայ պատանիներու եւ երիտասարդներու մէջ նախ կերտելու մարդը, գաղափարական եւ սկզբունքային իր արժանիքներով, ապա՝ հայը, յետոյ մարզիկն ու սկաուտը:

Իսկ ինչ որ գաղափարական է եւ սկզբունքային, մնայուն է, համամարդկային է, բոլորէն գնահատելի, բոլորին սիրելի:

Այսօր կը դժուարանանք կատարելու հաշիւը այն զոհաբերութիւններուն, զորս անցնող աւելի քան ութը տասնամեակներուն, Պոլէնոս Այրէսի մասնաճիւղին ծանօթ թէ անծանօթ Հ.Մ.Լ.Մ-ականները ի գործ դրին մեր նորահաս սերունդներու դաստիարակութեան ազնիւ աշխատանքին մէջ: Արդարեւ, հաւատաւոր իւրաքանչիւր Հ.Մ.Լ.Մ-ական տուաւ ինչ որ կրնար, տուաւ իր լաւագոյնը, տուաւ իր մտքի կարողութեանէն, իր բազուկի կորովէն, իր նիւթական ապահովութենէն, ժամանակէն, հանգիստէն, երիտասարդ տարիքէն ու խոստմնալից ապագայէն, որպէսզի մեր հոգիները ջերմանան եւ հայութեան հզօրացման նիւթական թէ բարոյական հիմերը ամրանան:

Հ.Մ.Լ.Մ-ը Պոլէնոս Այրէսի մէջ չեղաւ



մարզական սովորական շարժում մը կամ սկաուտական բաժանմունք մը: Այդ գործը կատարած են ու այսօր ալ իրմէ լաւ կը կատարեն տեղական միութիւնները: Հ.Մ.Լ.Մ-ը ուրիշներէն զանազանողը եղաւ իր կոչումը, բարոյական արժէքներով հարստացած իր մթնոլորտը, ուր նիւթին կողքին կը մշակուի հայ մարդուն ոգին, մարմնին կողքին՝ հոգին:

Հ.Մ.Լ.Մ-ը յատկանշողը եղաւ ազգային-միութենական առողջ դաստիարակութիւնը, որ տասնամեակներ շարունակ Հարաւային Ամերիկայի այս անձայրածիր ափերուն հասցուց հաւաքական կեանքի ծառայութեան պատրաստ, իրենց շրջանակին մէջ դեր եւ դիրքորոշում ունեցող, իսկ գաղութին մէջ դրոշմ ու պատկանելիութիւն ունեցող տղաք ու աղջիկներ:

Կատարուեցաւ հսկայական գործ: Բազմաթիւ երախտաւորներ հասակ առին ու գործեցին Ամերիկեան ցամաքամասի Հ.Մ.Լ.Մ-ի առաջին մասնաճիւղին յարկին տակ: Սերունդներ զինուորագրուեցան անոր դրօշին եւ հազարաւորներ լծուեցան մարդակերտումի եւ հայակերտումի նուիրական գործին. նաւասարդեան խաղեր, միջ-մասնաճիւղային բանակումներ, Հ.Մ.Լ.Մ-ի հիմնադրութեան, Ապրիլ 24-ի թէ Մայիս 28-ի ոգեկոչումներ, շինարարական թէ հրատարակչական իրագործումներ երեւցող բաժիններն են միայն մասնաճիւղին կատարած բազմաբնոյթ աշխատանքներուն:

Հապա՞ «սեւ» աշխատանքի այն մեծ ու մաշեցնող բաժինը, որուն մասին առհասարակ չենք խօսիր. ժողովական սպառիչ կեանք, նիւթականի անվերջանալի ու մնայուն տազնապներ, մարզական թէ սկաուտական խումբեր պահելու ամէնօրեայ պայքար, համահայկական թէ համա-Հ.Մ.Լ.Մ-ական նախաձեռնութիւններու պատրաստութիւններ...: Այս բոլորը առանձին պատմութիւն են, որոնք հայ մարդու տուրուութեան ցուցանիշները ըլլալու կողքին,

Մարդ որքան ծանօթ ըլլայ իր նախորդներու յաջողութիւններուն, որքան շատ բաժնեկցի անոնց դժուարութիւններն ու իրագործումները, երազներն ու յոյսերը, այնքան հարազատ կը զգայ իր պատկանած հաւաքականութեան:

Հ.Մ.Ը.Մ.ական մարդու անսասան հաւատքին ուժը կը ներկայացնեն:

Պէտք է գրուի այս բոլորին մասին, որպէսզի նորերը ճանչնան Հ.Մ.Ը.Մ.ի անցեալը, գիտնան թէ ի՞նչպէս անցեալէն ստեղծուեցաւ ներկան, հաւատարիմ մնան միութեան նպատակին, գործին եւ յաջողութեան ու, վերջապէս, հասկնան հայ կեանքը եւ Հ.Մ.Ը.Մ.ի տեղը այդ կեանքին մէջ, իբրեւ համաժողովրդային կազմակերպութիւն, որուն հիմնադրութեան պայմանները եւ հեռաւոր նպատակները կը նոյնանան մեր ժողովուրդի անկատար տենչերուն եւ ազգային տեսլականներուն հետ:

Մեր անմահ երգիծաբանը՝ Յակոբ Պարոնեան իրեն յատուկ սրամտութեամբ մը պիտի ըսէր. «Ետեւդ նայէ, որ առջեւդ տեսնես»: Այն հաւաքականութիւնները, որոնք իրենց ետին նայիլ չեն գիտեր, ընդունակ չեն անցեալի դասերէն օգտուելու, կը կորսնցնեն իրենց առաքելութիւնն ու կոչումը, կ'իյնան խարխափումներու եւ փորձութիւններու մէջ:

Կը հաւատանք, որ պատմութիւնը տեւական կրկնութիւն է: Կրնան որոշ պայմաններ փոխուիլ, կարգ մը մանրամասնութիւններ աւելնալ կամ պակսիլ, սակայն հիմնական մարտահրաւէրները կը մնան նոյնը: Պատմութիւնը լաւ ճանչնալ կը նշանակէ վերակառուցել պատկերը անցեալին եւ այդ պատկերին մէջ տեսնել ցոլքը գալիքին եւ առաջնորդող սկզբունքները ներկային:

Մարդ որքան ծանօթ ըլլայ իր նախորդներու յաջողութիւններուն, որքան շատ բաժնեկցի անոնց դժուարութիւններն ու իրագործումները, երազներն ու յոյսերը, այնքան հարազատ կը զգայ իր պատկանած հաւաքականութեան:

Ի վերջոյ, պատմութիւնը նաեւ ներշնչումի եւ դաստիարակութեան աղբիւր է: Եւ Հ.Մ.Ը.Մ.ի նման միութիւններ, որոնք յաճախ ստիպուած են նիւթական իրենց յենարաններու պակասն ալ լրացնել բարոյական արժէքներով, կարիքը ունին

Պատմութիւնը նաեւ ներշնչումի եւ դաստիարակութեան աղբիւր է: Եւ Հ.Մ.Ը.Մ.ի նման միութիւններ, որոնք յաճախ ստիպուած են նիւթական իրենց յենարաններու պակասն ալ լրացնել բարոյական արժէքներով, կարիքը ունին ներշնչումի մնայուն աղբիւրներու: Իսկ ինչո՞ւ այդ աղբիւրները չփնտռել մեր պատմութեան մէջ:

ներշնչումի մնայուն աղբիւրներու: Իսկ ինչո՞ւ այդ աղբիւրները չփնտռել մեր պատմութեան մէջ: Թաղէոս Մեծատուրեանի մը նախաձեռնութեան ոգին, Կարօ Շահինեանի մը խանդավառ մարգասիրութիւնը, Մարթա Տիարպէքիրեանի մը իշխանական առատաձեռնութիւնը, Կարպիս Տէր Մեսրոպեանի մը սկառուտական ջանասիրութիւնը, Շաւարշ Քհնյ. Մեհրապեանի մը գաղափարապաշտութիւնը եւ դեռ, Ճորճ Տաղլեաններու, Պարգեւ Պարսամեաններու անսահման նուիրաբերումի ոգին ներշնչումի եւ

դաստիարակութեան հարուստ աղբիւր կը հանդիսանան այսօրուան նորերուն եւ հպարտութեամբ կը լեցնեն իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ականի սիրտն ու հոգին:

Պատմութեան իւրաքանչիւր հանգրուան ունի իր մեծ դէմքերը եւ յիշատակելի նուաճումները: Մենք կը մեծնանք ու կը զօրանանք, երբ լոյսին կը բերենք անցեալի մեր բոլոր արժէքները եւ ներշնչումի օրինակներու կը վերածենք գանոնք:

Շնորհակալ եւ մեծարժէք ճիշդ այս գործն է, գոր կատարած է եղբ. Աբրահամ Ահարոնեան «Պատմութիւն Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղին 1927-2012» գիրքին հրատարակութեամբ: Կոթողական գործ մը, որուն յառաջաբանը գրած ժամանակ, իրաւամբ հաստատեցինք.

Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը հարստացնող արժէքաւոր հրատարակութիւն մըն է եղբ. Աբրահամ Ահարոնեանի «Պատմութիւն Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղին 1927-2012» գիրքը, որ ընթերցողին կը ներկայանայ բաւական տքնաջան ու համբերատար աշխատանքէ ետք: Հեղինակը՝ բազմալաստակ Հ.Մ.Ը.Մ.ական Աբրահամ Ահարոնեան Պուէնոս Այրէսի մասնաճիւղին հարազատ գաւակն է եւ լաւագոյն ներկայացուցիչը ներկայացնելու մասնաճիւղին տասնամեակներու պատմութիւնը, որուն կարեւոր մէկ մասին մասնակիցը եղած է ան, իբրեւ հաւատաւոր Հ.Մ.Ը.Մ.ական, վարչական անդամ 1980-էն սկսեալ, Հարաւային Ամերիկայի անդրանիկ Շրջանային Վարչութեան ատենապետ, ապա երեք շրջան անդամ Շրջանային Վարչութեան՝ երկուքը ատենապետի պաշտօնով, իսկ 1999-2007՝ երկու շրջան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ: Եղբ. Ահարոնեան քաջածանօթ է մասնաճիւղին ներքին «խոհանոց»ին, գործունէութեան տարբեր մարզերուն եւ ժամանակի ընթացքին անոնց ապրած վերիվայրումներուն:

Իր երկարամեայ փորձառութեան եւ ծանօթութիւններուն կողքին, եղբ. Աբրահամ Ահարոնեան հատորին պատրաստութեան համար իր տրամադրութեան տակ ունեցած է մասնաճիւղին բազմահազար էջերու հասնող հարուստ արխիւները (տեղեկագիրներ, ատենագրութիւններ, նամակներ, այլեւայլ արձանագրութիւններ), որոնց



Պուէնոս Այրէսի մասնաճիւղի Ռամոս Մեխիայի ակումբին մէջ հանդիպում՝ մասնաճիւղին սկառուտական պատասխանատու կազմին հետ:

խղճամիտ ուսումնասիրութեամբ ան լոյսին բերած է Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի շրջանին հայատրոփ սիրտը հանդիսացող Պոլէնոս Այրէսի մասնաճիւղին 85 տարիներու պատմութիւնը՝ 1927-2012, Հ.Մ.Ը.Մ.ի ստեղծման եւ կազմաւորման առաջին տարիներուն յատկացուած ընդարձակ բաժինով մը, որ կը կազմէ հատորին առաջին մասը:

Հատորը կ'անդրադառնայ մասնաճիւղին սկստակական, մարզական եւ վարչական գործունէութեան տարբեր երեսներուն: Ան կը ներկայացնէ նաեւ մասնաճիւղին ներդրումը Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի թէ համագաղութային գանազան նախաձեռնութիւններուն: Այլ խօսքով, հատորը ապրող յուշամատեանը կը կազմէ Արժանթինի հայաշատ մեր գաղութին մէջ իր հիմնական տեղն ու դերը ունեցող Հ.Մ.Ը.Մ.ի Պոլէնոս Այրէսի մասնաճիւղին, որուն մեծածաւալ աշխատանքները եղբ. Աբրահամ Ահարոնեանի գրիչով ներկայացուած են ազգային հպարտութեան, հաւաքական իրագործումներու եւ հայկերտ յաղթանակներու պատուաբեր էջերով: Յաղթանակներ, որոնց խտացումը կարելի է կատարել մէկ բառով՝ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒՄ: Արդարեւ, հայ մատղաշ սերունդը դաստիարակելու եւ ազգին գոյատեւման երաշխիքները տալու մնայուն մտահոգութիւնն է, որ տողատակի կ'ընթերցուի հատորի 600 էջերէն իւրաքանչիւրին մէջ, այդ ըլլայ մարզական կեանքի ներկայացում, սկստակական բանակումի բնութագրում թէ անդամական ընդհանուր ժողովի գնահատում:

Եղբ. Աբրահամ Ահարոնեան վստահելի պատմագիրն է Հ.Մ.Ը.Մ.ի Պոլէնոս Այրէսի մասնաճիւղին, որովհետեւ ան ապրած է իր ներկայացուցած դէպքերուն եւ դէմքերուն կարեւոր մէկ մասը, մօտէն հետեւած է իրեն սիրելի մասնաճիւղին աշխատանքներուն եւ իր անսակարկ մասնակցութիւնը բերած է մասնաճիւղին երազները իրականութիւն դարձնելու միութենական յանձնառութեան:

Հ.Մ.Ը.Մ.ական սկզբունքներու եւ արժէքներու մարդն է եղբ. Աբրահամ Ահարոնեան: Հ.Մ.Ը.Մ.ական տազնապով, մաքառումով եւ նուիրաբերումով ապրուած անոր կեանքը այդ կը վկայէ: Այդ տազնապին մէկ արտայայտութիւնն ալ այս աշխատասիրութիւնն է, որ կը ջանայ հաւաքական մեր յիշողութեան յանձնել Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարական-բարոյական արժէքներուն ի խնդիր ապրած ու գործած հոյլ մը նուիրեալներու պատմութիւնը՝ Պոլէնոս Այրէսի մասնաճիւղի դրօշին տակ:

Երազ մըն է, որ կ'իրականացնէ եղբ. Աբրահամ Ահարոնեան, իսկ «Երազ մը իրականացնելու համար պէտք է պայքարիլ, պէտք է զոհուիլ եւ շատ գործել», կ'ըսէ արժանթինցի ֆութպոլի աստղ Լիոնէլ Մեսսի, որուն ծննդեան 28-րդ տարեդարձն է այսօր: Թէ որքա՞ն պայքարած է, զոհուած է եւ ժամանակ տրամադրած է եղբ. Աբրահամ այս գործին յաջողու-

թեան համար, այս գեղեցիկ երազին իրականացման համար, ինք եւ միայն իր տիկինը՝ քոյր Եփրուհին կրնան վկայել, իսկ մենք կրնանք հաստատել, որ այս հատորով ան իր լուծման կը բերէ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան հարստացման գանձանակին: Ան առանձինն կ'իրագործէ հաւաքական աշխատանքի կարօտ վիթխարի գործ մը, առանց անտեսելու գործին կապուած նուազագոյն մանրամասնութիւնը: Ան հատորը կը ճոխացնէ պատմական անտիպ լուսանկարներով, վարչական կազմերը կը նշէ ամենայն բժախնդրութեամբ, ոեւէ մէկը չմոռնալու կամ չանտեսելու մօտեցումով: Մասնաճիւղին ամբողջական պատմութիւնը ներկայացնելու իր ճիգին մէջ, եղբ. Ահարոնեան կը դիմէ արխիւներու, յաճախ՝ քանի մը աղբիւրի միաժամանակ, տեղեկութիւն մը աւելի ունենալու եւ անստոյգ տուեալ մը ստուգելու համար:

«Պատմութիւն Հ.Մ.Ը.Մ.ի Պոլէնոս Այրէսի մասնաճիւղին 1927-2012» հատորը Պոլէնոս Այրէսի հայ գաղութի գոյատեւման հարազատ վկայութիւնն է, որուն մէջ Հ.Մ.Ը.Մ.ական մարդը կը գտնէ իրեն հպարտութիւն առթող շատ բան, իսկ հայ մարդը զայն կարգալով կրնայ միայն հիանալ ու խոնարհիլ վաստակին առջեւ այն մեծ մասնաճիւղին, որ գիտէ 85 տարիներ նման պատմութիւն կերտել եւ այդ պատմութիւնը նման շքեղ հատորի վերածող եղբ. Աբրահամ Ահարոնեանի նման միութենականներ ունենալ:

Յարգելինէր,

Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին առիթով, աշխարհի չորս ծագերուն կանգնեցան մեր մէկուկէս միլիոն նահատակներուն յիշատակը յաւերժացնող խաչքարեր եւ յուշարձաններ: Յիշուեցան նահատակները, սակայն մոռցուեցան կամ առնուազն քիչ յիշուեցան կենդանի նահատակները, անոնք որոնք Յեղասպանութեան արհաւիրքէն փրկուելով՝ իրենց բովանդակ կեանքը դարձուցին ամէնօրեայ նահատակութիւն, մարդկօրէն ապրելու եւ հայօրէն գոյատեւելու իրենց արդար իրաւունքին ի խնդիր:

Այդ կենդանի նահատակներու շարքին են Հ.Մ.Ը.Մ.ի Պոլէնոս Այրէսի մասնաճիւղին երախտաշատ անդամները, որոնց նուիրուած յարգանքի եւ մեծարանքի բարոյական յուշարձան մը պէտք է նկատել եղբ. Աբրահամ Ահարոնեանի «85 տարի ծառայելով հայ ժողովուրդին եւ ազգին» գիրքը:

Յարգա՛նք հաւաքական մեր կեանքին իրենց ներդրումը բերած Հ.Մ.Ը.Մ.ական բոլոր քոյրերուն եւ եղբայրներուն, այս աշխարհէն անդարձ մեկնածներ ըլլան անոնք թէ մազ ու մօրուք ճերմկցուցած վաստակաւորներ:

Յարգա՛նք մեր կեանքին ձեւ ու դիմագիծ տուած Հ.Մ.Ը.Մ.ական բոլոր պատասխանատուներուն, անոնց թեւ ու թիկունք կանգնած բարերարներուն, նուիրատուներուն եւ համա-

Յ.Մ.Ը.Մ.ը Պոլէնոս Այրէսի մէջ չեղաւ մարզական սովորական շարժում մը կամ սկստակական բաժանմունք մը: Այդ գործը կատարած են ու այսօր ալ իրմէլաւ կը կատարեն տեղական միութիւնները: Յ.Մ.Ը.Մ.ը ուրիշներէն զանազանողը եղաւ իր կոչումը, բարոյական արժէքներով հարստացած իր մթնոլորտը, ուր նիւթին կողքին կը մըշակուի հայ մարդուն ոգին, մարմնին կողքին՝ հոգին:

կիր մեր լայն զանգուածին, առանց որոնց անկարելի պիտի ըլլար այսքան յաջողութիւն արձանագրել:

Յարգանք ու պատիւ հիները արժեւորել գիտցող նորերուն, Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան եւ շրջանի մասնաճիւղերու վարչական անդամ-անդամուհիներուն, որոնք այսօր պատնէշի վրայ են ազգային պատասխանատուութեան եւ միութենական յանձնառութեան բարձր գիտակցութեամբ:

Յատուկ յարգանք այսօրուան շնորհահանդէսին առիթը ստեղծած եղբայր Աբրահամ Ահարոնեանի գնահատելի աշխատանքին եւ այդ աշխատանքին արդիւնաւորումը կարելի դարձուցած այն քոյրերուն եւ եղբայրներուն, որոնց նիւթական օժանդակութեամբ կարելի դարձաւ «Պատմութիւն Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղին 1927-2012» գիրքին լոյս ընծայումը եւ այս շնորհահանդէսին կազմակերպումը: Առանց մոռնալու ժան եւ Գարմէն Աբգարեան Հիմնարկու-



- Պուէնոս Այրէսի մասնաճիւղի նախկին եւ ներկայ պատասխանատու եղբայրներու հետ:

թիւնը, որուն բարերար ներդրումը մեծ եղաւ այս շնորհահանդէսին իրականացման մէջ:


Շնորհակալութիւն Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ յատկապէս Հարաւային Ամերիկայի անոր ներկայացուցիչ եղբ. Գարլոս Սէֆէրեանին, որոնք կարելի դարձուցին մեր այցելութիւնը շրջան եւ ջերմ հիւրընկալութեան արժանացուցին մեզ:

Վերջապէս, շնորհակալութիւն ձեզի՛ սիրելի ներկաներ, որ ձեր ներկայու-

թեամբ վկաները կը հանդիսանաք Պուէնոս Այրէսի մասնաճիւղին նորագոյն յաջողութեան եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական իրագործումին:

Հ.Մ.Ը.Մ.ը հօր է ձեզմով, հայութիւնն ալ՝ Հ.Մ.Ը.Մ.ով: Վարձքը կատար բոլորին:

Անսպառ ուժ եւ կորով սիրելի եղբ. Աբրահամին, որպէսզի մեզի արժանացնէ մասնաճիւղին 100-ամեակի հատորին շնորհահանդէսին:



Elegance Plus

Shoes, Bags,
Fashion Accessories
& Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.
Beirut - Lebanon

Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556

Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812

E-mail: hratch@goldenmountains.com

hratchboy@hotmail.com

H. N. BOYADJIAN & CO.



ՄԵՐ ՈՒԽՏԸ, ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԻՍՏՐԱԼԻՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱԴՊԻՐ ԵՂԲ. ԲԱՑՅԻ ՊՕՇՆԱԳԵԱՆԻ ՊԱՏԳԱՄԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ՍԻՏՆԻԻ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՏՈՂԱՆՑՔԻՆ)

Վերածնած հայուժիւնը, այսօր, աշխարհի չորս ծագե-
րուն, միասնական ոգիով եւ ամուր վճռակամու-
թեամբ աշխարհին անգամ մը եւս կը յիշեցնէ, թէ ինք չէ՛ մոռ-
ցած իր նահատակները, եւ թէ հաւատարիմ կը մնայ անոնց
սուրբ կտակին:

Արդարեւ, սեւ օր մը եղաւ Ապրիլի այս կանաչ օրը մեր ժա-
մանակակից պատմութեան մէջ: Բայց սեւ օր չմնաց ան: Դար-
ձաւ կեանքի ու վերածաղկումի օր: 1915-ի ահաւոր Յեղասպա-
նութեան յաջորդեցին վերակազմակերպումի ու վերածնուն-
դի տարիներ: Վկա՛յ պայծառակերպուած հայ կեանքը: Վկա՛յ
ջարդով ու աքսորով իրմէ խլուած, ի գին ամէն գոհողութեան
իր իրաւունքներուն վերատիրանալու պահանջատէր հայու-
թեան հաւաքական ուխտը եւ ամրակուռ կամքը:

Հարիւր տարիներ մեր նահատակները յիշեցինք ու լացինք:
Հարիւր տարիներ աշխարհէն արդարութիւն աղերսեցինք:

Բայց մինչեւ ե՞րբ...: Մինչեւ ե՞րբ մարդիկ պիտի ուրանան
քսաներորդ դարու առաջին Յեղասպանութիւնը: Մինչեւ ե՞րբ
պետութիւններ պիտի ոտնակոխեն հազարամեակներու
պատմութիւն եւ մշակոյթ ունեցած ստեղծագործ ժողովուր-
դի մը մարդկային իրաւունքները:

Ո՛չ, սիրելիներ, չենք կրնար այլեւս մենք մեզ պատմու-
թեան ճակատագրին յանձնել: Չենք կրնար սպասել դէպքե-
րու նոր դասաւորումին եւ նոր պայմաններու ստեղծումին:
Չենք կրնար լուռ մնալ աշխարհի անտարբերութեան դիմաց:

Յանուն Հ.Մ.Ը.Մ.Ի Աւստրալիոյ կառույցին կը յայտարար-
ենք՝ «Պահանջատէր հայ երիտասարդութիւնը իր կեանքի
ուղին ընտրած է. ՊԱՅՔԱՐ»:

Պայքա՛ր մեր կեանքի բոլոր կալուածներէն ներս, բոլոր
մակարդակներու վրայ, արտաքին աշխարհի բոլոր ճակատ-
ներու վրայ:

Պայքա՛ր ի խնդիր մեր գոյութեան ամրապնդման, մեր

ինքնութեան անաղարտ պահպանման:

Պայքա՛ր ի խնդիր մեր բռնաբարուած իրաւունքներու վե-
րատիրացման:

Պայքա՛ր յանուն արդարութեան՝ համահայկական տարո-
ղութեամբ ու ամբողջական յանձնառութեամբ:

Ո՛չ մէկ հայ իրաւունք ունի հեռու մնալու այս սուրբ պայ-
քարէն:

Պիտի բախենք մարդոց քարացած սրտերուն դռները, պի-
տի պատուենք մարդոց աչքերուն թանձրացած վարագոյրնե-
րը, մինչեւ որ լսեն մեզ, տեսնեն ճշմարտութիւնը ու զգան
մեր դառնութիւնը:

Մենք գուժ չենք հայցեր մարդոցմէ, այլ՝ արդարութիւն
կը պահանջենք: Արդարութիւնը մեր արեան կանչն է, մեր
հոգիին գերագոյն ծարաւը, մեր գոյութեան իմաստը:

Ու այս պայքարը պիտի շարունակուի եւ պիտի ընդար-
ձակուի մինչեւ որ «Արարատը մերը լինի ու Արաքսը Հայաս-
տան հոսի» (Յ. Շիրազ): Այս պայքարը պիտի շարունակուի եւ
պիտի զօրանայ մինչեւ որ ամբողջական հայութիւնը տէրը
դառնայ իր ամբողջական իրաւունքներուն:

Հայոց Յեղասպանութեան 100-ամեակը մեր անտեղիտալի
պայքարին նոր աւիշ ներարկելու օրն է: Հայոց Յեղասպանու-
թեան 100-ամեակը մեր հաւաքական հաւատքն ու կամքը հա-
ւաքաբար դարբնելու օրն է: Ո՛չ ոք մեզ կրնայ հեռու պահել
մեր նուիրական պահանջներէն: Ո՛չ մէկ ուժ կրնայ լուռութեան
մատնել մեր մէկ ու կէս միլիոն նահատակներու արիւնով
թրծուած մեր աշխարհատարած պոռթկումը:

Եթէ մենք լռենք՝ մեր անթաղ մեռելներու ոսկորները պի-
տի աղաղակեն:

Հետեւաբար, կը մնանք պատնէշին վրայ՝ միակամ ու
վճռակամ:

Ահա՛ մեր ուխտը: Ահա՛ մեր առաքելութիւնը:

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ (Բ. ՇՐՋԱՆ, 1931-1940)

Ներսես Արք. Բախտիկեան (1911-1989)
ԱՆՏԻՊ, ԺԲ. ՄԱՍ

Հալէպի մասնաճիւղին վարչական հերթական նիստին, 3 Նոյեմբեր 1933, օրակարգի խնդիրներու շարքին կը կարդանք:

«Մարզիչ Լեւոն Աբգարեանի հետաքրքրութեան արդիւնք, կը տեղեկանանք որ հայ իգական սեռին մէջ ցանկութիւն կայ նետուելու մարզական կեանքի: Պաշտօն տրուեցաւ մարզիչին, որ 4-5 անձերու հետ խորհրդակցաբար մղում տրուի գործին»:

Այս որոշումով Հ.Մ.Ը.Մ-ի կեանքը, Սուրբիոյ եւ Լիբանանի մէջ, կը մտնէր նոր փուլի մէջ: Մարզական ծաւալուն կազմակերպութիւն մը, որպիսին էր Հ.Մ.Ը.Մ-ը, իր կատարած ազգանուէր դերը անկասկած որ պիտի չսահմանափակէր լոկարական սեռին շրջանակէն ներս: Մեր ազգային ընդհանուր վերելքին համար աւելի քան անհրաժեշտ էր հայ իգական սեռի ֆիզիքական դաստիարակման կենսական հարցը՝ միջավայրի պայմաններուն թոյլատու չափով: Հալէպի հայ կինը խիզախ քայլ մը կ'առնէր իրեն ծանօթ այն միջավայրին մէջ, որուն ան ենթակայ էր:

Պէյրուսի անմիջական կից, Պուրճ Համուտի մէջ, Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղ մը կազմելու երկրորդ առաջարկին, Շրջանային Վարչութեան ղեմնորդներուն փափաքին ղրական

պատասխան տալով հանդերձ, կը թելադրէ անոնց որ «առժամայէս մաս կազմեն էշրէֆիէի եւ Հայաչէնի թաղերն ալ, սակայն, այդ շրջաններու սկաուտական կորիզները առժամայէս պիտի կապուին Պէյրուսի մասնաճիւղի սկաուտական խմբակին» (Ատենագրութիւն, 6 Յուլիս. 1933):

Պէյրուսի մէջ գոյութիւն ունեցող Չափահաս Որբերու Միութեան ֆուտպոլի խումբին խաղացողները փափաք կը յայտնեն միանալու Հ.Մ.Ը.Մ-ին: Այս խնդրին լուծման համար Շրջանային Վարչութիւնը հարկ եղած կարգադրութեան կը ձեռնարկէ:

19 Նոյեմբեր 1933-ը, Հ.Մ.Ը.Մ-ի Լաթաքիոյ մասնաճիւղին կեանքին մէջ «բացառիկ օր է»: Լաթաքիոյ մէջ, Միսաք Ալապոզանեանի ջանքերով իրարու քով կը բերուին պատանիներ ու կը կազմուին Հ.Մ.Ը.Մ-ի Լաթաքիոյ սկաուտական խումբերը: 19 Նոյեմբերին կը կատարուի 22 սկաուտներու երդման արարողութիւն: Այս առթիւ Շրջանային Վարչութեան կողմէ մասնաւոր առաքելութեամբ ներկայ կ'ըլլայ Լեւոն Աբգարեան:

«Այս փառաւոր հանդէսին կը նախագահէ Խաղ Սրբազան ու կը քարոզէ, կը խօսի նաեւ Աբգարեան՝ կոչ ուղղելով ժողովուրդին որ «անվերապահօրէն բոլորուի Հ.Մ.Ը.Մ-ի շուրջ»: Լաթաքիոյ մէջ, նորակազմ սկաուտներու խմբապետը, որ ներկայ էր, իր կարգին կը խօսի հայ եւ արաբ եղբայրակցութեան շուրջ: Կէսօրէ ետք, հայ սկաուտներ կը հրաւիրուին արաբներու կողմէ, ուր տեղի կ'ունենան բարեկամական խաղեր, որոնցմէ ետք, Լաթաքիոյ մէջ առաջին անգամ ըլլալով կը կատարուի խառն խումբերով սկաուտական տողանցք («Ազդակ», թիւ 1017):

Լաթաքիոյ մասնաճիւղին համար փառաւոր օր մը կը հանդիսանայ նաեւ 10 Դեկտեմբեր 1933 թուականը: Այդ օր Լաթաքիա կ'այցելէ Հալէպի մասնաճիւղին Ա. խումբը: Ասիկա առաջին անգամն է որ Լաթաքիա իր մէջ կ'ընդունի այսքան զօրաւոր խումբ մը («Ազդակ», թիւ 1431):

Հալէպ, իգական սեռի ֆիզիքական դաստիարակութեան հարցը հիմնական կերպով տանելու մտադրութեամբ, 6 Դեկտեմբեր 1933-ին կը կատարէ խորհրդակցական բացառիկ ժողով, որուն ներկայ կ'ըլլան վարչութեան կողմէ՝ ատենապետ Միսաք Պրժեան եւ սկաուտական ընդհանուր խմբապետ Լեւոն Աբգարեան:



Խորհրդակցական ժողովին հրաւիր-
ւած տիկիներն են՝ Սիրվարդ Գասապեան,
Շաքէ Գալենտէր, Հերմինէ Աբգարեան,
Աղաւնի Պէքէրեան, Սաթենիկ Տասնա-
պետեան, օրիորդներ Անահիտ Շահին, Մա-
րի Լուիզ Յովակիմեան, Անի Թիւսիւզեան,
Երանիկ Ապաճեան: Ժողովէն կը բացակա-
յին տիկիներ Պէքէրեան եւ Տասնապետ-
եան:

Այս տիկիներով ու օրիորդներով
կը կազմուի առաջին վարչութիւնը կա-
նանց բաժնի ու կը սկսի անդամուհիներու
արձանագրութիւնը:

1934 տարեշրջանը Հ.Մ.Ը.Մ-ի համար
կը սկսի գեղեցիկ յաղթանակով մը, որ կը
տանի Դամասկոսի խումբը, Պէյրութի
մէջ, Ինթերնասիոնալի դէմ, 6 Յունուա-
րին: Իսկ յաջորդ օր, Լիբանանի նորընտիր
նախագահ Հապիպ Փաշա Սաատ Պէյրութի
սկառուտներու կարգին կ'ընդունի Հ.Մ.Ը.Մ-ի սկառուտները:

«7 Յունուարին, ժամը 11.40-ին, 50 սկառուտներ կազմ ու
պատրաստ կը սպասեն հրահանգի, մեկնելու համար լիբա-
նանեան սկառուտներու ակումբը, ուր միանալով անոնց պիտի
երթային շնորհաւորելու նորընտիր նախագահ Հապիպ Փաշա
Սաատը:

«Սկառուտապետ Հաճեանի հրամանով, խումբը կը շարժի
իր առջեւ իբր առաջնորդ ունենալով հայկական Եռագոյնը ու
խումբին դրօշը: Յիսուն դեռահաս պատանիներ, գինուորա-
կան կարգապահութեամբ, խորոխտ ու ժպտադէմ կը յառա-
ջանան Պուրճի հրապարակէն:

«Քիչ ետք, լիբանանեան սկառուտական ակումբն են, ուր
փոխադարձ բարեկներէ ետք, երկու խումբերը միացած՝
կ'ուղղուին նախագահին պալատը, հայկական ու լիբանան-
եան դրօշներով:

«Թմբուկներն ու փողերը օդը կը թնդացնեն: Հայ-արաբ
այս գեղեցիկ եղբայրակցութիւնը պալատին առջեւ հաւաք-
ւած բազմութեան կողմէ ուրախութեամբ կ'ողջունուի ատրը-
ճանակի հարուածներով:

«Մեծ պատիւներով կ'առաջնորդուին դահլիճ... նախա-
գահը սրահ կը մտնէ ու հայկական եւ լիբանանեան դրօշակ-
ներուն առջեւ պատուի կը կանգնի: Հայ սկառուտներուն փո-
ղահարը կը նուագէ լիբանանեան ու Ֆրանսական քայլերգնե-
րը: Նախագահին փափաքին վրայ կը նուագուի նաեւ «Մեր
Հայրենիք»ը:

Հապիպ Փաշա Սաատ խորապէս ազդուած այս բոլորէն,
իր խօսքը հայ սկառուտներուն ուղղելով կ'ըսէ.

«Նախ եւ առաջ իմ շնորհակալութիւններս կը յայտնեմ հայ
ժողովուրդին, որ իր փոքր ներկայացուցիչներով եկաւ պատ-
ւելու զիս, կը խոստանամ ամէն կերպով օգտակար հանդիսա-
նալ ձեր սկառուտական կազմակերպութեան, ըրէ՛ք ինչ որ
պէտք է ձեր միութիւնը առաջ տանելու համար, ես իսկապէս
ազդուած եմ լիբանանցի եւ հայ սկառուտներու եղբայրակցու-
թենէն, որ իրենց դրօշները պարզած՝ կողք-կողքի եկած են



Հ.Մ.Ը.Մ. Լաթաքիա

զիս շնորհաւորելու, կը մաղթեմ որ այս եղբայրակցութիւնը
յարատեւ ըլլայ եւ միշտ իրարու նեցուկ դառնաք»:

Հ.Մ.Ը.Մ-ի սկառուտ խմբապետին պատասխանէն ետք, նա-
խագահին խօսքերուն կը նուագեն երեք ազգերու քայլերգնե-
րը, ապա սկառուտները կ'ուղղուին Հ.Մ.Ը.Մ-ի ակումբը, ուր
հայ եւ արաբ սկառուտները կը ստեղծեն «եղբայրական ջերմ
միջնորդութիւն մը... կ'ուխտեն սերտ յարաբերութիւն պահել իրա-
րու հետ եւ յաճախ միասին արշաւներ կազմակերպել» («Ազ-
դակ», 12 Յունուար 1934):

Ինթերնասիոնալը, Դամասկոսի խումբէն պարտուելէ
ետք, առանց երկար ժամանակ կորսնցնելու փոխ վրէժի հրա-
ւէր կը կարդայ: Իր հանդիպումը նախքան Դամասկոսին հետ,
մրցում մը կ'ունենայ Ռընեսանսին հետ եւ այս մտածել տը-
ւած էր ձեռք բերուած արդիւնքէն դատելով, որ Հ.Մ.Ը.Մ.
Դամասկոս կարելի բան չէր որ չափուէր Ինթերնասիոնալին
հետ: Հակառակ տիրող ընդհանուր կարծիքին, որոշուած խա-
ղը կը կազմակերպուի:

«Շաբաթ օրուան գարնանային օդի մը փոխարէն ամպոտ
կիրակին անտրամադիր վիճակ մը ստեղծած էր խաղացողնե-
րուն եւ մարզիկներուն ստուար շարքերէն ներս, բայց քանի
որ խաղը պայմանագրուած էր, ամէն գնով պէտք էր խաղցը-
ւէր: Հակառակ խիստ օդին 1500-ի բազմութիւն մը կը հաւաք-
ւի մարզադաշտ:

Մրցումը սկսելուն «... Առաջին վայրկեանին իսկ միջնո-
լորտը կ'ելեկտրականանայ. Ինթերնասիոնալը համոզուած
էր դիմացինին ուժին նուագութեանը, ուստի կը փորձէ առա-
ջին առիթով ու հաւաքական յարձակողականով շփոթի մատ-
նել հակառակորդը... Յետսպասներուն կորովի պաշտպա-
նութեան ու բերդապահին ճարպիկ խաղարկութեան ի տես:
... Տեղատարափ անձրեւին տակ կը շարունակուի... ներկա-
ները մեծամասնութեամբ հայ երիտասարդներէ բաղկացած,
կը կանչեն կոլ կ'ուզենք, առաջինը կը նշանակուի ու յաջոր-
դաբար երեք կէտերով յաղթանակը կը տարուի. դիմացինը ոչ
մէկ կէտ կը չահի» («Ազդակ», 13 Յունուար 1934):

1934-ի տարուան սկզբնաւորութիւնը մեծ եռանդ ու թափ կ'արձանագրէ: Հ.Մ.Ը.Մ-ի գերագոյն մարմինը իր օրակարգին վրայ կ'ունենայ մէկէ աւելի հրատապ հարցեր: Ասոնցմէ գլխաւորագոյնը սկառուտներուն հարցն է, անոնց կարգապահական խնդիրն է, որուն համար Շրջանային Վարչութիւնը 10 Յունուար 1934-ի նիստին մէջ կ'որոշէ:

«Սկառուտական շարքերուն մէջ կազմակերպական ու կարգապահական եւ աստիճանական բոլոր հարցերը օրինակելի դրութեան մը մէջ հասցնելու համար, ժողովը որոշեց մասնաճիւղերէն ուզել սկառուտական տեղեկագիրներ՝ կազմուած սկառուտ խմբապետներէ եւ վաւերացուած տեղական վարչութիւններէ. նոյնպէս ժողովը որոշեց հաղորդել մասնաճիւղերու սկառուտ խմբապետներուն, որ այսուհետեւ իրենց տեղեկագիրներն ու թղթակցութիւնները կատարեն Շրջանային Վարչութեան հետ»:

Պէյրութը իր լայն կազմակերպութեամբ, մանաւանդ Դամասկոսի խումբին յաճախակի այցելութեամբ, պարտաւորուած կը զգայ ունենալու իր դաշտը: Շրջանային Վարչութիւնը տեղական վարչութեան հետ խառն ժողովէ մը ետք կ'որոշուի ամէն գնով յարմարագոյն գետին մը գտնել ու խաղափայրի վերածել: Այս խնդրին շուրջ Օննիկ Պէօճէքեանի ղեկուցումը լսելէ ետք, Շրջանային Վարչութիւնը կ'որոշէ առաջին տարուան համար նախատեսուած 118 օսմանեան ոսկիի ծախսը ներքին փոխառութեամբ գոյացնել ու պահանջուած դաշտը մէջ-

տեղ բերել եօթը ամսուան պայմանագրութեամբ: Կը կազմուին շինութեան եւ նիւթականի հայթայթման յանձնախումբերը՝ լծուելու համար համապատասխան աշխատանքներուն:

Քրք Խան, Թրիփոլի, Լաթաքիա անմիջապէս կը պատասխանեն Շրջանային Վարչութեան շրջաբերականին սկառուտներու առնչութեամբ, իսկ Ճարապլուս եւ Ռաս իւլ Այն կը դիմեն, որպէսզի իրենց արտօնուի մաս կազմելու իրենց վայրերուն մէջ գործող Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղերուն: Ռաս իւլ Այնին հարկ եղած թելադրական նամակը գրելէ ետք կ'որոշուի «Ճարապլուսին ղրկել ներքին կանոնագիր եւ թելադրել, որ անոր սկզբունքներուն վրայ կարելի է միանալ Հ.Մ.Ը.Մ-ին... կ'որոշուի Ճարապլուսի այս հարցին տեղեկ պահել Հալէպը»:


(Շար. 12)


Խմբ.- Վրիպումով մը, այս յօդուածաշարքին նախորդ գրութիւնը նկատուած էր շարքին 10-րդը, մինչդեռ պէտք էր ըլլար 11-րդը:

Հետեւաբար, շարքը կը շարունակուի 12-րդ գրութեան ներկայացումով:

ARMENIA
for private and group trips
www.saberatours.fr


Saberatours Sevan Voyages




WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY  **Armavia**
Արմավիա

Photos: © Yann Arthus-Bertand / La Terre vue du Ciel. Licence 075 960031 Studio VICKEN 2005 PARIS


- Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days




11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com



48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com



67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr



32-38, rue Hanrabadoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
sabera@arminco.com

Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԽՈՒՄԲԻՆ ԱՆՑՆՈՂ ՏԱՐԵՇՐՉԱՆԸ



Կորիւն Քէլէշեան ԱՆԹԻԼԻԱՍ

Ապրիլին աւարտեցաւ Լիբանանի ֆուտպոլի Բ. դասակարգի ախոյեանութիւնը:

Ֆուտպոլի եղանակը աւարտեցաւ ուրախութեան եւ յուսախաբութեան խառն զգացումներով:

Ուրախութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ֆուտպոլի ներկայացուցչական խումբին ձեռք ձգած փայլուն արդիւնքներուն համար, որոնք մեր սպասածէն շատ աւելին էին, եւ յուսախաբութիւն, որ երկու այլ ակումբներ իրարու հետ համաձայնելով Հ.Մ.Ը.Մ.ը գրկեցին Ա. դասակարգ բարձրանալու իրաւունքէն: Տխուր է հաստատել, որ Սաթէսը եւ Իժթիմահին, Ֆետերասիոնին օրհնութեամբ, հաւասարեցան եւ Սաթէս, որ երթին ու դարձին պարտուեցաւ Հ.Մ.Ը.Մ.էն, մէկ կէտով գերազանցեց Հ.Մ.Ը.Մ.ը եւ բարձրացաւ Ա. դասակարգ, երբ ամբողջ Լիբանանը գիտէ, որ Իժթիմահին՝ Բ. դասակարգի գերազանց խումբը եւ եղանակի ախոյեանը, դիւրութեամբ կրնար երեք կէտ խլել Բ. դասակարգի որեւէ խումբէ:

Բայց ոչինչ, Հ.Մ.Ը.Մ. բազմաթիւ անարդարութիւններու հանդիպած է եւ չէ ընկրկած:

Եկէք վերաքաղ մը կատարենք այս տարեշրջանի արդիւնքներուն, թէ ինչպէ՛ս եւ ուրկէ՛ սկսանք եւ ո՛ւր աւարտեցինք:

Երբ Սամուէլ Պօղոսեան հրաւիրուեցաւ ստանձնելու Հ.Մ.Ը.Մ.ի գլխաւոր մարզիչի պարտականութիւնը, մէկ խօսք կը լսուէր հրապարակին վրայ. «Միայն Գ. դասակարգ չվերադառնանք»:

Բայց երթի մրցումներու աւարտին, Հ.Մ.Ը.Մ.ի ներկայա-

ցուցչական խումբը արդէն կը մրցէր Բ. դասակարգի ախոյեանութեան համար՝ զիջելով միայն Իժթիմահին:

Անցեալ տարուան խումբին վրայ հիմնուելով, Սամուէլ Պօղոսեան տղոց մէջ մտցուց մարզական, ֆուտպոլային, թեքնիքի եւ մանաւանդ տիպար Հ.Մ.Ը.Մ.ականի սկզբունքները, ոգին, ինչպէս նաեւ՝ մեզի վայել խաղաոճ:

Ասոր իբրեւ արդիւնք՝ երթի մրցումներու աւարտին, անցեալ եղանակին հետ բաղդատած՝ արդիւնքներու 180 աստիճան փոփոխութիւնը եւ հարիւր տոկոս բարելաւումը ակընյայտ էր:

Բոլորին համար յստակ էր, որ Հ.Մ.Ը.Մ. կը ներկայացնէր լաւագոյն խաղաոճը, ունէր ախոյեանութեան լաւագոյն միջնապահ գիծը, երկրորդ լաւագոյն յառաջապահ գիծը, ախոյեանութեան լաւագոյն օտարը, յանձինն՝ Գէորգ Օհանեանին, եւ Լիբանանի լաւագոյն բերդապահը, յանձինն խմբապետ Յարութ Սարգիսին:

Հակառակ անոր որ եղանակի ամբողջ ընթացքին Հ.Մ.Ը.Մ. արժանացաւ իրաւարարներու անարդար սուլիչներուն, ան հանդիսացաւ միակ խումբը, որ բոլոր դասակարգերը հաշուի առնելով՝ կարողացաւ Ա. կիսախաղի պարտութիւնը Բ. կիսախաղին յաղթանակի շրջել, այդ ալ հինգ տարբեր առիթներով:

Այս իրողութիւնը կը փաստէ շատ բաներ, որոնց կարգին՝ խումբին կարողութիւնը խաղաոճ փոխելու եւ սխալները սրբագրելու, յաղթելու, ինչպէս նաեւ պայքարի կամք եւ ֆուտպոլային բարձր կարողութիւններ:

Այս բոլորը կը պարտինք երեք «Ֆետայի»ներու. «Ֆետայի» մարզիչ Սամուէլ Պօղոսեանին, Հ.Մ.Ը.Մ.ի «Ֆետայի» ֆուտպոլիստներուն եւ «Ֆետայի» համակիրներուն:

Ո՞վ չի յիշեր մարզիկ Սամուէլ Պօղոսեանի «Ֆետայական» ելոյթները ամէն մէկ մրցումի, ըլլայ վիրաւոր կամ ոչ, յուշելով իր խմբակիցները, ուղղելով անոնց սխալները եւ գոցելով շատերու բացթողումները: Ամէն օր պատրաստ, զգաստ, համեստ եւ զոհուող:

Սամուէլ Պօղոսեան իր նկարագիրով դրոշմեց եւ թրծեց մեր մարզիկները, որոնք դարձան պայքարող, կարգապահ եւ տարեշրջանին ընթացքին բազմիցս դաշտ ներկայացան վիրաւոր վիճակի մէջ եւ կերտեցին մեր յաղթանակները:

Ո՞վ չի յիշեր մեր խմբապետը, որ ծունկը կոտրած, ուսը տեղէն ելած, Հ.Մ.Ը.Մ.ի բերդը պահեց անառիկ եւ այդ վիճակով զսպեց երեք փենայթիներ:

Ո՞վ չի յիշեր Սարգիս Ազնաւորեանը, որ ոտքը կոտրած՝ մեր բերդէն վտանգը հեռացնելէ ետք միայն՝ մարզիչէն խնդրեց դաշտէն դուրս բերել զինք:

Ո՞վ չի յիշեր Գէորգը, որ երեքէն չորս մրցում մկանը պատուած իննսուն վայրկեան պայքարեցաւ եւ նշանակեց կոլեր եւ կատարեց կոլի փոխանցումներ:

Ո՞վ չի յիշեր համալսարանական պարտաւորութիւններով գերբեռնուած, գործէն յոգնած Վարդանին, Ճոնիին, Մամասին, Տիգոյին, Յակոբիկին, Խաժակին եւ անխտիր բոլորին զոհողութիւններուն եւ պայքարի ոգին արդիւնք՝ մեր կերտած յաղթանակները:

Ո՞վ չի յիշեր Քրիսթիանին իննսուն վայրկեան անդադրում սլացքները՝ առանց յոգնելու:

Եւ ի՞նչ խօսք ըսենք մեր միութեան համակիրներուն եւ շեփորախումբին, որոնք ոչ մէկ վայրկեան ընկրկեցան կամ լքեցին իրենց սիրելի խումբը:

Շատ ազգայնականներ ունին հաւատարիմ համակիրներ, բայց աշխարհի տարածքին չէք գտներ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի ֆուտպոլի համակիրներուն նման «Ֆետայի» համակիրներ, որոնք իրենց ուղղութեամբ արձակուած հարիւրաւոր փամփուշտներէն փախուստ տալու փոխարէն, իրենց կուրծքերը բաց՝



սուրին եւ հուրին դէմ կը կանգնին՝ պաշտպանելու համար իրենց միութիւնը եւ մարզիկները:

Այս եղանակին ի՞նչ չտեսաւ Հ.Մ.Ը.Մ-ի ֆուտպոլի խումբը, ինչէ՛ր չյաղթահարեցին մեր երեք «Ֆետայի»ները՝ միասնաբար եւ միակամ:

Բոլորս հպարտ ենք ձեզմով:

Բոլորի՛դ վարձքը կատար:

Կեցցէ՛ Հ.Մ.Ը.Մ-ը:

with the complements of

Restaurant Al-Mayass



ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՍԿԱՌԻՏՈՒԹԻՒՄԻՆԸ Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՔԱՆԴՈՒԹԻՒՄԻՆՆԵՐՈՒՄՆ ԿՐՈՂՆ ՈՒ ՇԱՐՈՒՆԱԿՈՂՆ Է

Կ'ԸՍԷ ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ

6-11 Մայիս 2015-ին, Երեւանի մէջ տեղի ունեցան Համաշխարհային Սկառտական Շարժումի Եւրոասիական շրջանի սկառտական կոմիտէի նիստերը, որոնց աւարտին՝ կոմիտէն ներկայացնող պատուիրակութիւն մը, գլխաւորութեամբ Շարժումի գլխաւոր քարտուղար Սքոթ Թիրի, այցելեց Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանին: Պատուիրակութեան ընկերացան Հայաստանի ազգային սկառտութեան՝ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի ներկայացուցիչները:

Նախագահ Սարգսեան իր հիւրերը ողջունելով գնահատեց սկառտութեան դերն ու առաքելութիւնը նորահաս սերունդներու կազմաւորման մէջ: Ան դրուատեց սկառտական միջազգային կազմակերպութիւններու հետ Հայաստանի ազգային սկառտութեան գործակցութիւնը եւ շեշտեց համագործակցութեան, փորձառութիւններու փոխանակման եւ բարեկամական յարաբերութիւններու ստեղծման կարեւորութիւնը:



Նախագահ Սարգսեան յայտնեց, որ 1989 թուականէն գործող Հայաստանի ազգային սկառտութիւնը, թէեւ 1997-էն ի վեր դարձած է Համաշխարհային Սկառտական Շարժումի լիիրաւ անդամ, սակայն ան կը հանդիսանայ 1918 թուականին, Հայաստանի Ա. Հանրապետութեան օրերուն հիմնուած Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան աւանդութիւններուն կրողն ու շարունակողը:

ներ» ծրագրին, որ կը նպատակադրէ խաղաղութեան հաստատման եւ տարածման, ինչ որ շրջանին մէջ խաղաղութեան, կայունութեան եւ զարգացման ձգտող Հայաստանի համար չափազանց կարեւոր ծրագիր է:

Իրենց կարգին, սկառտական շարժումի գլխաւոր քարտուղարը եւ հանդիպումին մասնակիցները շնորհակալութիւն յայտնեցին նախագահ Սերժ Սարգսեանին՝ հիւրընկալութեան եւ Հայաստանի մէջ սկառտական շարժումին ցուցաբերած աջակցութեան եւ մնայուն ուշադրութեան համար: Անոնք նշեցին, որ 2016-ի Հոկտեմբերին նախատեսուած է Հայաստանի մէջ կատարել շրջանային տարողութեամբ խորհրդաժողով մը, որուն ընթացքին նախագահ Սերժ Սարգսեան կը հիւրընկալուի Բիւրականի սկառտական բանակավայրին մէջ:





Վիեննայի մասնաճիղի վարչական պատասխանատու եղբայրներու...



... եւ սկաուտներու հետ:

ԵՒՐՈՊԱՅԻ ՄԱՍՆԱԾԻՒՂԵՐԸ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՆՅՔ

27 Մայիսէն 12 Յունիս 2015, աշխատանքային այցելութեամբ մը Եւրոպա գլտնուեցաւ եւ միութեան տարբեր մասնաճիղերը այցելեց Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան:

Եղբոր այցելութեան առաջին հանգրուանը եղաւ Փարիզը, ուր ան հանդիպում մը ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութեան հետ եւ մօտէն ծանօթացաւ մասնաճիղի աշխատանքներուն եւ ապագայ ծրագիրներուն: Յայտնենք,

որ մասնաճիղի սկաուտներէն քոյր Կարինէ Սիսեռեան վերջերս Փարիզէն գործուղուած էր Վալանս եւ Վիեննա՝ սկաուտական տեղւոյն աշխատանքները վերակազմակերպելու նպատակով:

Փարիզ իր այցելութեան ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի երկու խմբապետներու ընկերակցութեամբ, եղբ. Մկրտիչեան այցելեց միութեան հիմնադիրներէն Գրիգոր Յակոբեանի շիրիմը եւ իր յարգանքի տուրքը ընծայեց հայ սկաուտութեան մեծ երախտաւորին:

Այնուհետեւ, եղբ. Մկրտիչեան 29-31

Մայիս այցելեց Միւնիխ, ուր տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի նոր մասնաճիղի հիմնադրութիւն (Այս մասին կարդալ առանձին):

Միւնիխէն եղբ. Մկրտիչեան եռօրեայ այցելութեամբ մը անցաւ Վիեննա, ուր 2 Յունիսին ան հանդիպում մը ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի տեղւոյն մասնաճիղի անդամներուն եւ Վիեննա բնակող հայորդիներու հետ: Հանդիպումին ընթացքին, եղբ. Մկրտիչեան խօսեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի դերակատարութեան եւ առաքելութեան մասին: Ան նաեւ արտայայտուեցաւ միութեան յառաջիկայ ծրագիրներուն մասին:

Եղբ. Մկրտիչեան հանդիպում մըն ալ ունեցաւ Վիեննայի մասնաճիղի ըսկաուտներուն հետ: Այսօր Վիեննայի մէջ կը գործեն 29 սկաուտներ, որոնցմէ 11-ը՝ սկաուտ-արեւոյշներ են, 12-ը՝ գայլիկ-արծուիկներ, իսկ 6-ը՝ նորեկներ, որոնք մօտ ապագային պիտի միանան իրենց խմբաւորումներուն: Յաջորդեց այլ հանդիպում մը Վիեննայի մասնաճիղի վարչութեան հետ:

Եղբայր Մկրտիչեանի Եւրոպա այցելութեան չորրորդ հանգրուանը եղաւ Շուէտը, ուր 4-7 Յունիսին ան աշխա-



Վիեննայի մասնաճիղի աստիճանաւոր սկաուտներ:

տանքային հանդիպումներ ունեցաւ Սթոքհոլմի, Վեստերոսի եւ Սոտէրդէլէի մասնաճիւղերու վարչութիւններու եւ տեղւոյն գաղութներու պատասխանատու մարմիններուն հետ՝ Հ.Մ.Ը.Մ-ի աշխատանքներուն յաւելեալ թափ տալու համար:

Սթոքհոլմի մէջ, եղբ. Մկրտիչեան ներկայ գտնուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովին: 45 Հ.Մ.Ը.Մ-ականներու ներկայութեան, մասնաճիւղը ընտրեց իր առաջին վարչութիւնը: Նշենք, որ մինչեւ վերջերս Հ.Մ.Ը.Մ. Շուէտի մէջ կը գործէր իբրեւ մէկ մասնաճիւղ, սակայն անդամական թիւի բազմացման պատճառով, Դեկտեմբեր 2015-ին շրջանը բաժնուեցաւ երեք մասնաճիւղի՝ Սթոքհոլմ, Վեստերոս եւ Սոտէրդէլէ: Սթոքհոլմի անդրանիկ վարչութեան մաս կազմեցին՝ եղբայրներ Ռազմիկ Առոյեան, Յովսէփ Համամճեան, Արիս Սելիմ, Սասուն Կարապետեան, Անդրանիկ Մահտեսեան, քոյրեր Սալբի Պետրոսեան, Նաթալի Արզումալեան, Ռեպեքա Տիսոն, Նազիկ Միրզոյեան: Սթոքհոլմի հայութեան մեծամասնութիւնը նախկին լիբանանահայեր եւ սուրիահայեր են:

Սոտէրդէլէի անդամական ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ օր մը ետք, 68 Հ.Մ.Ը.Մ-ականներու ներկայութեան: Մասնաճիւղը այժմ ունի 65 սկաուտներ եւ նորաստեղծ շեփորախումբ մը: Մասնաճիւղին վարչութիւնը կը բաղկանայ հետեւեալներէն՝ Ֆէտի Թափրա, Համօ Երէցեան, Հայրապետ Հայրապետեան, Սեւակ Քէհէեան, Խաչիկ Սիմոնեան, Զուարթ Գրիգորեան եւ Ազիկ Արու-Ղազարեան:

Վեստերոսի մէջ կազմակերպուեցաւ ժողովրդային հանդիպում մը, որուն ընթացքին բացատրուեցաւ շրջանը երեք մասնաճիւղի վերածելու դրդապատճառները: Կատարուեցաւ աշխատանքներու ընդհանուր գնահատում եւ ապագայի ծրագիրներու ներկայացում:

Շուէտէն ետք, եղբ. Մկրտիչեան այցելեց Հոլանտա: Հ.Մ.Ը.Մ. Հոլանտայի մէջ ունի երկու մասնաճիւղ Ալմելօ եւ Ալքմար քաղաքներուն մէջ եւ նախապատրաստական աշխատանքներ կը կա-



Վալանսի մասնաճիւղի վարչութեան հետ:



Փարիզի Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութեան հետ:

տարէ երրորդ մասնաճիւղ մը հիմնելու Առնհեմի մէջ:

Եղբ. Մկրտիչեան ներկայ գտնուեցաւ Ալմելոյի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովին: Ան նաեւ հանդիպում մը ունեցաւ Ալքմարի վարչութեան անդամ եղբ. Սեպուհ Աբրահամեանի հետ: 16 Մարտ 2014-ին հիմնուած Ալքմարի մասնաճիւղը այսօր կը հաշուէ 30 անդամ, 12 կրտսեր սկաուտներ եւ 7 տարազաւորներ, որոնք կը մասնակցին Ալմելոյի մասնաճիւղի աշխատանքներուն:

Եղբ. Մկրտիչեանի Եւրոպա այցելութիւնը եզրափակուեցաւ Ֆրանսայի մէջ, ուր ան այցելեց Վալանս եւ 12 Յունիսին ներկայ գտնուեցաւ մասնաճիւղի ան-

դամական ընդհանուր ժողովին: Ընտրուեցաւ նոր վարչութիւն, բաղկացած հետեւեալներէ.- Զարեհ Ղարիպեան՝ ատենապետ, Աբրահամ Աբելեան՝ ատենադպիր, Անթոնի Սաֆար՝ գանձապահ, Սարգիս Զոլաքեան՝ հաշուապահ, Ժոէլ Քրտօ՝ փոխ ատենապետ, Կարօ Ստեփանեան՝ սկաուտականի պատասխանատու եւ Յովհաննէս Միգօ՝ մարզականի պատասխանատու:

Հ.Մ.Ը.Մ-ի Վալանսի մասնաճիւղը այսօր կը հաշուէ 53 սկաուտներ եւ շեփորախումբի անդամներ, 60 մարզիկներ եւ տիկնանց յանձնախումբի անդամներ: Մասնաճիւղը վերջերս կատարեց տարեկան իր բանակումը:



Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Տէնի Ծուպէլեան:



Պատգամաբեր եղբ. Վիգէն Աւագեան:

«ՊԱՏՄՈՒԹԻՒՄ Հ.Մ.Ը.Մ.Ի ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍԻ ՄԱՍՆԱԾԻՒՂԻՆ 1927-2012» ԳԻՐՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Թղթակից
ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ

Չորեքշաբթի, 24 Յունիսին, Պուէնոս Այրէսի Հայ Մշակութային Կեդրոնի «էտուարտո Սէֆէրեան» սրահին մէջ տեղի ունեցաւ «Պատմութիւն Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղին 1927-2012» գիրքին ներկայացումը, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղին եւ հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան:

Այս առիթով Պուէնոս Այրէս այցելեց եւ գիրքին ներկայացումը կատարեց Լիբանանէն յատկապէս հրաւիրուած՝ Հ.Մ.Ը.Մ.ի «Մարգիկ» պաշտօնաթերթի գլխաւոր խմբագիր եղբ. Վիգէն Աւագեան, որ յիշեալ գիրքին յառաջաբանին հեղինակն է: Գիրքին հեղինակն է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Աբրահամ Ահարոնեան:

Գիրքին ներկայացումը կանխեց յոբելեար մասնաճիւղին պատմութիւնը

ներկայացնող տեսերիզի մը ցուցադրութիւնը: Ապա, հանդիսութեան բացման խօսքով ներկաները ողջունեց եղբ. էտուարտո Գէորգեան: Եղբայրը անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի 85 տարիներու գործունէութեան եւ այդ գործունէութիւնը պատմագրող գիրքին հրատարակութեան: «Այն ժողովուրդը որ յիշողութիւն չունի դատապարտուած է ոչնչանալու», նշեց ան եւ շնորհակալութիւն յայտնեց գիրքի հեղինակ եղբ. Աբրահամ Ահարոնեանին, որ հաւաքական մեր յիշողութեան նպաստող կարեւոր գործ մը կատարած է իր աշխատասիրութեան հրատարակութեամբ:

ԵՂԲ. ՀՈՐԱՍԻՕ
ԹԵՐԶԵԱՆԻ ԽՕՍԲԸ

Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղին խօսքը սպաներէնով արտասանեց վարչութեան ատենապետ եղբ. Հորասիո Թերգեան: Ան եղբ. Ահարոնեանի գիրքը նմանցուց դասագիրքի մը, որմէ կրնան օգտուիլ Հ.Մ.Ը.Մ.ական նորահաս սերունդները: Գիրքը կը պատմագ-

րէ դէպքեր ու թուականներ, սակայն ի՞նչպէս ներկայացնել Հ.Մ.Ը.Մ.ի յարկին տակ ստեղծուած բարեկամութիւններն ու ընտանեկան կապերը, շեշտեց ան, ի՞նչպէս ներկայացնել բանակումներու ոգեւորութիւնը, միութենական բարոյական արժէքները եւ այն բոլորը, որոնք Հ.Մ.Ը.Մ.ի հարազատ էութիւնը կը կազմեն: Իր խօսքին մէջ, եղբ. Թերգեան ողջունեց եղբ. Աբրահամ Ահարոնեանի աշխատանքը եւ մեծապէս գնահատեց օրուան պատգամախօս եղբ. Վիգէն Աւագեանը՝ «Մարգիկ»ի երկար տարիներու իր ծառայութեան եւ օգտաշատ խմբագրականներուն համար:

ԵՂԲ. ՏԷՆԻ ԾՈՒՊԵՂԵԱՆԻ ԽՕՍԲԸ
Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղի խօսքին յաջորդեց Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան խօսքը, զոր սպաներէնով արտասանեց եղբ. Տէնի Ծուպէլեան:

Եղբայրը յայտնեց, որ «Երբ թուրքը որոշեց հայերու Ցեղասպանութիւնը եւ սեփական հողերէն աքսորը, առիթ տուաւ որ աշխարհի տարածքին ամէ-



Եղբ. Աբրահամ Ահարոնեան:



**Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական
Վարչութեան անդամ եղբ.
Գարլոս Սէֆերեան:**

նուրեք ստեղծուին հարիւրաւոր փոքր Հայաստաններ, եւ Հ.Մ.Ը.Մ.ը դառնայ անոնցմէ իւրաքանչիւրին հիմնական սիւներէն մէկը:

«Այսպէս, 1927 թուականին ծնունդ առաւ Հ.Մ.Ը.Մ.ի Պուլէնոս Այրէսի մասնաճիւղը, եւ սկսաւ տարածել այն հիմնադիր արժէքները, որոնք միութիւնը կեանքի կոչեցին 97 տարիներ առաջ, ու Մայր Հայրենիքէն հազարաւոր քիլոմետրեր հեռու գինք մղեցին աշխատանքի՝ հայկական ինքնութիւնը պահպանելու համար»:

Եղբայր Ճուպէլեան լայնօրէն անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի ափերուն ունեցած գործունէութեան եւ հաստատեց, որ «Հ.Մ.Ը.Մ. իրեն նման միութիւնները եւ գաղափարակից կազմակերպութիւնները չի գերազանցեր իր հնութեամբ, իր կառոյցներով, ո՛չ ալ հիմնադրութեան նպատակներով, այլ՝ իր առաջադրած յստակ նպատակներով, որոնց հետեւելով, առօրեայ աշխատանքով կարելի է հետեւիլ տեւական յաջողութիւններու առաջնորդող մնայուն ճանապարհի մը:

«Ի վերջոյ, Հ.Մ.Ը.Մ.ը միջավայր մըն է, ուր տեղ կը գտնեն բոլոր անոնք որոնք կը փափաքին բարձրանալ եւ բարձրացել իրենց կողքին եղողները: Միայն այդ ձեւով կարելի պիտի ըլլայ յաջողութեան ճամբուն հետեւիլ:

«Որովհետեւ եթէ Հ.Մ.Ը.Մ.ը զարգանայ, մեծնայ ու աճի, նաեւ կ'աճի հայրութիւնը եւ անոր պետականութիւնը» (եղբոր խօսքը տեսնել էջ 6-7):



**Պատմագիրքի հանդիսութեան ներկայ
պատասխանատու կարգ մը եղբայրներ:**



**Հանդիսավար
եղբ. Էտկարոս
Գեորգեան:**



**Հ.Մ.Ը.Մ.ի
Պուլէնոս Այրէսի
մասնաճիւղի
ատենապետ
եղբ. Հորասիօ
Թերգեան:**



ԵՂԲ ՎԻԳԻՆ ԱԻԱԳԵԱՆԻ ՊԱՏԳԱՄԸ

Օրուան պատգամաբեր եղբ. Վիգին Ալազեան իր խօսքը սկսաւ Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի շրջանին իւրապատկութիւնները ներկայացնելով, ապա ան խօսեցաւ պատմագրութեան անհրաժեշտութեան մասին, իբրեւ ներշնչումի եւ դաստիարակութեան աղբիւր: Իր խօսքին հիմնական մասով եղբայրը ներկայացուց եղբ. Աբրահամ Ահարոնեանի աշխատասիրութիւնը եւ անոր տեղն ու կարեւորութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքի պատմութեան մէջ:

«Տարբեր է Պուէնոս Այրէսի Հ.Մ.Ը.Մ.ը: Տարբեր «համ ու հոտ» ունի ան: Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումները եւ մարզախաղերը տեւական կարօտը ունին այդ «համ ու հոտ»ին: Առանց անոնց՝ անգոյն եւ անհամ կը դառնան անոնք:

«Ուր չկան Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի եւ ընդհանրապէս Հարաւային Ամերիկայի մեր եռանդուն մարզիկներն ու սկաուտները՝ հոն Հ.Մ.Ը.Մ.ական խանդավառութենէն եւ գրաւչութենէն պակաս մը կայ անպաման», նշեց եղբ. Ալազեան:

Ապա, պատմագրութեան անհրաժեշտութեան մասին արտայայտուելով ան ըսաւ. «Ժողովական սպառիչ կեանք, նիւթականի անվերջանալի ու մնայուն տազնապներ, մարզական թէ սկաուտական խումբեր պահելու ամէնօրեայ պայքար, համահայկական թէ համա-

Հ.Մ.Ը.Մ.ական նախաձեռնութիւններու պատրաստութիւններ...: Այս բոլորը առանձին պատմութիւն են, որոնք հայ մարդու տոկունութեան ցուցանիշները ըլլալու կողքին, Հ.Մ.Ը.Մ.ական մարդու անսասան հաւատքին ուժը կը ներկայացնեն:

«Պէտք է գրուի այս բոլորին մասին, որպէսզի նորերը ճանչնան Հ.Մ.Ը.Մ.ի անցեալը, գիտնան թէ ի՞նչպէս անցելէն ստեղծուեցաւ ներկան, հաւատարիմ մնան միութեան նպատակին, գործին եւ յաջողութեան ու, վերջապէս, հասկնան հայ կեանքը եւ Հ.Մ.Ը.Մ.ի տեղը այդ կեանքին մէջ, իբրեւ համաժողովրդային կազմակերպութիւն, որուն հիմնադրութեան պայմանները եւ հեռաւոր նպատակները կը նոյնանան մեր ժողովուրդի անկատար տենչերուն եւ ազգա-

յին տեսլականներուն հետ»:

Եղբ. Ալազեան հանգամանօրէն ներկայացուց եղբ. Աբրահամ Ահարոնեանի աշխատասիրութիւնը եւ հաստատեց, որ «85 տարի ծառայելով հայ ժողովուրդին եւ ազգին» բնաբանով հատորը Պուէնոս Այրէսի հայ գաղութի գոյատեւման հարգատ վկայութիւնն է, որուն մէջ Հ.Մ.Ը.Մ.ական մարդը կը գտնէ իրեն հպարտութիւն առթող շատ բան, իսկ հայ մարդը զայն կարգալով կը նայ միայն հիանալ ու խոնարհիլ վաստակին առջեւ այն մեծ մասնաճիւղին, որ գիտէ 85 տարիներ նման պատմութիւն կերտել եւ այդ պատմութիւնը նման շքեղ հատորի վերածող եղբ. Աբրահամ Ահարոնեանի նման միութենականներ ունենալ» (եղբոր խօսքը տեսնել էջ 8-12):



ԵՂԲ. ԱԲՐԱՀԱՄ


ԱՀԱՐՈՆԵԱՆԻ ԽՕՍՔԸ

Խօսք առաւ գիրքին հեղինակը՝ եղբ. Աբրահամ Ահարոնեան: Ան հայերէնով եւ սպաներէնով խօսեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան մասին եւ նկատել տուաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ը հայոց պատմութեան անբաժան մէկ մասնիկն է, որովհետեւ՝ «Երբ կը խօսինք 1915 թուականի Ապրիլ 24-ի մասին, չենք կրնար չխօսիլ Հ.Մ.Ը.Մ.ի մասին: Եւ երբ կը խօսինք Հ.Մ.Ը.Մ.ի մասին, չենք կրնար չնշել 24 Ապրիլ 1915 թուականը»:

Այս առիթով եղբ. Ահարոնեան դիտել տուաւ, որ հայ մարմնակրթութեան առաջնորդ եւ Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարախօս Շաւարշ Քրիսեանը, հարիւրաւոր այլ ղեկավարներու եւ մտաւորականներու հետ, ձերբակալուեցաւ 24 Ապրիլի գիշերը եւ ապա սպաննուեցաւ: Շաւարշ Քրիսեան առիթ չունեցաւ իրականացած տեսնելու իր երազը, որն էր՝ մարզական մեծ կազմակերպութեան մը ստեղծումը: Այդ երազը իրականութիւն դարձաւ 16 Նոյեմբեր 1918 թուականին, երբ Շաւարշ Քրիսեանի խումբ մը հետեւորդներ հիմը դրին Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան, մարզական եւ բարոյական կրթութեամբ դաստիարակելու համար թուրք կառավարութեան սարսափէն փրկուած հազարաւոր որբերը:

Հ.Մ.Ը.Մ.ը հայոց պատմութենէն կարելի չէ անջատել, որովհետեւ Ա. Հանրապետութեան օրերուն, Հ.Մ.Ը.Մ. Հայաստան գործողեց իր լաւագոյն ղեկավարներէն երեքը՝ Վահան Չերազը, Տիգրան Խոյեանը եւ Օննիկ Եազմաճեանը, որպէսզի ստանձնեն Հայաստանի որբանոցներուն կազմակերպումը, նշեց եղբ. Ահարոնեան:

Ապա, շարունակելով, ան աւելցուց. «Թուրքիոյ մէջ իր լուծարումէն՝ 16 Սեպտեմբեր 1922-էն ետք, Հ.Մ.Ը.Մ. հետեւեցաւ հայութեան եւ հաստատուեցաւ աշխարհի տարածքին, հոն ուր հայկական գաղութ կար: Այսպէս, Հ.Մ.Ը.Մ. վերածուեցաւ իւրայատուկ կազմակերպութեան մը, որ մարզանքի եւ սկստութեան միջոցով մեծ դեր ունեցաւ հայկական ինքնութեան պահ-



ՇՆՈՐՀԱՒՈՐԱԳԻՐՆԵՐ

Սիրելի եղբայրներ,

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Հարաւային Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէն այսու իր խորին շնորհատրութիւնները կը յայտնէ Ձեզ, Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղի 85-ամեայ պատմութիւնը ցոլացնող եղբ. Աբրահամ Ահարոնեանի հեղինակութեամբ սոյն յուշամատենի ներկայացման ուրախ առիթով:

Անգամ մը եւս, շնորհիւ անանօրինակ նախաշեռնութիւններու, Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարականը եւ ուղին իրենց ներկայութիւնը կ'ունենան գրականութեան միջոցաւ, եւ սերունդէ սերունդ կը փոխանցեն մարզական եւ սկստութեան մեր այս կազմակերպութեան սկզբունքները, ծրագիրներն ու աշխատանքը, Հարաւային Ամերիկայի եւ համայն աշխարհի մեր համայնքներուն մէջ:

Յաջողութիւն կը մաղթենք չեր աշխատանքներուն:

Հ.Յ.Դ. ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

Յարգելի քոյրեր եւ եղբայրներ,

ՀՕՄ-ի Հարաւային Ամերիկայի Ծրջանային Վարչութիւնը այսու կը շնորհատրէ ձեզ եղբ. Աբրահամ Ահարոնեանի Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղի 1927-2012 պատմութեան գիրքի ներկայացման առիթով:

Այս հատորը կը պարունակէ կազմակերպութեանդ տասնամեակներու ընթացքին տարած ազգակերպ աշխատանքը՝ գաղութի փոքրիկներու, պատանիներու եւ երիտասարդներու թէ՛ մարմնամարզական եւ թէ՛ հոգեկան կազմաւորման ի խնդիր, միշտ հաւատարիմ մնալով Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներուն սրբազան պատգամին «Բարձրացի՛ր-բարձրացուր»ին:

Ընդունեցէ՛ք մեր սրտագին շնորհատրութիւնները եղբ. Աբրահամ Ահարոնեանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղի վարչութեան:

ՀՕՄ-Ի ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԾՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



Հ.Հանրապետության դեսպան Ալեքսան Յարուքիանյանի մաս:



Լիբանանի դեսպան Անթոնիո Սաապի մաս:

պանման եւ Հայոց Յեղասպանութեան ճանաչման պայքարին մէջ»:

Այս բոլորը կը շնորհակալուին Հ.Մ.Ը.Մ.ի հայոց պատմութեան անբաժան մասնակցող, նկատել տուաւ եղբ. Ահարոնեան եւ ըսաւ, որ ա՛յս կը փաստեն Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղին 85 տարիներու պատմութեան նուիրուած գիրքին էջերը:

ԵՂԲ. ԳԱՐԼՈՍ ՍԷՖԷՐԵԱՆԻ ԽՕՍՔԸ

Հանդիսութեան վերջին խօսքը հայերէնով եւ սպաներէնով արտասանեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Գարլոս Սէֆէրեան: Ան ողջունեց Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնաթերթի խմբագիրին այցելութիւնը Հարաւային

Ամերիկա եւ բովանդակալից պատգամը շրջանի Հ.Մ.Ը.Մ.ին եւ անոր պատմագիրքին մասին: Եղբ. Սէֆէրեան շնորհակալութիւն յայտնեց ժան եւ Գարմէն Աբգարեան հիմնարկութեան, որ կարելի դարձուց օրուան պատգամախօսին այցելութիւնը շրջան:

Ներկայացուող գիրքին եւ հեղինակին մասին խօսելով, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամը ըսաւ, որ եղբ. Աբրահամ Ահարոնեանը կարելի է բնորոշել երկու բառով. հաւատարմութիւն եւ ծառայութիւն: Եղբայրը տեւաբար հաւատարիմ եւ ծառայող եղած է գինք ծնող միութեան՝ Հ.Մ.Ը.Մ.ին եւ, այսօր, իր գիրքի հրատարակութեամբ ան յաւելեալ փաստ մը կու տայ հաւատարմութեան եւ ծառայութեան:

Եղբ. Սէֆէրեան ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղին 85 տարիներու պատմութիւնը ներկայացնող գիրքը նպատակ մը չէ, այլ՝ միջոց մըն է, որպէսզի նոր սերունդը կարգայ գայն եւ գիտնայ, թէ ինչո՞ւ համար է Հ.Մ.Ը.Մ.ը եւ ի՞նչ նպատակ կը հետապնդէ ան: Գիրքը նոր սերունդին ուղղութիւն տուող, դաստիարակող եւ կրթող հրատարակութիւն մըն է, որմէ կ'արժէ օրինակ մը ունենալ, եզրափակեց ան:

ՇՆՈՐ ՀԱՒՈՐԱԳԻՐՆԵՐԸ

Խօսքերու կողքին, օրուան հանդիսավարը ընթերցեց գիրքին հրատարակութեան առիթով Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղը շնորհաւորող ուղերձներ Հ.Յ.Դ. Հարաւային Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէէն, ՀՕՄ-ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեանէն, Խրիմեան վարժարանի տնօրէնութեանէն եւ Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեանէն:

ՅՈՒՇԱՆՈՒՅԻՐՆԵՐՈՒ ՅԱՆՁՆՈՒՄԸ

Խօսքերէն ետք, Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութիւնը յատուկ յուշանուէրներով պատուեց եղբայրներ Վիգէն Աւագեանն ու Աբրահամ Ահարոնեանը:

Հանդիսութիւնը փակուեցաւ «Յաւաջ նահատակ» քայլերգով, որմէ ետք սրահի մուտքին, եղբ. Աբրահամ Ահարոնեան կատարեց գիրքին մակագրումը եւ նուիրումը ընթերցասէր ներկաներուն:

ԼԻԲԱՆԱՆԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԵՐ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Գիրքի ներկայացման յաջորդող օրերուն, Հ.Մ.Ը.Մ.ի պատուիրակութիւն մը, բաղկացած՝ Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Գարլոս Սէֆէրեանէ, Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Աբրահամ Ահարոնեանէ, Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Տէնի Ճուպէլեանէ եւ «Մարգրիկ»ի խմբագիր եղբ. Վիգէն Աւագեանէ, այցելեց Պուէնոս Այրէսի մօտ Լիբանանի եւ Հայաստանի դեսպանատուներ եւ

ծանօթացման հանդիպումներ ունեցաւ դեսպաններ Անթոնիօ Սաապի եւ Ալեքսան Յարուլթիւնեանի հետ: Հանդիպումներուն ընթացքին դեսպաններուն ներկայացուեցան նոր լոյս տեսած պատմագիրքէն օրինակներ: Նմանօրինակ այցելութիւններ կատարուեցան նաեւ «Արմենիա» շաբաթաթերթի խմբագրատուն, Ազգային Առաջնորդարան եւ Խրիմեան վարժարան:

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍՈՒՐԻԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Եղբ. Վիգէն Աւագեանի Արժանթին այցելութենէն օգտուելով, Հինգշաբթի, 25 Յունիսին, Պուէնոս Այրէսի Հայ Մշակութային Կեդրոնին մէջ տեղի ունեցաւ ժողովրդային հանդիպում մը Միջին Արեւելքի ներկայ իրավիճակին եւ սուրիահայութեան կացութեան մասին: Հանդիպումին ներկայացուեցաւ հալէպահայութեան մասին տեսերիզ մը, որմէ ետք եղբ. Աւագեան խօսեցաւ սուրիահայութեան դիմագրաւած դժուարութիւններուն եւ օժանդակութեան աշխատանքներուն մասին:

ԱՅԼ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Արժանթին իր այցելութեան ընթացքին, եղբ. Աւագեան հանդիպումներ ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան, Պուէնոս Այրէսի մասնաճիւղին եւ սկաուտական շարքերուն հետ՝ խօսելով Հ.Մ.Ը.Մ.ը, հայութիւնը եւ սուրիահայութիւնը յուզող հրատապ հարցերու մասին: Ան այցելեց Ռամոս Մեխիայի ակումբ, մասնակցեցաւ մասնաճիւղի վարչութեան կողմէ կազմակերպուած ընկերային հաւաքոյթի մը եւ զրոյց-հանդիպում մը ունեցաւ աստիճանաւոր սկաուտներու հետ:

ՔՈՅՐ ՊԷԹԻ ՍԷՖԵՐԵԱՆԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ԱՐԺԱՆԹԻՆԻ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ 15-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԴԱՍՏԻԱՐԱԿ

Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութենէն կը տեղեկանանք, թէ վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական քոյր Պէթի Սեֆերեան վերջերս նշանակուած է Արժանթինի 15-րդ շրջանի դաստիարակ, ինչ որ արժանթինեան մակարդակի բարձրագոյն պաշտօնն է, որ ցարդ կը շնորհուի Հ.Մ.Ը.Մ.ականի մը:



Արժանթինի սկաուտական 15-րդ շրջանը կ'ընդգրկէ Ռամոս Մեխիայի սկաուտական խումբերը, որոնց մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» խումբը:

Քոյր Պէթի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շարքերուն անդամակցած է 1968-ին: Ան առաջին անգամ Հարաւային Ամերիկայի Շրջանային Սկաուտ. Խորհուրդին մաս կազմած է 1993-ին: Այնուհետեւ, շրջան մը դադարէ ետք, 2008-էն մինչեւ օրս ան դարձեալ անդամ է Շրջանային Սկաուտ. Խորհուրդի: Քոյրը մասնակցած է «Վուտ պէճ»ի դասընթացքներու եւ տիրացած է երկու տախտակի: Վերջերս, ան իր մասնակցութիւնը բերաւ համաշխարհային 23-րդ ճամպորիին, Ճափոն:

Քոյր Պէթին նշանակումը կատարող յայտարարութիւնը կը նշէ, որ «Ըստ սովորութեան, ամէն տարի, Արժանթինի սկաուտական կազմակերպութեան դաստիարակչական յանձնախումբը կ'ընտրէ շրջանի ղեկավարներէն անոնք որոնք կատարած ըլլալով դաստիարակչական իրենց դասընթացքները, մաս կը կազմեն կազմակերպութեան եւ ուղղութիւն տալով կ'ընկերակցին նորահաս սկաուտներուն»:

Յայտարարութիւնը նաեւ կ'աւելցնէ. «Դաստիարակ ըլլալը երկար ճամբայ մըն է. ան կը կարօտի տքնաջան աշխատանքի: Դաստիարակներ նախ տեղական խումբերու մէջ կը գործեն, ապա՝ երկրորդ հանգրուանին դաստիարակչական դասեր կ'առնեն նոր սերունդներու հետ աշխատելու նպատակով, եւ վերջապէս դաստիարակ կը նշանակուին շրջանի խումբին եւ տեղւոյն շրջանայինին կողմէ»:



Եղբ. Աւագեան ներկայ եղաւ նաեւ սկաուտական հաւաքի մը, որուն ընթացքին սկաուտներ եղբայրը պատուեցին մասնաճիւղին սկաուտական փողկապով եւ մարզական տարագներով:

Եղբօր այցելութիւններու յայտագրին մէջ էր նաեւ Գորտոպա այցելութիւն մը, որ սակայն կլիմայական անընդհատ պայմաններու պատճառով ջրնջուեցաւ վերջին պահուն:

Լուսանկարները՝ Ալպերթօ Սորէեանի:



ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ՄԻՏՆԻ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՏՈՂԱՆՅՔԸ

Յովհաննէս Մարտոյեան
ՄԻՏՆԻ

Կիրակի, 26 Ապրիլ 2015-ի կէսօրէ առաջ, հակառակ տեղատարափ անձրեւին, բազմահազար հայորդիներ ողողած էին Չացուտի «Անձանօթ գինուոր»ի յուշապարտէզը (Միտնի), ուր նախօրոք տեղ գրաւած էին Հ.Մ.Ը.Մ-ի Աւստրալիոյ մասնաճիւղերու սկաուտական կազմերը, Շրջանային եւ մասնաճիւղերու վարչական անդամներ, գաղութի հայկական միութիւններու, յարանուանութիւններու, հայկական վարժարաններու ներկայացուցիչներ ու անդամներ, Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ վարչութիւնը եւ եկեղեցւոյ սպասաւորներ:

2015 թուականը կը նշէր Հայոց Յեղասպանութեան 100-ամեակը: Միաժամանակ, ան կը գոլգոթէր ANZAC-ի՝ Աւշտարհամարտին աւստրալացի եւ նոր գերանտացի գինուորներու նահատակութեան 100-ամեակին: Առ այդ, իբրեւ երախտագիտութիւն ասպնջական Աւստրալիոյ պետութեան, տեղի ունեցաւ յարգանքի յատուկ արարողութիւն: Հ.Մ.Ը.Մ-ի նորակազմ շեփորախումբը հնչեցուց Աւստրալիոյ, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի քայլերգները: ANZAC-ի

խորհուրդը անգլերէնով արտասանեց եղբ. Էտի Տէմիրճեան: Օրուան պատգամը հայերէնով նոր սերունդին փոխանցեց քոյր Հուրի Տէմիրճեան: Անգլերէն եւ հայերէն արտասանութիւններով ելոյթ ունեցան Գարուն Պողոսեան, Նաթալի Պաստաճեան, Սարո Քրտանեան, Մայքըլ Գոլդոսեան: Վերջին հրաժեշտը՝ «Լաստ փոսթ»ը նուազեց եղբ. Գիվիճեան, մինչ արի-արեւոյշներ ծաղկեպսակներ գետեղեցին «Անձանօթ գինուոր»ի յուշարձանին:

ANZAC-ի եւ Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին նուիրուած կարճ ու բովանդակալից արարողութեան աւարտին, սկիզբ առաւ սկաուտական տողանցքը՝ հովանաւորութեամբ Առաջնորդ Հայկազուն Եպս. Նաճարեանի: Դրօշակակիրներ բարձր բռնած Աւստրալիոյ, Հայաստանի, Արցախի եւ Հ.Մ.Ը.Մ-ի դրօշները, Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբի ազգային եղանակներուն կշռոյթով, Չացուտի «Վիքթորիա» մայր պողոտայի մէկ քիւրմեթր երկայնքին առաջնորդեցին Հ.Մ.Ը.Մ-ի սերունդը՝ արի-արեւոյշներ, գայլիկ-արծուիկներ, կակուղ թաթիկ-մըջնիկներ, որոնք մեծ պաստառով կը յայտարարէին. «Մենք թոռներն ենք Յեղասպանութեան ենթարկուած հայ ժողովուրդի

նահատակներուն, մենք կը յիշենք ու կը պահանջենք»: Նմանօրինակ պատաններով, Հայոց Յեղասպանութիւնը դատապարտող գրութիւններով տողանցքին մասնակցեցան նաեւ երիտա-



սարդական, մշակութային, բարեսիրական, կրթական կառույցներ եւ միութիւններ: Տողանցքին հետեւեցան Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ դպիրներ եւ շուրջ հորս հազար հայորդիներ:

Ոստիկաններու կողքին, յատուկ շարիկներ հագուած, Հ.Մ.Ը.Մ-ականներ հսկեցին, որպէսզի տողանցքին մասնակցող բազմութիւնը մնայ իրեն սահմանուած ուղիին մէջ: Տողանցքին ան-

նախընթաց երեւոյթը եղաւ քառասուն մեթր երկարութեամբ Եռագոյն դրօշը: Անոր հովանիին ներքեւ տողանցողները ապրեցան հայրենի հողին ու շունչին գործիւնը, Հայրենիք-Սփիւռք գորակցութիւնը, Հացուտի Մաքուարի անկիւնը տողանցողներուն միացան քահանայ հայրեր, սարկաւազներ, կրտսերներու երգչախումբը եւ եկեղեցւոյ վարչութիւնը: Ներկայ ժողովուրդը ընկերացաւ եկեղեցական թափօրին, ուղղուեցաւ եկեղեցւոյ կից այս առիթով պատրաստուած բացօթեայ բեմը, ուր տեղի ունեցաւ Աւետարանի ընթերցում:

Եկեղեցական արարողութեանն ետք խօսք առաւ տողանցքի յանձնախումբի ներկայացուցիչ եղբ. Յակոբ Պողոսեան: Ան իրեն իւրապատուկ ոգեւորիչ ելոյթով գնահատեց բոլոր քոյր-եղբայրները, որոնց համագործակցութեամբ եւ խոր գիտակցութեամբ կարելի եղաւ Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան կազմակերպած այս տողանցքը գաղութային չափանիշով յարողութեամբ պսակել: Եկեղեցւոյ վարչութեան անունով ծոն Մարգարեան շնորհաւորեց տողանցքին մասնակիցները եւ Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութիւնը: Մարգարեան մաղթեց, որ հրապարակային այս ձեռնարկը ազդանշանը ըլլայ միացեալ ուժերով գաղութային մնայուն համագործակցութեան:

Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Վահէ Իվանեան անգլերէնով ողջունեց Հայոց Յեղասպանութեան 100-ամեակի տողանցքին բազմա-

հազար հայորդիներու մասնակցութիւնը: Եղբայր Իվանեան շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք որեւէ ձեւով օգտակար եղան, յատկապէս՝ յանձնախումբի ներկայացուցիչ եղբ. Յակոբ Պողոսեանին: Եղբ. Իվանեան բարձր գնահատեց գաղութին յարանուանութիւնները, Առաջնորդ Հայկազուն Եպս. Նաճարեանը, հոգեւոր հայրերը, եկեղեցիներու պատկան մարմինները եւ բազմաբնոյթ միութիւնները իրենց համագործակցութեան համար:

Շրջանային Վարչութեան ատենապետ եղբայր Բաֆֆի Պօշնագեան փոխանցեց օրուան պատգամը (Եղբոր խօսքը տեսնել առանձին, էջ 13):

Այնուհետեւ, Աւետիս Քհնյ. Համբարձումեանի ոգեւորիչ խօսքը շօշափեց ներկայ երիտասարդութեան ազգային ինքնութիւնը եւ գոտապնդեց ազգին ու հայրենիքին ծառայելու անոնց յանձնառութիւնը: Քահանայ հայրերու «Տէրունական աղօթք»ով վերջ գտաւ օրուան յայտագիրը: Սկաուտական կազմերու ձեռամբ երկինք արձակուեցան հարիւրաւոր մանիշակագոյն փուչիկներ՝ խորհրդանշելով մեր նահատակներուն անմեղութիւնը: Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտները ձեռնային աշխատանքով եկեղեցւոյ շրջափակին մէջ կանգնեցուցած էին Ծիծեռնակաբերդի յուշարձանին նմանակը:

Աւարտին, սկաուտական բոլոր բաժանմունքները եւ ներկայ հասարակութիւնը երկիւղածութեամբ ծաղիկներ գետեղեցին յաւերժութեան կրակին շուրջ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ Ա. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԱՐԵՂԱՐԶ՝ ԿԻՊՐՈՍԻ Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-Ի ԱԿՈՒՄԲԻՆ ՄԷՋ



Հ.Յ.Դ. Բիրոյի անդամ
Խաչիկ Մուրատեան:

Թղթակից ՆԻԿՈՍԻԱ

30 Մայիսին, Նիկոսիոյ Հ.Մ.-Ը.Մ.-ՀԵՄ-ի ակումբին մէջ նշուեցաւ Հայաստանի Ա. Հանրապետութեան 97-րդ տարեդարձը, հովանաւորութեամբ Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Նարեկ Արք. Այլէմէզեանի:

Հանդիսութեան բացումը կատարեցին Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտներն եւ գայլիկները, որոնք հայկական, կիպրական, Հ.Յ.Դ-ի եւ ուղեկից միութիւններու դրօշներուն առաջնորդութեամբ, տողանցելով մուտք գործեցին մարզադաշտ:

Ապա, Հ.Յ.Դ-ի Կիպրոսի կոմիտէի ներկայացուցիչ Սիմոն Այնէճեան ողջունեց ներկաները եւ անդրադարձաւ ակումբէն ներս տարիներու ընթացքին կատարուող աշխատանքին:

Օրուան բանախօսն էր այս առթիւ յատկապէս հրաւիրուած՝ Հ.Յ.Դ-ի Բիւրոյի անդամ Խաչիկ Մուրատեան:



Սիմոն Այնէճեան:

կանութիւնն ու տեսիլքը կ'ունենան կացութիւն մը շրջադարձելու եւ փրկարար դերակատարութիւն ունենալու, ինչպէս ըրաւ Մայիս 28-ի սերունդը:

Հայ ժողովուրդին առջեւ ցցուող մարտահրաւէրներուն անդրադարձաւ նաեւ Կաթողիկոսական Փոխանորդ Նարեկ Արք. Այլէմէզեան: Ան ընդգծեց կարեւորութիւնը մասնակցութեան եւ միասնական աշխատանքին: Ան օրհնեց մատղաջ սերունդը եւ յորդորեց ներկաները նայիլ միշտ դէպի ապագան, որպէսզի արժանի ըլլանք կոչուելու Մայիս 28-ի սերունդներուն յաջորդները:

Հանդիսութիւնը փակուեցաւ Համագայինի «Սիփան» պարախումբին հայկական պարերով եւ սկաուտական խումբին ազգային երգերով, որոնցմէ ետք տեղի ունեցաւ ժողովրդային խրախճանք, Յովիկ Մանուչեանի յեղափոխական երգերուն ստեղծած խանդավառ մթնոլորտով:

Թղթակից ՔՈՒՓԸՐԹԻՆՕ

Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի Հարաւային Ծովածոցի յանձնախումբին կազմակերպութեամբ, Կիրակի, 19 Ապրիլին, Սանթա Քլարա հովիտի Գուփըրթինօ քաղաքի Ս. Անդրէաս եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Ցեղասպանութեան նուիրուած ոգեկոչման ձեռնարկ մը, մասնակցութեամբ շրջանի Հ.Մ.Ը.Մ-ի «Անի» մասնաճիւղին, Սիլիքոն հովիտի Հ.Բ.Ը.Մ-ին, ՀՕՄ-ի «Ակնունի» մասնաճիւղին եւ Հ.Յ.Դ. «Սարդարապատ» կոմիտէութեան:

Ամբողջութեամբ լեցուն սրահին մէջ տեղի ունեցած ձեռնարկին գլխաւոր բանախօսներն էին Մ. Նահանգներու Ներկայացուցիչներու Տան անդամ Աննա էշու եւ Սանթա Քլարա գաւառի վերահսկիչներու խորհուրդի անդամ Ճօ Սիմիթեան: Ներկայ էին նաեւ շրջանի 10 քաղաքներու քաղաքապետները եւ այլ պաշտօնատարներ:

Բացման աղօթքը կատարեց ծուխի հոգեւոր հովիւ Տաթեւ Ա. Քհնյ. Յարութիւնեան, որմէ ետք հանդիսավար

Մարօ Քէշիշեան ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

2-3 Մայիսի շաբաթավերջին, Հ.Մ.Ը.Մ-ի Ֆրեզնոյի «Սասուն» մասնաճիւղի կեանքէն ներս մարզական յաջողութիւններու նոր էջ մը բացուեցաւ: Այդ օրերուն, մասնաճիւղին պասքեթպոլի միջ-մասնաճիւղային 20-րդ մարզախաղերն էին կազմակերպուած «Քլովիս Իսթ Հայ Սքուլ»ի մարզադաշտերուն վրայ: Սովորական այդ շաբաթավերջը տօնական օրերու վերածուած էր 14 տարեկանէն վար պատանիներու համար, որոնք իրենց ծնողներուն ընկերակցութեամբ փութացած էին Ֆրեզնօ, նորանոր յաղթանակներ արձանագրելու



Հ.Մ.Ը.Մ.Ի «ԱՆԻ» ՄԱՍՆԱԾԻԴԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՔՈՒՓԸՐԹԻՆՕ ՔԱՂԱՔԻ ԱՊՐԻԼԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄԻՆ

Արա Երկանեան բարի գալուստ մաղթեց բոլորին եւ Հ.Մ.Ը.Մ.ի «Անի» մասնաճիւղին սկաուտները հրաւիրեց կատարելու դրօշակի արարողութիւնը: Մ. Նահանգներու եւ Հայաստանի քայլերգները երգեց Լոուի Փանոսեան, դաշնակի ընկերակցութեամբ Գարինա Համբարձումովայի:

Ապա, Հ.Մ.Ը.Մ.ի «Անի» մասնաճիւղի անդամներն ու Ս. Անդրէաս եկեղեցւոյ Անահիտ Նալվարեան վարժարանի աշակերտները ներկայացուցին երգերու եւ բանաստեղծութիւններու փունջ մը, որմէ ետք ջութակահար Յակոբ Նազարեան կատարեց «Բարի Արագիլ»ը, դաշնակի ընկերակցութեամբ՝ Գարինա Համբարձումովայի: Այնուհետեւ, Լոուի Փանոսեան ներկայացուց երկու երգ՝ «Հայոց Հովիկ» եւ «Երեւան-էրբունի»:

Գեղարուեստական յայտագիրէն ետք ցուցադրուեցաւ Հայոց Յեղասպանութեան մասին վաւերագրական ժապաւէն մը՝ «Geoffrey Robertson QC



Discusses The Armenian Genocide»ը, որմէ ետք տպաւորիչ ելոյթներ ունեցան գլխաւոր բանախօսները՝ Աննա էշու եւ Ճօ Սիմիթեան: Աւարտին, ներկաները կազմակեր-

պիչներուն տրամադրած ծաղիկները գետեղեցին Ս. Անդրէաս եկեղեցւոյ բակին մէջ տեղադրուած խաչքարին առջեւ:

ՖՐԵՋՆՈՅԻ «ՍԱՍՈՒՆ» ՄԱՍՆԱԾԻԴԻՆ ՊԱՍՔԵԹՊՈՒԻ ՄԻՋ-ՄԱՍՆԱԾԻԴԱՅԻՆ 20-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ

համար մարզական իրենց աշխարհէն ներս:

Փոքր դասակարգերու համար կազմակերպուած այս մարզախաղերը տարեկան մեծագոյն ձեռնարկներ են Հ.Մ.Ը.Մ.ի «Սասուն» մասնաճիւղին համար: Հիւրընկալ մասնաճիւղի հրաւէրին ընդառաջած էին շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի, Սան Ֆրանսիսքոյի, Փասատինայի «Ազատամարտ», Կլէնտէյլի «Արարատ», Սան Ֆեռնանտո Հովիտի «Մասիս» եւ Լա Քրեսենթայի «Շանթ» մասնաճիւղերէն 45 երկսեռ խումբեր,

14 եւ 12 տարեկան ու վար դասակարգերէն: Տիրապետող ներկայութիւն էին Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղի կապոյտ տարազաւորները, որոնք 21 խումբերով կը մասնակցէին այս նախաձեռնութեան:

Եզակի այս մրցաշարքը, մրցող խումբերուն ուժերը չափելէ անկախ, նաեւ գեղեցիկ առիթ մը հանդիսացաւ մասնակից մարզիկ-մարզկուհիներուն եւ անոնց ծնողներուն՝ մօտէն ծանօթանալու եւ ընկերային գեղեցիկ միջավայր մը ստեղծելու:

Եռուզեռի մէջ էր «Քլովիս Իսթ Հայ Սքուլ»ի շրջափակը, որուն գլխաւոր երկու փակ մարզադաշտերը մեղուափեթակներու վերածուած էին, կարելիութիւն ստեղծելով վեց խումբերու միաժամանակ կատարելու իրենց մրցումները:

Շրջանային մարզական խորհուրդը, անկախ անկէ, որ իր կարեւոր ներդրումը ունեցած էր այս մարզախաղերու կազմակերպման մէջ, հոն ներկայ էր իր ներկայացուցիչ եղբ. Հրաչ Արզումանեանի անձով: Մարզադաշտ այցելեցին



Եւ մրցումներուն մօտէն հետեւեցան Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեան, քոյր Մարօ Քէշիշեան եւ եղբ. Փիէր Մանուկեան: Մարգարաշտ այցելեց նաեւ ծանօթ Հ.Մ.-Ը.Մ.ական եւ Ֆրեզնոյի մէջ Հայաստանի Հանրապետութեան պատուոյ հիւպատոս Պերճ Աբգարեան:

Նոյն օրը, կէսօրէն ետք ժամը 2-ին, մրցումները կանգ առին: Ներկաները մէկ վայրկեան լռութեամբ յարգեցին յիշատակը Հայոց Յեղասպանութեան մէկ ու կէս միլիոն նահատակներուն:

Մարգարաշտերու պատերուն վրայ գետեղուած Հ.Մ.-Ը.Մ.ի խորհրդանիշը՝ նուիրուած Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին, եւ «Կը յիշեմ ու կը պահանջեմ» կարգախօսը շատ բան կ'ըսէին ներկաներուն: Ապա Պերճ Աբգարեան՝ հայերէնով, իսկ «Սասուն» մասնաճիւղի վարչական եղբ. Յակոբ Օհաննէսեան՝ անգլերէնով, ընթերցեցին այս առիթով պատրաստուած Շրջանային Վարչութեան պատգամը, որուն քար լռութեամբ հետեւեցան ներկաները: Պատգամին մէջ Շրջանային Վարչութիւնը կը շեշտէր, թէ պէտք է անպատիժ չձգել ոճրագործ թուրքը եւ պէտք է պահանջել հայութեան արդար իրաւունքները:

«Մենք երբեք պէտք չէ մոռնանք մեր պատմութեան դաժանագին այս սեւ էջը, որ իրականացաւ 24 Ապրիլ 1915-ին, մարդասպան թուրքին կողմէ, ոչնչացնելու համար մեր ստեղծագործ ժողովուրդը: Ան ջարդեց հայ ժողովուրդը, որպէսզի ոչնչացնէ մեզ, սակայն չյաջողեցաւ: Հայ ժողովուրդը ծլեցաւ ու ծաղկեցաւ, կերտեց սերունդներ,

որոնց լաւագոյն օրինակները դո՛ւք էք: Հօրացէ՛ք Ֆիդիքապէս ու հոգեպէս: Լա՛ւ սորվեցէք մեր լեզուն եւ մշակոյթը, այցելեցէ՛ք Հայաստան, ազգասիրութեամբ լեցուեցէք, որպէսզի յաւերժ ապրի մեր ազգը», ըսուած էր պատգամին մէջ:

Ձտումի առաջին օրուան հետաքրքրական մրցումներէն ետք, Կիրակի, 3 Մայիսին տեղի ունեցան կիսաւարտական եւ աւարտական մրցումները՝ ելեկտրականացած մթնոլորտ մը ստեղծելով մարգարաշտերուն վրայ, ուր միայն հուռաներ ու երկարաշունչ ծափողջոյններ կը լսուէին: Ախոյեանութեան բաժակները յանձնուեցան իւրաքանչիւր աւարտական մրցումէ ետք՝ մեծ ոգեւորութիւն ստեղծելով մարգարաշտերուն վրայ: Յաղթող ու պարտուող խումբերը գիրկընդխառնուեցան հարազատ քոյր-եղբայրներու նման, Նաւասարդեան մարգարաշտերուն դարձեալ տեսնուելու հաստատակամութեամբ:

Մարգարաշտերը վերջ գտան Կիրակի յետմիջօրէին: Մասնակիցները գոհունակութեամբ մեկնեցան տուն, յաջորդ մրցումներուն դարձեալ հանդիպելու վճռակամութեամբ:

ՄԱՐՁԱԽԱՂԵՐՈՒ ԱԽՈՅԵԱՆ ՄԱՍՆԱԾԻՒՂԵՐԸ

- Դասակարգ 1 (14 տարեկան եւ վար), տղաք Կլէնտէյլի «Արարատ» (1) մասնաճիւղ
- Դ2 (14 տարեկան եւ վար), տղաք Կլէնտէյլի «Արարատ» (4) մասնաճիւղ
- Դ1 (12 տարեկան եւ վար), տղաք Կլէնտէյլի «Արարատ» (1) մասնաճիւղ
- Դ2 (12 տարեկան եւ վար), տղաք Կլէնտէյլի «Արարատ» (4) մասնաճիւղ
- Դ1 (14 տարեկան եւ վար), աղջիկներ Կլէնտէյլի «Արարատ» (1) մասնաճիւղ
- Դ2 (14 տարեկան եւ վար), աղջիկներ Լա Քրետենթայի «Շանթ» մասնաճիւղ
- Դ1 (12 տարեկան եւ վար), աղջիկներ Կլէնտէյլի «Արարատ» (1) մասնաճիւղ
- Դ2 (12 տարեկան եւ վար), աղջիկներ Ֆրեզնոյի «Սասուն» մասնաճիւղ

Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԻՒՄԻՍԱՅԻՆ ՔԱԽՖՈՐՆԻՈՅ ՄԱՍՆԱԾԻՂԵՐՈՒ ԴԵԿԱՎԱՐՄԱՆ ՍԵՄԻՆԱՐ ՄԱՆ ՖՐԱՆՍԻՍԳՈՅԻ ՄԷՋ

Մարո Քէշիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

Շաբաթ, 16 Մայիս 2015-ի կէսօրէ առաջ ժամը 11-ին, Հ.Մ.Ը.Մ.Ի Սան Ֆրանսիսքոյի կեդրոնին մէջ տեղի ունեցաւ Շրջանային դաստիարակչական յանձնախումբին կազմակերպած դեկավարման սեմինարը՝ Հ.Մ.Ը.Մ.Ի Հիւսիսային Քալիֆորնիոյ Սան Ֆրանսիսքոյի, Սանթա Բարբարայի «Անի» եւ Ուոլնամթ Քրիքի «Կարս» մասնաճիւղերու վարչական կազմերուն համար: Սեմինարին իրականացման համար Սան Ֆրանսիսքո ժամանած էին Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեան, քարտուղար քոյր Մարո Քէշիշեան եւ դաստիարակչական յանձնախումբի ատենապետ եղբ. Արամ Պէքարեան:

Սեմինարին առաջին նիւթը՝ «Հ.Մ.Ը.Մ.ական դեկավարը 2015-ին եւ այնուհետեւ» հետաքրքրականօրէն ներկայացուց տոքթ. Շահէ Ենիգոմչեան, որ Լիբանանի եւ Սան Հոզէի մէջ ձեռնհասօրէն վարած է զանազան պատասխանատու պաշտօններ՝ մասնաճիւղի, Շրջանային եւ կեդրոնական մակարդակներու վրայ: Ներկայիս ան Հ.Մ.Ը.Մ.Ի կեդրոնական Վարչութեան ծրագրաւորման յանձնախումբի անդամ է եւ մեծագոյն ներդրումը ունեցած է անոր ռազմավարական ծրագրաւորումի աշխատանքներուն մշակման մէջ:

Տոքթ. Շահէ Ենիգոմչեան իրաւ դեկավարի մը յատկութիւններուն մասին խօսելով ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ական դեկավարի տիպարը, որ պէտք է յատուկ գուրգուրանք ցուցաբերէ իրեն հոգածութեան յանձնուած սերունդներուն, լաւապէս հասկնայ Հ.Մ.Ը.Մ.Ի առաքելութիւնն ու արժէքները, իր համայնքին եւ մասնաճիւղին կարիքները, իր ծառայած միութեան մարտահրաւէրները դի-



մագրաւելու կարողութիւնը, դրական նորութիւններ բերէ, նիւթական դրժարութիւնները յաղթահարելու միջոցներ որոնէ եւ իր պատրաստած սերունդներով կարենայ միութիւնը յաջողութեան առաջնորդել:

Շրջանային Վարչութեան երկամեայ գործունէութիւնը ներկայացուց ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեան: Ան առաջին հերթին ընդգծեց Շրջանային Վարչութեան գլխաւոր աշխատանքը հանդիսացող մասնաճիւղերու հզօրացումն ու միջ-մասնաճիւղային աշխատանքներու քաջալերանքը: Եղբայրը շեշտեց նաեւ հաւաքական աշխատանքի կարեւորութիւնը, ներկայացուց այդ կարեւորութիւնը իմաստաւորող յանձնախումբերու դրութիւնը, բացատրեց Նաւասարդեան 40-րդ մարզախաղերու մանրամասնութիւնները եւ եզրակացուց՝ կեդրոնանալով շրջանի սկաուտական եւ մարզական թեւերու աշխատանքներու կարեւորութեան վրայ:

Կէսօրուան ճաշի դադարէն ետք, «Հ.Մ.Ը.Մ.Ի դերակատարութիւնն ու անոր կարեւոր դերը համայնքէն ներս» նիւթին մասին դասախօսեց վաստակա-

շատ Հ.Մ.Ը.Մ.ական, Հ.Մ.Ը.Մ.Ի, պետական եւ միութենական զանազան պարզեւատրումներու արժանացած եղբ. Ժիրայր Սարգիսեան, որ այս տարի արժանացաւ Շրջանային Վարչութեան «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական 2015» կոչումին:

Եղբայրը Հ.Մ.Ը.Մ.Ի հիմնադրութեան պատմական հանգրուաններուն վրայ հպանցիկ ակնարկ մը նետելով ներկայացուց անոր դերը մեր իրականութեան մէջ, յատկապէս շեշտելով նորահաս սերունդներու դաստիարակութեան, հայապահպանման եւ մարդասիրական աշխատանքներու մարզերէն ներս ունեցած անոր դրական ազդեցութիւնը: «Հ.Մ.Ը.Մ.Ի ուժը մարդկային ուժն է», հաստատեց եղբայրը:

Այնուհետեւ, մասնակիցները մեծ հետաքրքրութեամբ եւ կեդրոնացումով հետեւեցան Հարաւային Քալիֆորնիոյ Հ.Մ.Ը.Մ.Ի մասնաճիւղերու դաստիարակչական սեմինարին դուկտ. Վիգէն Յովսէփեանի ներկայացուցած նիւթը: Անոնք ծանօթացան հայ ժողովուրդի վերջին 100-ամեակի զանազան հանգրուաններուն, ուր մատնանշուած է հա-



յուլիան ուղին՝ Հայրենիքի մէջ եւ Սփիւռքի տարածքին, Հայոց Յեղասպանութեան արհաւիրքէն մինչեւ Հայաստանի եւ Արցախի անկախացումը, Հայ Դատն ու քաղաքական պահանջատիրութիւնը, որուն ցայտուն օրինակը «Արդարութեան քայլարշալ»ն էր:

Անոնք արդար գտան դասախօսին այն համոզումը, թէ «Քալիֆորնիան պէտք է հայկական պահանջատիրութեան մայրաքաղաքը դառնայ»:

Քարտուղարի մը պարտականու-

թիւնները եւ պարտաւորութիւնները բացատրեց քարտուղար քոյր Մարո Քէչիչեան: «Ժողովներու ատենագրութիւնները այնպիսի ձեւով մը պէտք է արձանագրուին, որ եթէ բացականեր կարդան զանոնք, իրենք զիրենք ժողովներու մէջ պէտք է զգան», ընդգծեց ան:

Օրուան վերջին նիւթը ներկայացուց Շրջանային Վարչութեան անդամ եւ IT-ի պատասխանատու եղբ. Արման Գիլիճեան: Ան կարեւոր տեղեկութիւններ փոխանցեց «Google Drive»-ի եւ համացան-

ցային զանազան հաղորդակցութիւններու մասին՝ մեծ հետաքրքրութիւն ըստեղծելով մասնակիցներուն մօտ:

Փառըր փոյնթով ներկայացուած բոլոր նիւթերու աւարտին առիթ տրուեցաւ հարցումներու եւ պատասխաններու:

Սեմինարը վերջ գտաւ երեկոյեան ժամը 5-ին:

ՔՈՅՐ ՇԱՐԼԻՆ ԿՈՉԱԼԵԱՆ ԿԸ ՍՏԱՆՁՆԷ Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆՔՆԵՐՈՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՄԲԱՊԵՏՈՒՀԻԻ ՊԱՇՏՕՆԸ

Մարո Քէչիչեան
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

14 Մայիսին, սկսած անկախ յատուկ արարողութեամբ մը, Հ.Մ.Ը.Մ.ի Կլենտէյլի «Արարատ» մասնաճիւղի երկար տարիներու արծուիկ խմբապետուհի դոկտ. Շարլին Կոչալեան, սկսած անկախ ղեկավարի իր երդումը տալով, պաշտօնապէս ստանձնեց Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային խմբապետուհի պաշտօնը:

Այս կարեւոր պատասխանատուութեան երդումն ու պաշտօնը յանձնեց Շրջանային Վարչութեան սկսած անկախ բաժնի ներկայացուցիչ եղբ. Արտո Ղազարեան:

Արարողութեան ներկայ գտնուեցան շրջանի մասնաճիւղերու խմբապետները, վարչութիւններու սկսած անկախ բաժնիներու ներկայացուցիչները, ինչպէս նաեւ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեան, անդամներ՝ քոյր Մարո Քէչիչեան, եղբայրներ Արամ Երեմեան եւ Փիէր Մանուկեան:

Դոկտ. Շարլին Կոչալեան անդամ է Հ.Մ.Ը.Մ.ի Կլենտէյլի «Արարատ» մասնաճիւղին, ուր ան սկսած անկախ իր առաջին քայլերը առած ու հասակնե-



տած է իբրեւ արծուիկ: Կոչալեան հերթաբար արժանացած է արծուիկական բոլոր կարգերուն: Մանկական աշխարհը իր սիրտին շատ մօտիկ ըլլալով, տասը տարի ստանձնած է մասնաճիւղի արծուիկ խումբերու պատասխանատուութիւնը, արժանանալով համապատասխան աստիճաններուն եւ պաշտօններուն:

Կոչալեան մագիստրոսի իր աստիճանը ստացած USC համալսարանէն Public Health (Հանրային առողջու-

թիւն)՝ մարդկութեան այնքան անհրաժեշտ մասնագիտութեան մէջ: Նոյն ճիւղի դոկտորայի աստիճանին արժանացած է Loma Linda համալսարանէն: Ներկայիս ծրագրաւորումի տնօրէն է (program manager) բազմամիլիոն տոլար արժող դրամաշնորհի մը, որ կ'ընդգրկէ 14 հիւանդանոցներ եւ համայնքային հիմքով 30 կազմակերպութիւններ Լոս Անճելըսի մէջ: Իր աշխատանքը գլխաւորաբար կեդրոնացած է մօր եւ զաւակի առողջութեան վրայ: Կոչալեան կ'աշխատի վտանգի ենթակայ եւ բազմաթիւ մարտահրաւէրներ ղիմագրաւող ընտանիքներու հետ: Ան կը դասախօսէ նաեւ մագիստրոսի մակարդակի դասընթացներու:

Սկսած անկախ տպաւորիչ արարողութենէն ետք, տեղի ունեցաւ նորանշանակ Սկսած անկախ խորհուրդի կազմին հետ Շրջանային Վարչութեան առաջին ժողովը, որուն մասնակցեցան նաեւ արարողութեան մասնակից քոյր-եղբայրները:

Ժողովը բացուած յայտարարելով, Արտո Ղազարեան ներկայացուց Շրջանային Սկսած անկախ խորհուրդի անդամները՝ Մերուժան Կիտցինեան (ատենապետ), Շարլին Կոչալեան, Շողեր

Արիսեան, Ռիթա Կիլիսէսէրեան եւ Յովիկ Ազատխանեան:

Այնուհետեւ ժողովը վարեց Մերուժան Կիտցինեան, որ իր եւ իր կազմին անունով շնորհակալութիւն յայտնելէ ետք ժողովականներուն, իրարու ծանօթանալու առիթ տուաւ եւ ապա ներկայացուց Սկաուտական Խորհուրդի մշակած երկամեայ ծրագիրը, իրագործելի կարելոր աշխատանքները եւ մասնաճիւղերէն ակնկալութիւնները: Միասնական աշխատանքի կարելորութենէն մեկնած, տեղւոյն վրայ ինքնակամ առաջարկով որոշուեցան խորհուրդի յանձնախումբերու պատասխանատուները:

Առաջին հերթին անհրաժեշտ նկատուեցաւ մէկտեղել շրջանի մասնաճիւղերու անուանացանկերն ու գործունէութեանց ծրագիրները, որպէսզի նկատի առնուին նաեւ Շրջանային Սկաուտական Խորհուրդի երկամեայ ծրագիրին մէջ:

Ժողովականները շեշտը դրին ըսկաուտական շարքերուն ազգային դաստիարակութիւն ջամբելու կարելո-


րութեան վրայ, ինչպէս՝ «Մերոպ Մաշտոց», «Կրօնական», «Ազգային» եւ «Հայ Դատ» շքանշաններու տիրացման քաջալերումը մասնաճիւղերէն ներս: Անոնք նաեւ առողջ մօտեցումով արժեւորումը կատարեցին 2014-ի ամրան Հայաստանի մէջ կազմակերպուած համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումին, որուն մասնակցած էին ժողովականներէն շատերը: Անոնք մեծ ոգեւորութեամբ մատնանշեցին բանակումին յաջող իրագործումը եւ իրենց գոհունակութիւնը յայտնեցին մայրենի հողին վրայ նման բանակումի մը մասնակցած ըլլալու համար:

Այնուհետեւ, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեան լայն բացատրութիւններ տուաւ քոյր մասնաճիւղերու յանձնախումբին նախաձեռնած եւ վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Բաֆֆի Իսբէնճեանի յիշատակին նուիրուած ծրագիրին մասին: Ծրագիրին միջոցով առիթ կ'ընծայուի երկու խմբապետ-խմբապետուհիներու, երեք ամիսով, Հայաստանի մէջ գործնական ծրագիրներու մաս-

նակցելու Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի կամ հասարակական այլ կազմակերպութիւններու հետ: Այս ծրագիրը լաւ առիթ մը պիտի հանդիսանայ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտ ղեկավարներուն, որպէսզի մօտէն ծանօթանան մեր հայրենիքին, հայրենի հայութեան եւ իրենց ազգային պարտականութիւնը կատարեն անոնց նկատմամբ:

Սկաուտական կարգերու գծով, ժողովը կարելոր գտաւ ամերիկեան ըսկաուտութեան հետ գործակցիլը եւ անոր «Eagle Scout» կարգին հետեւիլը: Իսկ «Արարատեան» կարգին աւելի մեծ թիւով խմբապետ-խմբապետուհիներու մասնակցելու հեռանկարով, անհրաժեշտ գտաւ կազմել համապատասխան յանձնախումբ մը:

Սկաուտական այս կարելոր հանդիպումը վերջ գտաւ ուշ երեկոյեան: Ժողովականները ոգեւորութեամբ մեկնեցան տուն, իրենց յանձնուած սկաուտական թեւին առաւել զարկ տալու հաստատակամութեամբ:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Yerevan
 32-38, Hanrabadoutian Street,
 Yerevan 375010, Armenia
 Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
 sales@europelhotel.am

www.europelhotel.am

Reservations

Studio YIKEN 2007 F465



ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ ԵԶՐԱՓՈՒԵՑԱՆ ՄՆՆԱԽԸՆԹԱՑ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ

Կիրակի, 5 Յուլիս 2015-ի երեկոյեան, հանդիսաւոր կերպով իրենց աւարտին հասան Հ.Մ.Ը.Մ-ի Նաւասարդեան 40-րդ մարզախաղերը, որոնք կը վայելէին ծանօթ Հ.Մ.Ը.Մ-ականներ՝ Վարանդ եւ Հուրի Մելքոնեաններու պատուոյ նախագահութիւնը:

Փակման հանդիսութիւնը սկիզբ առաւ ժամը 5-ին, Պրըմինկհամ Հայ Աթուլի Փուլթպոլի մարզադաշտին վրայ, բազմահազար Հ.Մ.Ը.Մ-ասէրներու ներկայութեամբ եւ աւելի քան երեք հազար մարզիկ-մարզիկուհիներու մասնակցութեամբ:

Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի դրօշները անկարգելներով դաշտ ներկայացան՝ մեծ հետաքրքրութիւն ստեղծելով մասնակիցներուն մօտ: Օրուան խօսնակներն էին Նորա Չափարեան եւ Թուխման Խաչատուրեան, որոնք պատուոյ հարթակ հրաւիրեցին Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանը, պատուոյ նախագահներ՝ Վարանդ եւ Հուրի Մելքոնեանները, «2015-ի Տիպար Հ.Մ.Ը.Մ-ական» եղբ. Ժիրայր Սարգիսեանն ու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեանը, որոնք Շրջանային Վարչութեան կարգ մը անդամներու ընկերակցութեամբ պատուոյ հարթակ առաջնորդուեցան: Ապա, ներկաները հրաւիրուեցան վայրկեան մը յոտնկայս յարգելու յիշատակը Հայոց Յեղափոխութեան մէկու ու կէս միլիոն նահատակներուն, որոնց անմար յիշատակին նուիրուած էին Նաւասարդեան մարզախաղերը:

Այնուհետեւ, Շրջանային Վարչութեան ատենապետին արտօնութեամբ եւ Հ.Մ.Ը.Մ-ի «Արարատ» մասնաճիւղի միաւորի խմբապետներէն եղբ. Շանթ Միրզայեանի հրահանգով հանդիսութիւնը բացուած յայտարարուեցաւ: Հ.Մ.Ը.Մ-ի դրօշակա-





Կիրճերու խումբը հաստատակամ քալուածքով մարզադաշտ ներկայացուց Մ. Նահանգներու, Հայաստանի, Արցախի, Քալիֆորնիոյ, Հ.Մ.Ը.Մ.ի եւ Նաւասարդեանի դրօշները՝ Շրջանային Վարչութեան շեփորախումբին առաջնորդութեամբ: Անոնք պատուոյ հարթակին դիմաց պատուի կանգնեցան եւ քարացած ունկնդրեցին Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգները, որոնք նոյնպէս նուագուեցան Շրջանային Վարչութեան շեփորախումբին կողմէ:

Պաշտօնական հիւրերու ներկայացումէն ետք, իր սրտի խօսքը փոխանցեց Կլէնտէյլի քաղաքապետարանի քարտուղար Արտաշէս (Արտի) Քացախեան: Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան պատգամը փոխանցեց ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեան, իսկ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեանը՝ եղբ. Յակոբ Թիւֆէնքեան:

Հայրական իր օրհնութիւնները փոխանցեց թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան:

Հ.Մ.Ը.Մ.ի Տրեզնոյի «Սասուն» մասնաճիւղէն փոքրիկն Ռուբէն Համամճեան մեներգեց Թալէաթ Փաշայի ահաբեկման նուիրուած «Գինի լից» երգը, որուն յաջորդեց հանդիսութեան գլխաւոր առանցքը հանդիսացող տողանցքը: Շրջանի 17 մասնաճիւղերու սկաուտական եւ մարզական խումբերն ու անդամները, իրենց վարչութիւններու գլխաւորու-



թեամբ եւ Շրջանային Վարչութեան շեփորախումբի ազգայնաշունչ քայլեղանակներու ստեղծած խանդավառութեամբ՝ տողանցեցին, բարեւեցին ներկաները, պատուոյ հարթակէն ստանձնեցին իրենց յաղթանակի բաժակները եւ հպարտութեամբ մարզադաշտին վրայ գրաւեցին իրենց տեղերը:

Հանդիսութիւնը վերջ գտաւ Նաւասարդեանի դրօշը պատուոյ նախագահ տէր եւ տիկին Վարանդ եւ Հուրի Մելքոնեաններուն յանձնումով:

Այնուհետեւ, Նաւասարդեան խրախճանքը շարունակուեցաւ փառատօնի շրջափակին մէջ, ուր արդէն իսկ չորս օրեր նոյն ուրախ մթնոլորտը կը տիրէր շրջանի արուեստագէտներու հրամցուեցած երաժշտական գեղեցիկ յայտագիրներով:

Լուսանկարները՝ Պերժ Ծամճեանի





Մարտ Բեռլին
ԼՈՍ ԱՆՃԵԼՏՍ

Ուրբաթ, 3 Յունիսի երեկոն անմոռանալի երեկոյ մը հանդիսացաւ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանի պատմութեան մէջ: Աւելի քան 800 Հ.Մ.Ը.Մ.ականներ եւ համակիր հայորդիներ փութացած էին «Պեվըրլի Հիլթըն» պանդոկի սրահը, իրենց յարգանքը մատուցանելու Հ.Մ.Ը.Մ.ին, որ մեր իրականութեան մէջ հանդիսացաւ այն եզակի կազմակերպութիւնը, որ նահատակ սերունդներու ժառանգորդները համախմբեց, ոյժ եւ կորով տուաւ անոնց,

որպէսզի հայ ժողովուրդը առողջ սերունդներով գոյատեւէ: Ներկայ էին Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Խաչիկ Մուրատեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Յակոբ Թիւֆէնքճեան եւ Վիգէն Դաւթեան, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ դոկտ. Վիգէն Յովսէփեան, նահանգային խորհուրդի անդամներ Խաչո Աշաճեան եւ Մաթիոս Տըպապնէ, հանգստեան կոչուած դատախազ Տիգրան Թաւրիգեան, Մոնթեպելլոյի քաղաքապետ Ճէք Հաճինեան, Հայաստանի Ազգային Ողիմպիական Կոմիտէի անդամ Ալպէր Պոյաճեան, Լիբանանի Ողիմպիական Կոմիտէի եւ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Վաչէ Ծատուրեան, քոյր կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, համակիրներ, Հ.Մ.Ը.Մ.ականներ եւ բազմաթիւ հիւրեր:

Ձեռնարկին բացումը կատարուեցաւ Շրջանային Վարչութեան նուագախումբին մուտքով, որ մեծ խանդավառութիւն ստեղծեց սրահին մէջ: Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգները մեներգեց Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» մասնաճիւղի միաւորի խմբապետուհիներէն քոյր Իվանա Գրիգորեան:

Սեղաններու օրհնութիւնը եւ իր հայրական օրհնութիւնները փոխանցեց Արեւմտեան Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան, որ նաեւ շնորհաւորեց Հ.Մ.Ը.Մ.ը՝ Նաւասարդեան բազմաձաւալ մարզախաղերու կազմակերպման ուրախ առիթով:

Օրուան հանդիսավարութիւնը ձեռնհասօրէն կատարեց ծանօթ Հ.Մ.Ը.Մ.ական Չարլի Կալեան, որ օրուան նախաձեռնութիւնը ընդգծելով շնորհաւորեց շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը, օրուան պարգեւատրեալները եւ ըսաւ. «Դար մը առաջ, նոյն քաղաքի երկու տարբեր խումբեր, երկու տարբեր ծրագիրներ մշակեցին: Մէկը ծրագրեց բնաջնջել հայ ազգը, իսկ երկրորդը՝ պահպանել հայ երիտասարդութիւնը: Առաջինը նպատակ ունէր բնաջնջել չորս հազար տարուան մշակոյթ մը, իսկ երկրորդը՝ իր երիտասարդութիւնը առաջնորդել դէպի խոստմնալից ապագայ: Ծրագիրներէն մէկը ծանօթ է իբրեւ 20-րդ դարու առաջին Յեղասպանութիւնը, իսկ միւսը՝ Հ.Մ.Ը.Մ. կազմակերպութիւնն է:



ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ 40-ՐԴ ՄԱՐԶԱՆԱՂԵՐՈՒ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

Ծրագիրներէն մէկը իր գոհերը առաջնորդեց դէպի մահ, իսկ երկրորդը շարունակեց առաջնորդել իր երիտասարդութիւնը դէպի յաղթանակ: Այս երեկոյ, 100 տարի ետք, համախմբուած ենք հոս վկայելու, թէ մենք առողջ եւ աշխոյժ հայ ազգն ենք, եւ մեզ բնաջնջելու ծրագիրը ձախողած է», բացատրեց Կարեան եւ ներկաները հրաւիրեց խմելու յաջող ծրագիրին համար՝ Հ.Մ.Ը.Մ.ի կենացը, եւ հետեւելու անոր պատմութիւնը ներկայացնող տեսերիզին, որմէ ետք Շրջանային Վարչութեան պատգամը փոխանցեց ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեան:

Մարսէլեան ներկաները ողջունելէ ետք հաստատեց, որ «40 տարիներու ընթացքին մարգախաղերու հսկայական ծաւալումը, մարզիկներու եւ խումբերու թիւի աճը, նոր մարգատեսակներու կիրարկումը եւ, ինչո՞ւ չէ, զօրաշարժի ենթարկուած մեր շատ սիրելի անդամներն ու համակիրները, Նաւասարդեան մարգախաղերը դարձուցած են Սփիւռքի ամենամեծ եւ ամենակազմակերպուած ձեռնարկը»:

Հ.Մ.Ը.Մ.ի 97 տարիներու ընթացքին դիմագրաւած մարտահրաւէրներուն անդրադառնալով, եղբ. Մարսէլեան գոհունակութիւն յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը իր կողքին միշտ ունեցած է փորձառու եւ երէց քոյր-եղբայրներ,

որոնց խրատներն ու անսակարկ նուիրումը Հ.Մ.Ը.Մ.ը հասցուցած են լաւագոյնին, որուն ցայտուն օրինակներէն մէկն է եղբ. Ժիրայր Սարգիսեան:

Եղբ. Մարսէլեան այս առիթով շնորհակալութիւն յայտնեց Վարանդ եւ Հուրի Մելքոնեաններուն Հ.Մ.Ը.Մ.ի 40-րդ Նաւասարդեան մարգախաղերու նախագահութեան ստանձնման համար, իսկ երախտագիտական խօսքեր՝ Պետիկ եւ Մարո Ֆերմանեաններուն, որոնք մէկ տարի շարունակ Հ.Մ.Ը.Մ.ի ձեռնարկներն ու աշխատանքները փայլեցուցին իրենց ներկայութեամբ, նիւթապէս եւ բարոյապէս:

Ապա շնորհաւորելով Հ.Յ.Դ.ի 125-ամեակը՝ եղբ. Մարսէլեան ընդգծեց անոր կարեւորութիւնը հայ իրականութենէն ներս եւ վստահեցուց, որ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը ամրապնդուած կը մնայ «Կը յիշեմ եւ կը պահանջեմ» կարգախօսով:

Այնուհետեւ, սահիկներու ցուցադրութեամբ ներկայացուցաւ վաստակաշատ եղբայր Ժիրայր Սարգիսեանի Հ.Մ.Ը.Մ.ական կեանքը: Իր հերթին, եղբ. Մարսէլեան ընդգծելով եղբոր միութենական կարողութիւններն ու Հ.Մ.Ը.Մ.ին մատուցած ծառայութիւնները՝ բեմ հրաւիրեց եւ անոր յանձնեց «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ի տիտղոսը հաստատող յուշատախտակը՝ առ ի գնահատանք





միութենական երկար տարիներու իր բեղուն գործունէութեան: Ներկաները յոտնկայս եւ երկարաշունչ ծափողջոյններով ընկալեցին եղբայր Ժիրայր Սարգիսեանի պարգեւատրումը:

Ընդունելով իր պարգեւատրումը՝ եղբայր Սարգիսեան ընդգծեց, որ «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ականի պատիւին արժանանալը յատուկ վարձատրութիւն մը ըլլալով հանդերձ, բարոյական ծանր վերարկու մըն է ստացողին ուսերուն՝ արժանանալու համար այդ հանգամանքին: Պատնէչի վրայ մնալը հոլովոյթ մըն է լաւագոյնին ձգտելու՝ ներքին ապրումներէ մղուած եւ թելադրուած, առաւելագոյնս նպաստելու պատկանած կազմակերպութեանը իտէալներուն, դաւանանքին եւ իր կոչումին»:

Ապա, Հ.Մ.Ը.Մ.ը մեր հաւաքական կեանքի պտղատու ծառը նկատելով՝ եղբ. Սարգիսեան կոչ ուղղեց հայ ծնողներուն իրենց զաւակներուն բարոյական նկարագրին կերտումը վստահելու Հ.Մ.Ը.Մ.ին, որուն շարքերուն միացող իւրաքանչիւր անհատ կը դառնայ բոլորին հարազատը:

Եղբ. Սարգիսեան իր եւ ընտանիքին անունով շնորհակալութիւն յայտնելէ ետք Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան, պատգամը եզրափակեց ըսելով. «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ականի այս պատիւը կը բաժնեկցիմ Հ.Մ.Ը.Մ.ական քոյր-եղբայրներուս հետ, որոնք խոնարհաբար եւ սրտով կը ծառայեն այս մեծ կազմակերպութեան: Նաեւ՝ այս պահուս նաւասարդեան մարգախաղերուն ծառայող կամաւորներուն: Անսպառ եռանդ բոլորին, փառք ու պատիւ Հ.Մ.Ը.Մ.ին»:

«Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ի իմաստալից պատգամէն ետք տեղի ունեցաւ մոմավառութիւն եւ ճաշի հիւրասիրութիւն:

Ճաշի դադարէն ետք ծրագիրը շարունակուեցաւ Վարանդ Մելքոնեանի Հ.Մ.Ը.Մ.ական կեանքն ու յաջողութիւնները ներկայացնող տեսերիքի ցուադրութեամբ, որմէ ետք եղբ. Մանուէլ Մարսէլեան բեմ հրաւիրեց Հ.Մ.Ը.Մ.ի 39-րդ Նաւասարդեան մարգախաղերու պատուոյ նախագահներ Պետիկ եւ Մարո Ֆերմանեանները՝ փոխանցելու իրենց սրտի խօսքը: Պետիկ Ֆերմանեան շնորհակալութիւն յայտնեց իրենց ընծայած պատիւին համար, որ լաւ յիշատակներ դրոշմեց իր եւ իր

ընտանիքի սրտերուն մէջ: Ան շնորհակալորելով օրուան պարգեւատրեալները, հաստատեց, որ Հ.Մ.Ը.Մ.ին ծառայելը պարտականութիւն է եւ այդ իմաստով կոչ ուղղեց ներկաներուն, որպէսզի իրենց զաւակներուն սիրտերուն մէջ դրոշմեն Հ.Մ.Ը.Մ.ի «Բարձրացի՛ր-բարձրացուր» կարգախօսը:

Այնուհետեւ տեղի ունեցաւ պատուոյ նախագահութիւնը խորհրդանշող եռագոյն երիզներու փոխանակումը: Վարանդ եւ Հուրի Մելքոնեանները, երկարաշունչ ծափողջոյններու հետ, պաշտօնապէս ստանձնեցին Հ.Մ.Ը.Մ.ի 40-րդ Նաւասարդեան մարգախաղերու պատուոյ նախագահութիւնը:

Ստանձնելով իր պատասխանատուութիւնը, Վարանդ Մելքոնեան առաջին հերթին շնորհակալութիւն յայտնեց իրեն եւ կնոջ՝ Հուրիին ընծայուած պատիւին համար: Ապա անդրադառնալով 35 տարիներ առաջ Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղի իր անդամակցութեան եւ այնուհետեւ Հ.Մ.Ը.Մ.ականի անցած ուղիին, երախտագիտութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ին, որ իր կեանքի յաջողութիւններուն մաս կազմած է եւ ծանօթացուցած է զինք իր համայնքին, որուն շնորհիւ կարողացած է ծառայել շատ մը կազմակերպութիւններու, ինչպիսիք են՝ Հայ Դատը, Հայ Մշակութային Միութիւնը, ՀԵԴ-ն, ՀՅՄԸ-ը, Հ.Յ.Դ.Ն., Համագգայինը, Հ.Բ.Ը.Մ.ը եւ հայկական մեր վարժարանները:

«Հոս ենք շատ պարզ, սակայն միաժամանակ հեղինակաւոր կարգախօսին՝ «Բարձրացի՛ր-բարձրացուր»ին համար: Յաջողի՛ր, բայց մի մոռնար արմատներդ: Ձեր բոլորին նման այս պատգամն է, որ Հ.Մ.Ը.Մ.ը արմատաւորած է մէջս երիտասարդ տարիքիս», ընդգծեց Մելքոնեան եւ համոզում յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը միաւորող եւ մտերմացնող կազմակերպութիւն է, առանց տարիքի խտրութեան եւ մէկ նպատակի համար՝ պատրաստել դաստիարակուած, հզօր ու ազգասէր սերունդներ:

Այս ընդհանրական նպատակը շեշտուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ը քաջալերող շատ մը կազմակերպութիւններու կողմէ, ինչպիսիք է Հ.Յ.Դ.Ն., որ Հ.Մ.Ը.Մ.ի ողնասիւնն է, որուն համար Մելքոնեան շնորհակալութիւն յայտնեց Հ.Յ.Դ.Ն.ի զօրակցութեան համար եւ շնորհակալորեց անոր 125-ամեակը:

«Տարիներու ընթացքին, Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանը շատ մը հանգրուաններէ անցաւ, սակայն չեմ կրնար մտածել ժամանակաշրջան մը մեր պատմութեան մէջ, որ եղաւ այնքան ճակատագրական, քան վերջին տասնամեակը, որուն ընթացքին մենք ունեցանք նոր կեդրոններ եւ մարգաղաշտեր հարաւային շրջանի Կլէնտէյլ, Փասստինա, Լոս Անճելըս, Պրոպէնք եւ Սան Ֆեռնանտո հովիտին մէջ: Մենք ունեցանք մեր բանակավայրը Ֆրէյզըր Փարքի մէջ, մեր գլխաւոր կեդրոնատեղին՝ Իկլոյ Ռաքի մէջ: Այս բոլորը կը նպաստեն մեր ապագայ սերունդներու բազմացման, զարգացման եւ հզօրացման», հպարտութեամբ շեշտեց Մելքոնեան:

Եղբայրը միաժամանակ յիշեցուց, որ Հ.Մ.Ը.Մ-ի աշխատանքը չէ աւարտած, փոփոխութիւններ պիտի կատարուին, միաժամանակ պահպանելով մեր ավանդութիւններն ու տեսլականը՝ ծառայել եւ զարգացնել մեր երիտասարդութիւնը:

Այս առիթով Մելքոնեան կոչ ուղղեց երիտասարդութեան զարգանալ, չմոռնալ իր արմատները եւ շարունակել վառ պահել Հ.Մ.Ը.Մ-ի ջահը: Իսկ ապագայ ղեկավարութիւնը խրախուսեց կառչած մնալու Հ.Մ.Ը.Մ-ի տեսլականին՝ ընդգծելով. «Զեզմէ իւրաքանչիւրդ մեր դեսպաններն էք: Զեր պատասխանատուութիւնն է մղում տալ, մարգել եւ ոգեւորել ձեր շուրջը, որպէսզի անոնք առնչուած մնան հայութեան»: Իսկ Հ.Մ.Ը.Մ-ի նուիրատուներուն եւ կամաւորներուն թելադրեց

սորվիլ, սորվեցնել եւ իրենց համայնքին ծառայել:

Եզրակացնելով՝ եղբայրը շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ-ի Նաւասարդեան ՅԾ-րդ մարգախաղերու պատուոյ նախագահ Պետիկ եւ Մարո Ֆերմանեաններուն՝ իրենց ազնւութեան եւ Հ.Մ.Ը.Մ-ին յարատեւ զօրակցութեան համար, շնորհաւորեց «Տիպար Հ.Մ.Ը.Մ-ական» եղբ. Ժիրայր Սարգիսեանը, անցեալի պատուոյ նախագահներն ու «Տիպար Հ.Մ.Ը.Մ-ական»ները, յաղթանակի պարահանդէսը լաւապէս կազմակերպած յանձնախումբն ու անոր ատենապետ եղբ. Գօգօ Պալեանը եւ բոլոր անոնց, որոնք նպաստեցին Նաւասարդեանի աշխատանքներուն յաջողութեան:

Մելքոնեան զոյգին Նաւասարդեան 40-րդ մարգախաղերուն ստանձնումը մեծապէս գնահատուեցաւ ներկաներուն կողմէ:

Վարանդ Մելքոնեանի տպաւորիչ պատգամէն ետք երեկոն խանդավառեց Ալըն Ճըխի նուագախումբը՝ յաղթանակի միջնորդութ մը ստեղծելով սրահին մէջ: Մասնակիցները ուշ երեկոյեան մեկնեցան տուն, յաջորդ օրը նոյն յաղթանակի միջնորդութով ներկայ գտնուելու Նաւասարդեանի փառատօնին ու փակման շքեղ հանդիսութեան:

Լուսանկարները՝ Պերժ Ծամճեանի



Pink Kimberley™
AUSTRALIA

PinkKimberley.com.au



Diamonds beyond rare

Pink Kimberley is an exquisite blend of natural Australian pink diamonds from the Argyle mine and white diamonds surrounded by 18ct gold. The jewellery designs are unique and distinctive. Australian Argyle pink diamonds are the rarest & most precious diamonds in the world.



ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ 40-ՐԴ ՄԱՐԶԱՆԱՂԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ ՈԳԵՒՈՐԵՑ ԲՈՒՈՐ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Մարո Քէշիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

Տարուան 12 ամիսներուն ալ եռուն է Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանի մարզական կեանքը: Նաև սարդեան մարզախաղերուն ձգած յաղթանակի ուրախ միջնուրտը տակաւին չէ աւարտած: Գեղեցիկ այս նախաձեռնութեան մասնակից մասնաճիւղերը, իրենց անդամ մարզիկ-մարզկուհիներուն արձանագրած յաջողութիւններուն փառքը անգամ մը եւս կ'ուզեն ապրիլ: Սակայն այս անգամ՝ առանձին, իրենց մասնաճիւղերուն մէջ կազմակերպելով յատուկ ձեռնարկներ, գնահատելու համար մասնաճիւղի վերելքին նպաստած իրենց մարզական խումբերը: Ահա՛ գնահատելի աշխատանք մը, որ մեծապէս կ'ոգեւորէ Հ.Մ.Ը.Մ-ական մարզիկը եւ զայն աւելի կը կապէ իր մասնաճիւղին, ղեկավարներուն եւ հասակակից մարզիկ-մարզկուհիներուն:

Պէտք է ընդգծել, որ Նաևսարդեան



մարզախաղերը եզակի երեւոյթ մըն են Արեւմտեան Մ. Նահանգներու հայկական կեանքէն ներս. անոնց 40-րդը իրագործուեցաւ այս տարի՝ պատուոյ նախագահութեամբ ծանօթ Հ.Մ.Ը.Մ-ականներ՝ Վարանդ եւ Հուրի Մելքոնեաններուն:

Նաևսարդեան աշխատանքը Շրջանային Վարչութեան տարեկան մեծագոյն ծրագիրն է, որ մասնաճիւղերէն անկախ՝ նաեւ շրջանի հայուլթիւնը

կ'ոգեւորէ, ի տես Հ.Մ.Ը.Մ-ական երիտասարդութեան արձանագրած յաղթանակներուն, ի տես այն հայաշունչ միջնուրտին, որ կը համախմբէ շրջանի հայուլթիւնը՝ մարզական մրցումներով, Յաղթանակի պարահանդէսով, չորսօրեայ փառատօնով եւ այս բոլորը եզրափակող փակման շքեղ հանդիսութեամբ:

Այս տարի Նաևսարդեան մարզախաղերը ընդգրկեցին պասքեթպոլի, վոլիպոլի, ֆութպոլի, փինկ-փոնկի, թենիսի, թեթեւ ատլէթի, լողի, ճատրակի եւ սոֆթպոլի մարզաձեւերը: Շուրջ երեք հազար մարզիկ-մարզկուհիներ մասնակցեցան յիշեալ մարզաձեւերու բոլոր դասակարգերու մրցումներուն: Ակնյայտ է, որ ամէնէն լայն ժողովրդականութիւնը կը վայելէ պասքեթպոլի մարզաձեւը, սակայն պէտք է ընդգծել, որ այս տարի, Շրջանային մարզական խորհուրդը լուրջ աշխատանք տարած էր հետաքրքրութիւն շարժելու այլ մարզաձեւերու նկատմամբ եւս, ինչպիսին էր պարագան վոլիպոլին, որուն այս տարի մասնակցեցան 14 խումբեր,

եւ Ֆուլթայոյին, որուն մասնակից խումբերուն թիւը հասաւ 46-ի: Ուրախալի էր հեռաւոր մասնաճիւղերու մասնակցութիւնը յատկապէս լողի եւ թեթեւ ատլէթի մրցումներուն: Իսկ մարզախաղերուն մէջ իբրեւ նորութիւն ընդգրկուած սոֆթպոլի մարզաձեւը բաւական հետաքրքրութիւն ստեղծեց մասնաճիւղերուն մէջ: Միւս կողմէ, անհատական մրցումները եւս, մարզական որոշ շրջանակ մը հետաքրքրելով, բաւական ոգեւորիչ էին:

Մարզաձեւերու ախոյեանութեան բաժակներու յանձնումը, փակման հանդիսութեան տողանցքին ընթացքին, մեծապէս ուրախացուց յաղթող մասնաճիւղերն ու հանդիսականները: Իսկ Նաւասարդեան շքերթը առաջնորդող Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբը, ազգայնաշունչ քայլեղանակներու նուագումով եւ կոկիկ ներկայութեամբ թնդացուց ամբողջ մարզադաշտը՝ արժանանալով

ներկաներու երկարաշունչ ծափողջոյններուն:

Աննախընթաց յաջողութեամբ տեղի ունեցաւ Նաւասարդեանի յաղթանակի պարահանդէսը, աւելի քան 800 հայորդիներու մասնակցութեամբ: Յուզող Հ.Մ.Ը.Մ-ի պատմական տեսերիկները՝ տէր եւ տիկ. Պետիկ եւ Մարօ Ֆերմանեաններէն, տէր եւ տիկ. Վարանդ եւ Հուրի Մելքոնեաններուն պատուոյ նախագահութեան փոխանցումը, «2015-ի Տիպար Հ.Մ.Ը.Մ-ական» եղբ. Ժիրայր Սարգիսեանի տիտղոսին յայտարարութիւնն ու իմաստալից պատգամները, մեծապէս տպաւորեցին ներկաները:

Ընդգծելի յաջողութիւն էր նաեւ 2-5 Յուլիսին իրագործուած փառատօնը, որուն մասնակցեցան շրջանի բոլոր արուեստագէտները՝ աննախընթաց զրուարթ մթնոլորտ մը ստեղծելով «Պրոմինկհամ»-ի շրջափակէն ներս: Իսկ մասնաճիւղերու կրպակներուն մէջ վա-

ճառուող համադամ ճաշերը երկար շարքերու առիթ ստեղծեցին:

Բնականաբար, այս բոլորը իրագործուեցան Հ.Մ.Ը.Մ-ական հարիւրաւոր հաւատաւոր կամաւորներու կողմէ, որոնք Շրջանային մարզական խորհուրդին եւ Շրջանային Վարչութեան փոխատենապետ եղբ. Սագօ Կարապետեանի գլխաւորած Նաւասարդեանի կազմակերպիչ յանձնախումբին կողքին, երկար ժամեր տրամադրեցին՝ կազմակերպելու համար բազմամարդ այս մարզախաղերը: Բոլոր կամաւորներն ալ շնորհաւորելի են իրենց նուիրումին ու զոհողութիւններուն համար:

Երախտապարտութեամբ պէտք է խօսիլ նաեւ շրջանի հայութեան, կազմակերպութիւններուն եւ համակիրներուն մասին, որոնք իրենց ներկայութեամբ քաջալերեցին Հ.Մ.Ը.Մ-ի հոգածութեան յանձնուած սերունդները:

ՏԱՐՈՒՄՆ «ՏԻՊԱՐ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ»Ը՝ ԵՂԲ. ԺԻՐԱՅՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Մարօ Քէշիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութիւնը բարձր գնահատելով Հ.Մ.Ը.Մ-ի Ման Ֆրանսիսքոյի մասնաճիւղի անդամ, վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ-ական եղբ. Ժիրայր Սարգիսեանի երկար տարիներու բեղուն գործունէութիւնը, համեստ ու միշտ ծառայելու պատրաստակամութիւնը Հ.Մ.Ը.Մ-ի շարքերէն ներս, 2015 տարուան «Տիպար Հ.Մ.Ը.Մ-ական»-ի տիտղոսը շնորհեց անոր:

Արժանաւոր այս եղբոր միութենական կեանքին աւելի մօտէն ծանօթանալու եւ անոր օրինակելի տիպարը եւ մանաւանդ անշահախնդիր նկարագիրը

հանրութեան ներկայացնելու նպատակով, վերջերս, Հ.Մ.Ը.Մ-ի Ման Ֆրանսիսքոյի մասնաճիւղի կեդրոնին մէջ հանդիպում մը ունեցանք անոր հետ: Հանդիպումը դժուար եղաւ, որովհետեւ եղբայրը համեստաբար կը նախընտրէր լուռ մնալ իր կատարած ազգային պարտականութիւններուն նկատմամբ: Սակայն եղբոր Հ.Մ.Ը.Մ-ականի կեանքին որոշ չափով ծանօթ ըլլալով, դժուարութեամբ կարգ մը տեղեկութիւններ իրմէ քաղելով՝ կը ներկայացնեմք այս տիպար Հ.Մ.Ը.Մ-ականը, որուն միութենական եւ մարդկային տիպարը բարի օրինակ ծառայած է զինք ճանչցող անհատներուն:

Եղբ. Ժիրայր Սարգիսեան ծնած է



Պէյրուիթ, Լիբանան: Նախնական ուսումը ստացած է էշրէֆիէի Ս. Յակոբ Ազգային վարժարանին մէջ, իսկ երկրորդականը՝ նոյն քաղաքի Կեդրոնական Բարձրագոյն Վարժարանին մէջ:

Եղբոր հաստատումով, ազգային իր կրթութիւնը ստացած է Հ.Յ.Դ. «Ազատամարտ» (էշրէֆիէի) ակումբին եւ Հ.Մ.Ը.Մ-ի շարքերուն մէջ:



Եօթը տարեկանին միացած է Հ.Մ.Ը.Մ-ի շարքերուն՝ իբրև գայլիկ, եւ այնուհետեւ, իր հետեւողական եւ բծախնդիր աշխատանքին շնորհիւ հասած է սկառուտական բարձրագոյն պաշտօններուն՝ գայլիկ պատասխանատու, երէց սկառուտ, մասնաճիւղի խմբապետ, իսկ 1966-ին Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրոսթի շրջանի ընդհանրապետ: Ան մասնակցած է Յունաստանի մէջ կազմակերպուած համաշխարհային 11-րդ եւ Եգիպտոսի համաարաբական երկիրներու ճամպորհներուն: Իսկ 1990-ին նշանակուած է Հ.Մ.Ը.Մ-ի համագաղութային 4-րդ ընդհանուր բանակումի (Յունաստան) ընդհանուր խմբապետ:

Մեծ հետաքրքրութիւն ունենալով ոսկերչութեան ասպարէզին նկատմամբ, եղբայրը իր հետեւողականութեան եւ այս մարզին ունեցած իր նուիրումին շնորհիւ մեծ յաջողութիւններու հասած է եւ այսօր սեփականատէրն է Giroux Fine Jewelry ոսկերչական մեծ հաստատութեան:

1968-ին ամուսնացած է Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի պասքեթպոլի ծանօթ աստղերէն քոյր Սրբուկ Օհանեանի հետ: Անոնք բախտաւորուած են երեք զաւակներով՝ Թամար, Սագօ եւ Զարեհ, որոնք եւս հետեւելով իրենց ծնողներու օրինակին՝ գործօն մասնակցութիւն բերած են եւ կը շարունակեն բերել Հ.Մ.Ը.Մ-ի Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղի աշխատանքներուն: Անոնք իրենց հայրը հարստացուցած են Հ.Մ.Ը.Մ-ական հինգ թոռներով:

Եղբ. Ժիրայր իրաւ միութենականի իր կեցուածքով, արդար դատողութեամբ եւ դիմացինը միշտ արժեւորելու գիտակցութեամբ, պատասխանատու զանազան պաշտօններ վարած է Հ.Մ.Ը.Մ-ի մէջ:

Ան մասնակցած է Հ.Մ.Ը.Մ-ի բազմաթիւ Շրջանային Ժողովներու թէ՛ Լիբանանի եւ թէ՛ Արեւմտեան Մ. Նահանգներու մէջ, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ-ի բազմաթիւ Պատգամաւորական ընդհանուր Ժողովներու: Ղեկավարի իր հմուտ կարողութիւններուն շնորհիւ, ան եր-



կար տարիներ եղած է Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան անդամ փոխ ատենապետ, Կեդրոնական Վարչութեան անդամ, իսկ 1992-ին, կնոջ՝ Սրբուկին հետ ստանձնած է Հ.Մ.Ը.Մ-ի Նաւասարդեան 17-րդ մարզախաղերուն պատուոյ նախագահութիւնը:

Հանդարտ, Ժպտաղէմ եւ համբերատար անձնաւորութիւն մըն է եղբ. Ժիրայր Սարգիսեան, որ հայրական իր գուրգուրոտ մօտեցումով եւ միութենական հարցերը լուծելու բացառիկ կարողութեամբ դարձած է բոլորին «սիրելի եղբայր Ժիրայր»:

Ան իր յաջողութիւններուն միշտ մասնակից դարձուցած է իր շրջապատը: Եղբայրը մարդասիրական իր օգնութիւնը երբեք չէ զլացած իր ծննդավայրին, մեր սիրելի հայրենիքին, Արցախին ու Զաւախքին: Նիւթական եւ բարոյական մեծ ջանք թափած է Հ.Մ.Ը.Մ-Հ.Ա.Ս.Կ-ի Բիւրականի բանակավայրի ապահովման գործին մէջ: Իսկ հայրենիքին առաւել օգտակար հանդիսանալու նպատակով, ան սեփականատէրն է Երեւանի «Եուրոփ» պանդոկին:

Եղբոր նուիրումը անպատասխան չէ մնացած. մեր աղբիւրներուն համաձայն՝ ան բազմաթիւ անգամներ պարգեւատրուած է: Յիշենք գլխաւորները.

- Հ.Հ. Մշակոյթի, երիտասարդութեան հարցերու եւ մարմնամարզի նախարարութեան կողմէ Հայաստանի սկառուտական շարժման զարգացման բերած իր նպաստին համար:

- Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչու-

թեան «Արժանեաց» շքանշանին:

- Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան «Ծառայութեան» շքանշանին:

- Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի Կեդրոնական Վարչութեան գնահատանքին՝ իր ազգին օգտակար հանդիսանալուն համար:

- Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 80-ամեակին առիթով, իր անդամակցած Հ.Մ.Ը.Մ-ի Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղի վարչութեան «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական» տիտղոսին:

Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան բազմաթիւ գնահատանքներուն, իրեն եղած բոլոր դիմումներուն դրական արձագանգելուն ուրախ առիթով:

Հ.Մ.Ը.Մ-ի հանդէպ ունեցած սէրն ու յարգանքը մղած են զինք ստանձնելու Հ.Մ.Ը.Մ-ի Սան Ֆեռնանտո Հովիտի «Մասիս» մասնաճիւղի մարզադաշտի հովանաւորութիւնը:

«Հ.Մ.Ը.Մ-ը ինձի համար ապրում է եւ կը կարծես թէ աւանդութեան մը մաս կը կազմես: Այդ աւանդութիւնը կ'ապրիս եւ կ'ուզես, որ ուրիշներն ալ այդ ապրումը ունենան: Հ.Մ.Ը.Մ-ը նաեւ կոչ մըն է երիտասարդութեան, որպէսզի կարենայ հաւաքական յիշողութիւն մը ունենալ եւ անոր մէջ ինքզինք տեսնել՝ ազգային եւ ընկերային իմաստով», ընդգծեց եղբ. Ժիրայր Սարգիսեան եւ իր երախտագիտութիւնը յայտնեց Շրջանային Վարչութեան եւ Հ.Մ.Ը.Մ-ին նման պատիւ մը իրեն շնորհելուն համար, որ նաեւ որոշ պարտաւորութեան տակ կը դնէ զինք:

Կը շնորհաւորենք եղբ. Ժիրայր Սարգիսեանը, «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական-2015» տիտղոսին արժանանալուն ուրախ առիթով, որուն արժանի է ան անկասկած:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԾՐՋԱՆԻ 37-ՐԴ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Մարո Քէշիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

Կիրակի, 31 Մայիս 2015-ին, Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւմտեան Մ. Նահանգներու «Գէորգ Անտոնեան» կեդրոնի սրահին մէջ տեղի ունեցաւ շրջանի Հ.Մ.Ը.Մ.Ի 37-րդ Շրջանային ներկայացուցչական ժողովը, մասնակցութեամբ 72 ընտրեալ ներկայացուցիչներու եւ հրաւիրեալներու: Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան լիազօր ներկայացուցիչն էր եղբ. Վիգէն Դաւթեան: Ներկայ էր նաեւ Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Յակոբ Թիւֆէնքճեան: Ժողովի առաջին բաժինին մասնակցեցաւ շրջանի Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Վիգէն Յովսէփեան:



Ժողովը վայրկեան մը յոտնկայս յարգեց յիշատակը Հայոց Յեղասպանութեան մէկուկէս միլիոն նահատակներուն, ինչպէս նաեւ մեզմէ յաւէտ հեռացած Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Միհրան Շիմշիրեանի եւ շրջանի Հ.Մ.Ը.Մ.ականներու:

Ներկայութեան եւ լիազօրագիրներու ստուգումներէն եւ ժողովը օրինաւոր նկատելի ետք ժողովականները ընտրեցին քուէախոյզ եւ բանաձեւի յանձնախումբերը: Շրջանային Վարչութեան քարտուղար քոյր Մարո Քէշիշեան ընթերցեց Կեդրոնական Վարչութեան քառամեայ գործունէութեան ամփոփ տեղեկագիրը:

Ապա, ժողովը զբաղեցաւ ներկայացուցչական ժո-

ղովի գլխաւոր առանցքը հանդիսացող Հ.Մ.Ը.Մ.Ի ընդհանուր կանոնագրի յօդուածներու փոփոխութեան առաջարկներու քննարկումով:

Յետմիջօրէին ժողովը քննեց եւ վաւերացուց մասնաճիւղերէն եկած եւ ժողովականներուն կողմէ ներկայացուած ծրագրաւորումի, սկաուտական, մարզական, «Մարզիկ» պաշտօնաթերթի, կայքէջի, կազմակերպական, տնտեսական եւ Հ.Մ.Ը.Մ.ը յուզող այլ հարցերու շուրջ առաջարկները:

Պէտք է ընդգծել, որ ժողովականները յիշեալ բոլոր բաժանումներուն մէջ շեշտեցին միութեան կազմակերպական, ազգային դաստիարակութեան եւ այժմէական միջոցները օգտագործելու կարեւորութիւնը:

Այնուհետեւ, ժողովը ընտրեց հետեւեալ 10 պատգամաւորները, որոնք շրջանը պիտի ներկայացնեն Հ.Մ.Ը.Մ.Ի 11-րդ Պատգամաւորական Ժողովին, որ պիտի գումարուի 7-12 Սեպտեմբեր 2015-ին, Հայաստանի մէջ. Մհեր Դաւիթեան, Շահիկ Աղբաբեան, Վիգէն Աբէլեան, Մարո Քէշիշեան, Գառնիկ Աբրահամ-





եան, Յովիկ Պետեւեան, Փիէր Մանուկեան, Արամ Թովմաս, Արմէն Աբրահամեան եւ Սիմա Կարապետեան:

Փոխ ներկայացուցիչներ ընտրուեցան եղբայրներ Րաֆֆի Վարժապետեան եւ Սազօ Կարապետեան:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան խօսքը փոխանցեց ներկայացուցիչ

Վիգէն Դաւթեան, որ առաջին հերթին շնորհաւորեց ժողովականները, որոնք համբերութեամբ, հոգատարութեամբ եւ բժախնդրութեամբ քննեցին հարցերը: Ան գնահատեց Շրջանային Վարչութիւնը այս կարեւոր ժողովը լաւապէս կազմակերպած ըլլալուն համար, իսկ շնորհաւորելով ընտրուած պատգամա-

ւորները, հաւաստիացուց, որ անոնք շրջանը լաւապէս պիտի ներկայացնեն Հ.Մ.Ը.Մ.ի բարձրագոյն ժողովին:

Ժողովը վերջ գտաւ յետմիջօրէի ժամը 4:30-ին, «Յառաջ նահատակ» քայլերգով:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՇՐՋԱՆԻ 39-ՐԴ ՆԵՐԿԱՅԱՅՈՒԹՅՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Թղթակից ՈՒԱԹԸՐԹԱՈՒՆ

6-7 Յունիսի շաբաթավերջին, Պոսթընի Ուաթըրթաուն շրջանի «Բարգէն Սիւնի» ակումբին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու շրջանի 39-րդ Ներկայացուցչական ժողովը, մասնակցութեամբ Փրովիտընսի, Նիւ Ճըրզիի, Նիւ Եորքի, Ուաշինկթընի, Ֆիլատելֆիոյ, Շիքակոյի, Տիթթոյիթի եւ Պոսթընի մասնաճիւղերու ներկայացուցիչներուն: Ներկայ էին նաեւ Շրջանային Սկստական Խորհուրդի եւ մարզական յանձնախումբի անդամները, Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Վահէ Թանաչեանի եւ Շրջանային Վարչութեան անդամներուն կողքին:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը կը ներկայացնէր եղբ. Հրաչ Մեսրոպեան, իսկ Ամերիկայի Արեւելեան շրջանի Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէն՝ Ժան Աւետիսեան:

«Յառաջ նահատակ» քայլերգով կատարուեցաւ ժողովին բացումը:



Առաջին հերթին, ժողովը ընտրեց իր առժամեայ դիւանը եւ լիազօրագիրներու ստուգման յանձնախումբը: Ժողովի օրինականութիւնը հաստատելէ ետք ընտրուեցաւ մնայուն դիւան, որ բաղկացաւ հետեւեալներէ՝ ատենապետներ եղբայրներ Սարգիս Դարբինեան եւ Շանթ Ժամկոչեան, ատենադպիրներ՝ քոյր Այտա Պարսումեան եւ եղբ. Խաչիկ Գաֆաֆեան: Ապա, ժողովը կազմեց բանաձեւի եւ քուէախոյզ յանձնախումբերը:

Օրակարգի յաջորդ կէտերով ժողովը ունկնդրեց Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան քառամեայ գործունէութեան ամփոփ տեղեկագիրը եւ կարգ մը ճշդումներէ ետք, վաւերացուց զայն: Կարդացուեցաւ նաեւ Կեդրոնական Վարչութեան քառամեայ գործունէութեան ամփոփ տեղեկագիրը: Կատարուեցան լուսաբանական հարցումներ, որոնց սպառիչ կերպով պատասխանեց Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ՝ եղբ. Հրաչ Մեսրոպեան:

Ապա, ժողովը Հ.Մ.Ը.Մ.ի 11-րդ Պատգամաւորական ժողովի օրակարգին քննութիւնը կատարելով որդեգրեց համապատասխան բանաձեւեր, որոնք պիտի փոխանցուին յառաջիկայ Պատգամաւորական ժողովին:

Կատարուեցաւ պատգամաւորներու ընտրութիւն: Արա Պարսումեան, Թորոս Ոսպիկեան, Ռազմիկ Փանոսեան եւ Շանթ Ժամկոչեան պիտի ներկայացնեն Արեւելեան Մ. Նահանգներու շրջանի Հ.Մ.Ը.Մ.ը, 7-12 Սեպտեմբեր 2015-ին, Հայաստանի մէջ կայանալիք Հ.Մ.Ը.Մ.ի 11-րդ Պատգամաւորական ժողովին:

Յայտնենք, որ Ներկայացուցչական ժողովի բացման թէ փակման ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի եւ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչները փոխանցեցին իրենց պատգամները:

Ժողովը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՆԹԻԼԻԱՍԻ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒՆ ԱՅՆԹՈՒՐԱՅԻ ՈՐԲԱՆՈՑ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՊՐԻԼԵԱՆ ՏՊԱԽՈՐԻՉ ՔԱՅԼԱՐՇԱԻԸ



Թղթակից ԱՆԹԻԼԻԱՍ

Կիրակի, 12 Ապրիլին, Ճիւնիի Ս. Յարութիւն եկեղեցւոյ անուանակոչութեան օրը ըլլալով՝ Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի մասնաճիւղի սկաուտները ներկայ գտնուեցան արարողութեան, որմէ ետք անոնք ուղղուեցան եկեղեցւոյ սրահը, ուր ղիտեցին Այնթուրայի որբանոցին մասին երկու տեսերիզ՝ առաջինը հայերէն, իսկ երկրորդը՝ անգլերէն:

Ժամը 11.00-ին սկաուտները փոխադրակառքերով մեկնեցան Այնթուրայի Սէն Ժոզէֆ դպրոց (նախկին որբանոցը), մօտէն ծանօթանալու անոր եւ յարգանքի իրենց տուրքը մատուցանելու հայ որբերու յիշատակին հոն կանգնեցուած խաչքարին:

Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները դիմաւորեց Սէն Ժոզէֆ դպրոցի տնօրէն հայր Սըմաան Ժամիլ: Ան դպրոցին բակին մէջ,

ուր կը գտնուի տխրահուշակ աշտարակ մը եւ ժամացոյց մը, սկաուտներուն բացատրեց վայրին բարոյական եւ պատմական կարեւորութիւնը՝ իբրեւ մարդ, իբրեւ հայ եւ իբրեւ քրիստոնեայ: Ան յիշեց, թէ հոն ապրած որբերը ինչպիսի՛ անմարդկային պայմաններու մէջ ապրած են. շատեր մահացած են հիւանդութիւններու եւ համաճարակներու պատճառով:

Տնօրէնը սկաուտները առաջնորդեց նաեւ այն վայրը, ուր օրին՝ շուրջ 100 տարի առաջ, արիւնարբու ճեմալ փաշան նկարուած է հայ որբերուն հետ: Հոն բացատրեց, թէ այս որբանոցը ո՛չ թէ մարդկային առումով պատասպարան մըն եղած է, այլ՝ մանուկները թրքացընելու կեդրոն մը:

Տնօրէնին բացատրութիւններէն ետք, սկաուտները այցելեցին հայ որբերու աճիւնները ամփոփող շիրիմը եւ անոր վրայ կանգնեցուած յիշատակի խաչքարը:



Շեփորախումբի ընկերակցութեամբ, սկաուտները գեղեցիկ եւ յուզիչ նուագով «Տէրունական աղօթք»ը երգելով պահ մը յիշեցին, զգացին եւ ապրեցան նոյն վայրին մէջ իրենց նախնիներուն ապրած դառն օրերը: Հայր Սըման ժամիլ եւս աղօթեց ու ըսաւ. «Չմոռնա՛ք ձեր անցեալը, անցեալը մոռցող ժողովուրդը ապագայ չ'ունենար»:

ԱՊՐԻԼԵԱՆ ՏՊԱԽՈՐԻՉ ՔԱՅԼԱՐՇԱԻԸ

Շաբաթ մը ետք, Կիրակի, 19 Ապրիլի առաւօտեան ժամը 11.00-ին, անսովոր իրարանցում մը կը տիրէր Մըզսերի հայհանոծ թաղամասին մէջ: Մասնաճիւղին սկաուտական խումբերը՝ մոկլի, գայլիկ, արծուիկ, արի, արենոյշ, երէց եւ պարմանուհի համախմբուած էին ակումբին առջեւ եւ կը պատրաստուէին քայլարշալի:

Մասնաճիւղին Սկաուտական Խորհուրդը եւ խումբապետական կազմը կազմակերպած էին քայլարշալ մը՝ Մըզսերէն մինչեւ Անթիլիասի մայրավանք, ընկերակցութեամբ ծնողներու, բարեկամներու եւ թաղեցիներու: Հրաւիրուած էին Մըզսերի եւ Անթիլիասի

քաղաքապետութիւններու եւ պատկան մարմիններու ներկայացուցիչները: Խումբերը տպաւորիչ եւ զուսպ կերպով քայլեցին՝ մասնաճիւղին շեփորախումբին առաջնորդութեամբ:

Սկաուտները բարձրացուցած էին պաստառներ, որոնք հայերէն, անգլերէն, ֆրանսերէն եւ արաբերէն լեզուներով կը կրէին հետեւեալ գրութիւնները՝ «Յեղասպանութեան 100-ամեակ», «Յիշէ եւ պահանջէ», «Չենք մոռնար» եւ այլն:

Այս նախաձեռնութեամբ սկաուտները կը նպատակադրէին շրջանի հայ եւ օտար բնակիչներուն ցոյց տալ, թէ Ապրիլեան ոգեկոչումներուն իրենք եւս պէտք է մասնակից դառնան:



Սկաուտական Խորհուրդը պատրաստած էր մանիշակագոյն յատուկ վզակապեր, որոնց վրայ տպուած էին 100-ամեակի խորհրդանիշ անմոռուկը եւ Հ.Մ.Ը.Մ-ի շուշանածաղիկը:

Վանք հասնելէ առաջ, խումբերը սկաուտական տողանցք կատարեցին Անթիլիասի հրապարակէն մինչեւ Մայր Տաճարի մուտք: Ապա, Հ.Մ.Ը.Մ-ականի վայել կեցուածքով, բոլորը շարուեցան Յեղասպանութեան նահատակներուն նուիրուած մատրան դիմաց: Ներկաներու շարքին էին Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական

Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Վաչէ Նաճարեան, Անթիլիասի քաղաքապետական խորհուրդի անդամ Հայկ Ոսկերիչեան, հիւրեր եւ պատկան մարմիններու ներկայացուցիչներ:

Այս առիթով գետեղուեցան երկու ծաղկեպսակներ՝ մասնաճիւղին վարչութեան եւ Սկաուտական Խորհուրդին անունով: Նուագուեցան քայլերգները եւ մահերգ: Խօսքեր արտասանեցին արենոյշ Արզնի Մեսրոպեան եւ երէց Սարհատ Հանտեան: Անոնք շեշտեցին, որ Հ.Մ.Ը.Մ-ական սկաուտները գիտակից են իրենց վստահուած պարտականութեան եւ կը խոստանան իրենց կարելին ընել հայկական արժէքներու տէր կանգնելու, յիշելու եւ պահանջելու համար:

Խօսքերէն ետք, քայլարշալին մասնակից սկաուտները ներկայ գտնուեցան Պատարագին եւ ստացան Ս. Հաղորդութիւն:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻՐԱՆԱՆԻ ՍԿԱՈՒՏՆԵՐԸ ՈԳԵԿՈԶԵՑԻՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶՈՀԵՐՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԸ

Թղթակից
ՊԵՅՐՈՒԹ

23

Ապրիլ 2015-ին, Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի մասնաճիւղերու աստիճանաւորական կազմերը, խմբապետական կազմերը, Շրջանային խմբապետութիւնը, մասնաճիւղերու Սկաուտական Խորհուրդներն ու Շրջանային Սկաուտական Խորհուրդը, Պէյրուսի, Պուրճ Համուտի, Անթիլիասի, Ժըտէյտի, Ռաուտայի, Պաուշրիէի մասնաճիւղերը եւ Հ.Մ.Ը.Մ.Ի շեփորախումբը ներկայացնող 160 անդամներով այցելեցին Պիքֆայայի նահատակաց յուշարձան՝ յարգանքի իրենց տուրքը մատուցանելու համար մեր մէկ ու կէս միլիոն նահատակներու յիշատակին:

Յետմիջօրէի ժամը 6.15-ին սկաուտները արդէն հասած էին Պիքֆայայ եւ շարքերով պատրաստ կը սպասէին եկեղեցւոյ 100 դղանջներուն: Ապա, անոնք ուղղուեցան նահատակաց յուշարձան, ուր վայրկեան

մը լռութեամբ յարգեցին Մեծ Եղեռնի զոհերու յիշատակը:

Յուշարձանին առջեւ խօսք առաւ Շրջանային ըՍկաուտ. Խորհուրդի ատենապետ քոյր Ալին Քէչէպաշեան: Ան ըսաւ, որ թէեւ Հայոց Յեղասպանութենէն անցած է դար մը, սակայն այդ չի նշանակեր, որ այլեւս ապարդիւն եւ անիմաստ է պահանջել մեր ազգային արդար իրաւունքները, այնքան ատեն որ հատուցում չենք ստացած թրքական պետութենէն: Իր խօսքը Հ.Մ.Ը.Մ.ական քոյրերուն եւ եղբայրներուն ուղղելով, ան թելադրեց,

որ միշտ յիշեն, յիշեցնեն եւ պահանջեն, մինչեւ որ հասնին Հայ Դատի պահանջատիրութեան ամբողջական գործադրման:

Այս առթիւ իր պատգամը ուղղեց նաեւ Շնորհք Աբղ. Աչըգեան: Ան ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ականը միշտ եղած է այն ազգասէր հայը, որ երբեք չէ մոռցած իր ազգային պարտականութիւնը Հայ Դատի նկատմամբ: Հայր սուրբը ներկաներուն թելադրեց, որ Յեղասպանութենէն վերապրողներու կամքով շարունակել իրենց երթը:

Հայր Սուրբին «Պահպանիչ»էն եւ «Յառաջ նահատակ» քայլերգին երգեցողութենէն ետք, շեփորախումբին մահերգի եղանակով սկաուտները իրենց ծաղկեպսակն ու ծաղիկները զետեղեցին յուշարձանին առջեւ՝ ազգային պարտականութիւն մը կատարած ըլլալու զոհունակութեամբ:



Studio Alex



Studio Alex



Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ԼԵՎԱՄ-Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ ԵՒ ՍԷՆ ՔԷՕՐ
ՊԱՌԻՇՐԻԷ ԴՊՐՈՑԻՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՄԱՐՉԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿ ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՄԷՉ

Թղթակից
ՊՈՒՐՃ ՀԱՍՈՒՏ

Կիրակի, 24 Մայիս 2015-ի առաւօտուն, Պուրճ Համուտի մարզադաշտին մէջ տեղի ունեցաւ իր տեսակին մէջ եզակի մարզամշակութային ձեռնարկ մը՝ Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ԼԵՎԱՄ-ի յանձնախումբին Եւ ՍԷՆ Քէօր Պաուլըրիէ դպրոցին գործակցութեամբ: Ձեռնարկը նուիրուեցաւ Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին:

Նախաձեռնութեան մէջ նկատի առնուած էին մարզական զանազան մրցաշարքեր, որոնց մասնակիցներն էին ՍԷՆ Քէօր Պաուլըրիէ դպրոցին եւ հայկական

ազգային վարժարաններու աշակերտները:

Փակման արարողութիւնն ու մետալներու բաշխումը տեղի ունեցան «Աղբալեան-Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրին մէջ:

Այս առիթով, իրաւարար կազմին կողմէ քոյր Դալար Պէպէճեան ողջունեց ՍԷՆ Քէօր Պաուլըրիէ դպրոցը, որ առաջարկած էր մարզամշակութային միացեալ ձեռնարկ մը կատարել՝ զայն նուիրելով Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին: «Այսօրուան մարզական մրցաշարքը կ'ընդգրկէր տարբեր տեսակի մարզախաղեր, ինչպէս՝ վազք, փինկ-փոնկ, պասքեթպոլ եւ ֆութպոլ», նշեց ան: Քոյրը շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք ճիգ չխնայեցին ձեռնարկը յաջողցնելու, ապա բեմ

հրաւիրեց ՍԷՆ Քէօր Պաուլըրիէ դպրոցի մարզական պատասխանատու Ֆրանսուա Շիտիաքը, որպէսզի փոխանցէ իր խօսքը:

Ֆրանսուա Շիտիաք շնորհաւորեց մասնակիցները եւ անոնց մարզական ոգին, որուն շնորհիւ տարբեր վարժարաններու աշակերտներ համախմբուեցան նոյն նախաձեռնութեան շուրջ: Ան շնորհակալութիւն յայտնեց ՍԷՆ Քէօր Պաուլըրիէ դպրոցի տնօրէնութեան, որ նման առիթ մը ստեղծեց: Շիտիաք իր խօսքը փակեց՝ բոլորին մաղթելով խաղաղութիւն եւ յուսալով, որ ուրախ առիթներն ալ կը միացնեն մեզ:

Այնուհետեւ բեմ հրաւիրուեցաւ ՍԷՆ Քէօր Պաուլըրիէ դպրոցի ուսուցչական կազմէն Գարինա Ռամիան, որ ներկայներէն խնդրեց վայրկեան մը լռու-

Թեամբ յարգել յիշատակը Մեծ Եղեռնի մէկ ու կէս միլիոն նահատակներուն, որոնք զոհ գացին անմարդկային ոճրագործութիւններու: Ապա ան իր իւրայատուկ ձայնով, հայերէնով ներկայացուց Ատանայի կոտորածին երգը:

Դպրոցի տնօրէն Գարօլին Ռայի իր կարգին հաստատեց, որ այս նախաձեռնութեամբ ուրախութեան եւ վերապրումի շուրջ կը միանան բոլորը, որովհետեւ, թէեւ 1915-ին տեղի ունեցաւ Հայոց Ցեղասպանութիւնը, սակայն հայերը 100 տարիներ ետք տակաւին կան եւ կը գոյատեւեն:

Տնօրէն Ռայի Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան շնորհակալութիւն յայտնելէ ետք կոչ ուղղեց ներկաներուն, որ այս ձեռնարկը սկիզբ մը դառնայ յառաջիկային տեղի ունենալիք միասնական այլ ծրագիրներու եւ ձեռնարկներու: «Սիրելիներ, մենք չենք մոռցած ձեր դատն ու ձեզ, մենք միշտ ձեր կողքին ենք ու ձեզի հետ», հաստատեց տնօրէնը:

Յաջորդեց յուշանուէրներու փոխանակումը Սէն Քէօր Պաուլըիէ դպրոցին եւ Հ.Մ.Ը.Մ.ի ԼեվաՄ-ի յանձնախումբի ներկայացուցիչներուն միջեւ:

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան քոյր Թալին Օրտողլեան արտասանեց միութեան խօսքը: Ան ողջունեց Սէն Քէօր Պաուլըիէ դպրոցը եւ անոր տարած մէկ տարուան աշխատանքը, որ նուիրուած էր Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին: «100-ամեակը առիթ եղաւ մօտէն ճանչնալու հայերը, իսկ այսօր ալ ծանօթացաք լիբանանահայ զաղութիւն աշխուժութեան», ըսաւ քոյր Օրտողլեան: Ան շեշ-



տեց, որ Հայ Դատը պատմական իրողութիւն է, եւ հայերը 100 տարի ետք կը յիշեն եւ արդարութիւն կը պահանջեն: Քոյրը իր խօսքը փակեց կրկին հանդիպելու խոստումով:

Աւարտին տեղի ունեցաւ մրցաշարքերուն յաղթանակ ապահոված աշակերտ-աշակերտուհիներուն մետալներու բաշխումը:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԱՍՆԱԿՅՑՈՒԹԻՒՄԻՆԸ

ԼԻԲԱՆԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԻՆ

Թղթակից
ՊԵՅՐՈՒԹ

Լիբանանի խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրիի հովանաւորութեամբ եւ Լիբանանի սկստական Ֆետերասիոնին հրաւերով, Կիրակի, 24 Մայիս 2015-ին, Լիբանանի խորհրդարանին մէջ տեղի ունեցաւ «Օրինագիծեր եւ օրէնքներ. սկստական սերունդներուն յոյսերը, նպատակներն ու ձգտումները» բնաբանով հանդիպում մը, որուն ներկայ գտնուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի շրջանը ներկայացնող քառանգամ պատուիրակութիւն մը, բաղկացած Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ եւ Լիբանանի սկստական Ֆետերասիոնին մօտ Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցիչ եղբ-



վաչէ Նաճարեանէ, Շրջանային ըսկաուտ. Խորհուրդի փոխ ատենապետ եղբ. Իշխան Մանիսաճեանէ, Շրջանային ընդհանուր խմբապետ եղբ. Ժանօ Քէչէճեանէ եւ քոյր Սելին Ատուրեանէ:

Խորհրդարանի խորհրդաժողովներու դահլիճին մէջ տեղի ունեցած այս հանդիպումին բացումը կատարեց խորհրդարանի նախագահի ներկայացուցիչ երեսփոխան Ղասսան Մուխայպէր:

Հանդիպումին ներկայ գտնուեցան մարմնակրթութեան եւ երիտասարդութեան հարցերու խորհրդա-

րանական յանձնախումբի նախագահ երեսփոխան Սիմոն Ապի Ռամիա, մարմնակրթութեան եւ երիտասարդութեան հարցերու նախարարի ներկայացուցիչ Ժողէֆ Սաատալլա, իսլամական սկստութեան համաշխարհային ֆետերասիո-



նի ընդհանուր քարտուղար Զուհէյր Ղանէմ, սկաուտական արաբական յանձնախումբի նախագահ Եոսէֆ Խատտաթ, արաբական սկաուտական կազմակերպութեան ընդհանուր քարտուղար Աթէֆ Ապտէլ Մեթիտ, Լիբանանի սկաուտական Ֆետերասիոնի վարչական խորհուրդի նախագահն ու անդամները, իսլամական «Ռիսալա» սկաուտական միութեան խմբապետ եւ Լիբանանի սկաուտական Ֆետերասիոնի փոխ նախագահ Հիւսէյն Աթմի, Լիբանանի սկաուտական Ֆետերասիոնի նախկին նախագահներ, սկաուտական միութիւններու նախագահներ եւ անդամներ, ինչպէս նաեւ՝ Լիբանանի տարածքին գործող սկաուտական միութիւններու խմբապետական կազմերու ներկայացուցիչներ:

Հանդիպումը սկսաւ առաւօտեան ժամը 11.00-ին: Լիբանանեան քայլերգի ունկնդրութենէն ետք, սկաուտական Ֆետերասիոնի ընդհանուր քարտուղար Սայիտ Մաալիքի արտասանեց բացման խօսքը, որուն մէջ ան ողջունեց ներկաները՝ արժեւորելով հանդիպումը, որ իր տեսակին մէջ առաջինն է, եւ որուն վրայ պիտի հիմնուի սկաուտական շարժումներուն համար յոսանքերիչ նոր հանգրուան մը: Մաալիքի բարձր գնահատեց խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրիի դերակատարութիւնը եւ սկաուտական շարժումներու նկատմամբ ցուցաբերած հոգատարութիւնը:

Լիբանանի սկաուտական Ֆետերասիոնի ընդհանուր ներկայացուցիչ, խմբապետ Ժորժ Նիսի իր արտասանած խօսքին մէջ շեշտեց հանդիպումին էութեան եւ այդ հանդիպումէն ակնկալուած արդիւնքներուն կարեւորութիւնը՝ հիմնուելով Լիբանանի սկաուտական Ֆետերասիոնին հովանիին տակ համախմբուած սկաուտական միութիւններու կատարելիք առաջարկներուն վրայ:

Ապա խօսք առաւ Լիբանանի սկաուտական Ֆետերասիոնի նախագահ Ժոզէֆ Խալիլ, որ ներկայացուց հանդիպումին նպատակները, անոնց գործադրութեան իմաստով ի գործ դրուելիք ջանքերուն անհրաժեշտութիւնը՝ հաստատելով Լիբանանի մէջ սկաուտական շարժումները բարեկարգելու անհրաժեշտութիւնը:

Խալիլ շնորհակալութիւն յայտնեց խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրիին՝ դրուատելով երիտասարդներուն զօրակցելու անոր կեցուածքները:

Իր կարգին, երեսփոխան Ղասսան Մուխայպէր արտասանեց Նեպիհ Պըրրիի խօսքը: Ան ողջունեց Լիբանանի սկաուտական Ֆետերասիոնին կողմէ առնուած կարեւոր քայլը՝ խորհրդարանին մէջ կայացնելու այս հանդիպումը, լուսարձակի տակ առնելու սկաուտական շարժումներուն առաքելութիւնն ու գործունէութիւնը, ինչպէս նաեւ՝ նախաձեռնութիւններ եւ բանաձեւեր որդեգրելու, որպէսզի խորհրդարանը մղուի օրէնքներ եւ օրինագիծեր մշակելու՝ Լիբանանի տարածքին գործող սկաուտական շարժումներուն աշխատանքին օժանդակող: Մուխայպէր մաղթեց, որ յառաջիկային եւս կարելի ըլլայ նման հանդիպումներ կազմակերպել:

Հանդիպումին ընթացքին սկաուտական միութիւններու խմբապետներն ու խմբապետուհիները ներկայացուցին շարք մը առաջարկներ: Անոնց կարգին, քոյր Սելին Ատուրեան ներկայացուց Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի շրջանի առաջարկը, որ կ'ըսէր. «Լիբանանի մէջ սկաուտական շարժումը քաջալերելու եւ արժեւորելու նպատակով, Լիբանանի «Սկաուտի օր» յայտարարել՝ գործակցութեամբ զբօսաշրջութեան եւ մարմնակրթութեան եւ երիտասարդութեան հարցերու նախարարութիւններուն, որովհետեւ այս քայլը նոր սերունդներուն մօտ կ'ամրապնդէ պատմութեան եւ քաղաքակրթութեան իմաստն ու հասկացողութիւնը»:

Այս առիթով, երեսփոխաններ Մուխայպէր, Ապի Ռամիա եւ խմբապետներ Ապտէլ Մեթիտ, Խատտաթ եւ Խալիլ գնահատեցին ներկայացուած առաջարկները: Անոնք խոստացան ճիշտ չինայել եւ առաջարկներուն գործադրութիւնը խոչընդոտող արգելքները վերացնել՝ խորհրդարանին եւ յատկապէս մարմնակրթութեան եւ երիտասարդութեան հարցերու խորհրդարանական յանձնախումբին, ինչպէս նաեւ մարմնակրթութեան եւ երիտասարդութեան հարցերու նախարարութեան աշխատանքներուն ընթացքին:

Այնուհետեւ, խորհրդարանի մուտքին խմբային լուսանրկար մը նկարուելէ ետք, ներկաները ուղղուեցան խորհրդարանին հիմնական դահլիճը եւ նստան երեսփոխաններու աթոռներուն վրայ: Երեսփոխան Ղասսան Մուխայպէր ներկայացուց խորհրդարանին պատմութիւնը եւ առաքելութիւնը Լիբանանի կեանքին մէջ:

ԼԵՎԱՄ-Ի 49-ՐԴ ՏԱՐԵՇՐՋԱՆԸ ՀԱՄԱԽՄԲԵՑ 23 ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԻ ԱԻԵԼԻ ՔԱՆ 950 ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

Վարագոյրը իջաւ Լիբանանահայ Երկսեռ Վարժարաններու Աշակերտական Մարզախաղերու՝ ԼԵՎԱՄ-ի 49-րդ տարեշրջանի մրցումներուն վրայ: Աւելի քան 950 աշակերտ-աշակերտուհիներ, լիբանանահայ 23 վարժարաններէ, եօթը ամիս ճակատեցան իրարու դէմ, յաղթեցին-պարտուեցան եւ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ԼԵՎԱՄ-ի յանձնախումբին շնորհիւ ապրեցան մարզական ազնիւ ոգիի եւ արդար մրցակցութեան գեղեցիկ պահեր:

Մրցումները ընդգրկեցին ճատրակ, քրոս քառնթրի, աթլետիզմ, հեծելաբշտ, փինկ-փոնկ, ֆուլթպոլ, մինի ֆուլթպոլ եւ պասքեթպոլ:

Ստորեւ՝ արդիւնքներուն ընդհանուր պատկերը. -

ՃԱՏՐԱԿ

Ճատրակի մրցումները տեղի ունեցան Կիրակի, 16 Նոյեմբեր 2014-ին, «Աղբալեան-Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրի «Ատոմ եւ Սելլա Թնճուկեան» մարզադաշտին վրայ, մասնակցութեամբ 121 աշակերտ-աշակերտուհիներու, որոնք ներկայացուցին հետեւեալ վարժարանները. - Ազգ. Յառաջ-Գալուստ Կիւլպէնկեան, Ազգ. Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան, Ազգ. Եղիշէ Մանուկեան, Ազգ. Սուրէն Խանամիրեան, Ազգ. Քառասնից Մանկանց, Թէքէեան, Նազարեան, Դարուհի - Յովակիմեան, Հայ Աւետարանական Քոլէճ, Կեդրոնական Բարձրագոյն Վարժարան, Շամլեան-Թաթիկեան, Թորոսեան, Ճեմարան, Հռիփսիմեանց, Մեսրոպեան, Ս. Խաչ-Հարպոյեան, Ս. Ազնէս եւ Կերթմէնեան:

Ստորեւ՝ մրցումներուն գլխաւոր արդիւնքները. -



- 8 Տարեկան եւ Վար Աղջիկներ**
1. Լոուի Պապիկեան (Ճեմարան)
- Տղաք**
1. Կի Գալուստ (Մեսրոպեան)
 2. Յակոբ Յովակիմեան (Հարպոյեան)
 3. Արեգ Ճերթիտեան (Ճեմարան)
- 10 Տարեկան եւ վար Աղջիկներ**
1. Լոուի Գարաճեան (Ճեմարան)
 2. Փաթիլ Գրիգորեան (Ե. Մանուկեան)
 3. Ալիք Թէնպէլեան (Ճեմարան)
- Տղաք**
1. Հայկ Թէնպէլեան (Ճեմարան)
 2. Քրիստ Էճիտեան (Կ.Բ.Վ.)
 3. Յակոբ Թերգեան (Մեսրոպեան)
- 12 Տարեկան եւ վար Աղջիկներ**
1. Նանօր Առնելեան (Մեսրոպեան)
 2. Լէակ Մարտիրոսեան (Ե. Մանուկեան)
 3. Նարօտ Գառնէշեան (Յառաջ)

- Տղաք**
1. Հրակ Լախեան (Ճեմարան)
 2. Պետո Գալուստեան (Ճեմարան)
 3. Վարագ Կէօզիլպէօյիլքեան (Ճեմարան)
- 14 Տարեկան եւ վար Աղջիկներ**
1. Ժէսի Գրիգորեան (Ե. Մանուկեան)
 2. Ալիս Գարաճեան (Ճեմարան)
 3. Լէա Աշգարեան (Յառաջ)
- Տղաք**
1. Ժիօ Գալուստ (Մեսրոպեան)
 2. Լեւոն Գալաճեան (Ճեմարան)
 3. Ալէք Թորոսեան (Կ.Բ.Վ.)
- 16 Տարեկան եւ վար Աղջիկներ**
1. Նանի Գալաճեան (Ճեմարան)
 2. Մանէ Պասմաճեան (Ճեմարան)
 3. Գարինա Գարակիլէեան (Հայ Աւետ. Քոլէճ)
- Տղաք**
1. Յակոբ Թաշճեան (Ճեմարան)
 2. Հայկ Աւետիս (Ճեմարան)



3. Պետիկ Հերկելեան (Յառաջ)

18 Տարեկան եւ վար Աղջիկներ

- 1. Յուլիկ Գայմագամեան (Հայ Աւետ. Քոլէճ)
- 2. Ռիթա Առոյեան (Ճեմարան)
- 3. Քրիսթէլ Յովսէփեան (Ճեմարան)

Տղաք

- 1. Աւօ Մարտիրոսեան (Ե. Մանուկեան)
- 2. Կարօ Խալիլովեան (Ե. Մանուկեան)
- 3. Ալէք Էլպէքեան (Ճեմարան)

ԽՄԲԱՅԻՆ ԴԱՍԱԻՈՐՈՒՄ

- 1. Ճեմարան
- 2. Մեսրոպեան
- 3. Ե. Մանուկեան

ՔՐՈՍ ՔԱՌԻՆԹԻ

Քրոս քառնթրիի մրցումները կատարուեցան շաբաթ մը ետք, Կիրակի, 23 Նոյեմբեր 2014-ի առաւօտեան, Պուրճ Համուտի մէջ:

Մրցումներուն իրենց մասնակցութիւնը բերին 112 աշակերտ-աշակերտուհիներ, որոնք ներկայացուցին լիբանանահայ 11 վարժարաններ:

Ստորեւ՝ մրցումներուն գլխաւոր արդիւնքները:-

2001/2002-ի Ծնունդ Աղջիկներ



- 1. Սերենա Հայէք (Հարպոյեան) 9' 18
- 2. Լէա Պուտագեան (Ճեմարան) 9' 27
- 3. Ինեսա Քէչէք (Ճեմարան) 9' 42

2001/2002-ի Ծնունդ Տղաք

- 1. Պարոյր Տօնիկեան (Ճեմարան) 8' 14
- 2. Քրիսթիան Արապսէիսեան (Ք. Մանկանց) 8' 27
- 3. Միկէլ Խանճեան (Ճեմարան) 8' 29

1999/2000-ի Ծնունդ Աղջիկներ

- 1. Արին Թաշճեան (Ճեմարան) 14' 10
- 2. Սթեֆանի Գոլոյեան (Մեսրոպեան) 14' 18
- 3. Սարինէ Ներսէս (Ճեմարան) 14' 53

1999/2000-ի Ծնունդ Տղաք

- 1. Քրիստ Բրուտեան (Ճեմարան) 11' 25
- 2. Սարգիս Աբգար (Հարպոյեան) 11' 28
- 3. Անթոնիօ Հալլաճեան (Ե. Մանուկեան) 11' 37

1997/1998-ի Ծնունդ Աղջիկներ

- 1. Դալար Պետիկեան (Ե. Մանուկեան) 14' 09
- 2. Սերին Սարգիսեան (Ճեմարան) 14' 55
- 3. Կրէյս Միսիրեան (Ճեմարան) 15' 37

1997/1998-ի Ծնունդ Տղաք

- 1. Տիգրան Փուշմանեան (Դ. Յովակիմեան) 11' 07
- 2. Կարօ Շատոյեան (Ս. Յակոբեան) 11' 35
- 3. Նարեկ Ասլանեան (Ս. Յակոբեան) 11' 39

ԱԹԼԵԹԻԶՄ

- 1. Ճեմարան
- 2. Հարպոյեան
- 3. Ե. Մանուկեան

ՀԵԾԵԼԱՐՇԱԲ

Հեծելարշաւի մրցումները տեղի ունեցան 30 Նոյեմբեր 2014-ին, «Լա Մարինա»-ի մէջ, Տրպպայա, հովանաւորու-





AMAYA 2014 ©

Թեամբ Լիբանանի հեծելարշաւի ֆետերասիոնին:

Մրցումներուն մասնակցեցան 9 աշակերտուհիներ եւ 34 աշակերտներ ներկայացնելով հետեւեալ վարժարանները.- Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան ձեմարան, Ազգ. Եղիշ Մանուկեան, Ազգ. Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան, Ազգ. Սուրէն Խանամիրեան, Հայ Կաթողիկէ Մերոպեան վարժարան եւ Հայ Կաթողիկէ Ս. Խաչ-Հարպոյեան վարժարան:

Ստորեւ՝ մրցաշարքի գլխաւոր արդիւնքները.-

1997/1998-ի Ծնունդ Տղաք

1. Յակոբ Մաթոյեան (Մերոպեան) Բեկոր Եագուպեան (Մերոպեան)
2. Սագօ Եագուլեան (ձեմարան)
3. Գէորգ Ներսիսեան (Հարպոյեան)

1997/1998-ի Ծնունդ Աղջիկներ

1. Յոլեր Կէօվլէքեան (Մերոպեան) 33' 08
2. Մարինա Արապեան (Մերոպեան)

1999/2000-ի Ծնունդ Աղջիկներ

1. Ժոէլ Գասապեան (Ս. Յակոբեան) 31' 46
2. Սոնա Մարիա Թաշճեան (Մերոպեան) 36' 50
3. Թաթիանա Շէնգեան (Խանամիրեան)

1999/2000-ի Ծնունդ Տղաք

1. Կարէն Առաքելեան (Մերոպեան) 31' 16
2. Սերուժ Խանճիհանեան (Ս. Յակոբեան) 31' 54
3. Էթիէն Գազճեան (Հարպոյեան) 37' 07

ՓԻՆԿ-ՓՈՆԿ

Փինկ-փոնկի մրցումները կատարուեցան Կիրակի, 7 Դեկտեմբեր 2014-ին, մասնակցութեամբ 19 աշակերտուհիներու եւ 73 աշակերտներու, որոնք ներկայացուցին հետեւեալ վարժարանները.- Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան ձեմարան, Ազգ. Եղիշ Մանուկեան, Ազգ. Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան, Հայ Կաթողիկէ Ս. Խաչ-Հարպոյեան, Շամլեան-Թաթիկեան, Հայ Կաթողիկէ Մերոպեան, Ազգ. Յառաջ-Գարուստ Կիւլպէնկեան, Ազգ. Քառասնից Մանկանց, Դարուհի-Յովակիմեան եւ Կեդրոնական Բարձրագոյն վարժարան:

2003/2004-ի Ծնունդ Տղաք

1. Արտակ Ասատուր (ձեմարան)
2. Վարազ Կէօզիլպէօյիւքեան (ձեմարան)
3. Տաւիտ Տօնապետեան (ձեմարան), Յարութ Ղազարեան (ձեմարան)

2001/2002-ի Ծնունդ Աղջիկներ

1. Սելին Ճուլմճեան (Ե. Մանուկեան)
2. Ճէսի Գրիգորեան (Ե. Մանուկեան)
3. Մարի Ռոզ Տաղլեան (Մերոպեան), Նարօտ Խաչատուր (ձեմարան)



AMAYA 2014 ©



2001/2002-ի Ծնունդ Տղաք

- 1. Նարեկ Փանոսեան (Ե. Մանուկեան)
- 2. Սարո Սերուժեան (Ճեմարան)
- 3. Վարազ Բէօշէեան (Յառաջ), Կարէն Խալոյեան (Ճեմարան)

- 2. Ե. Մանուկեան (16 կէտ)
- 3. Ս. Յակոբեան (5 կէտ)

ՖՈՒԹՊՈՒԼ

1999/2000-ի Ծնունդ Աղջիկներ

- 1. Վանա Մահտեսեան (Ե. Մանուկեան)
- 2. Սեւան Զէքմէեան (Ս. Յակոբեան)
- 3. Արին Լոզոյեան (Ճեմարան), Արին Զոքաբլեան (Ճեմարան)

Ֆուտպոլի մրցումները երկարեցան երկու շաբթուան վրայ եւ ունեցան իրենց ախոյեանը՝ Ազգ. Եղիշէ Մանուկեան Բոլշճը: Հայ Աւետ. Բոլշճէն Արման Խտրըլարեան տիրացաւ առաւելագոյն կոլ նշանակող մարզիկի տիտղոսին, իսկ Ազգ. Եղիշէ Մանուկեան Բոլշճէն Մարք Խորշիտեան՝ մրցաշարքի լաւագոյն մարզիկի տիտղոսին:

1999 2000-ի Ծնունդ Տղաք

- 1. Անթոնի Գաբրիէլեան (Ճեմարան)
- 2. Մարք Մարգարեան (Շամլեան Թաթիկեան)
- 3. Ալեքս Կէտիկեան (Ճեմարան), Բիւրակ Խանճիհանեան (Ճեմարան)

1997/1998-ի Ծնունդ Աղջիկներ

- 1. Միրէյ Պոյաճեան (Հարպոյեան)
- 2. Փաթիլ Գազանճեան (Ե. Մանուկեան)
- 3. Բալիկ Կարպուշեան (Ճեմարան), Գարլա Օհաննէսեան (Ճեմարան)

1997/1998-ի Ծնունդ Տղաք

- 1. Յակոբ Ոսկերիչեան (Ե. Մանուկեան)
- 2. Նարեկ Ասլանեան (Ս. Յակոբեան)
- 3. Դրօ Զոքաբլեան (Ճեմարան), Սերժ Սէֆիլեան (Ս. Յակոբեան)

ԽՄԲԱՅԻՆ ԴԱՍԱԻՈՐՈՒՄ

- 1. Ճեմարան (28 կէտ)

Ա. Հանգրուանի մրցումներ
 Հարպոյեան-Ճեմարան 0-2
 Մերոպեան-Հայ Աւետ. Բոլշճ 0-2
 Ս. Յակոբեան-Կ.Բ.Վ. 2-0

Բ. Հանգրուանի մրցումներ
 Հարպոյեան-Ճեմարան 0-2
 Մերոպեան-Հայ Աւետ. Բոլշճ 0-2
 Ս. Յակոբեան-Կ.Բ.Վ. 2-0

Ե. Մանուկեան-Ճեմարան 3-3 (փենալթիներով՝ 4-3)
 Ս. Յակոբեան-Հայ Աւետ. Բոլշճ 0-3

3-4րդ դիրքի մրցում
 Ս. Յակոբեան-Ճեմարան 2-6

Աւարտական
 Եղիշէ Մանուկեան-Հայ Աւետ. Բոլշճ 3-3 (փենալթիներով՝ 4-3)

- Ընդհանուր Դասաւորում
- 1. Ե. Մանուկեան
 - 2. Հայ Աւետ. Բոլշճ
 - 3. Ճեմարան

ՄԻՆԻ ՖՈՒԹՊՈՒԼ

Փոքրեր
 Շամլեան-Կ.Բ.Վ. 2-2
 Յառաջ-Ս. Յակոբեան 0-10
 Հոփսիմեանց-Ե. Մանուկեան 2-3
 Ճեմարան-Հայ Աւետ. Բ. 9-0
 Մերոպեան-Բ. Մանկանց 3-1
 Հարպոյեան-Կերթմէնեան 4-0



Շամլեան-Խանամիրեան 1-1
 Ճեմարան-Ք. Մանկանց 3-0
 Հայ Աւետ. Ք.-Մերոպեան 0-4
 Հարպոյեան-Հռիփսիմեանց 3-0
 Կերթմէնեան-Ե. Մանուկեան 2-1

Կերթմէնեան-Հռիփսիմեանց 3-4
 Ճեմարան-Մերոպեան 0-5
 Հարպոյեան-Ե. Մանուկեան 0-0
 Թորոսեան-Ս. Յակոբեան 1-6
 Խանամիրեան-Կ.Բ.Վ. 2-1

Քառորդ աւարտական
 Ճեմարան-Հարպոյեան 2-1
 Շամլեան-Ս. Յակոբեան 0-3
 Ե. Մանուկեան-Մերոպեան 1-6
 Խանամիրեան-Թորոսեան 4-0

Կիսաւարտական
 Ճեմարան-Խանամիրեան 2-1
 Մերոպեան-Սոֆիա 3-0

Երրորդ/Չորրորդ
 Խանամիրեան-Ս. Յակոբեան 1-1 (2-1)
Աւարտական
 Ճեմարան-Մերոպեան 0-2

Միջակներ
 Դ. Յովակիմեան-Ե. Մանուկեան 3-1
 Շամլեան-Յառաջ 1-3
 Ճեմարան-Թորոսեան 6-2
 Հարպոյեան-Ս. Յակոբեան 3-0
 Աւետ. Այնճար-Ս. Յակոբեան 1-1
 Դ. Յովակիմեան-Մերոպեան 1-4
 Ճեմարան-Կ.Բ.Վ. 4-0



Աւետ. Այնճար-Հարպոյեան 0-3
 Թորոսեան-Կ.Բ.Վ. 0-5
 Մերոպեան-Ե. Մանուկեան 1-2

Քառորդ աւարտական
 Յառաջ-Մերոպեան 0-3
 Կ.Բ.Վ.-Հարպոյեան 3-7
 Ճեմարան-Աւետ. Այնճար 6-3
 Շամլեան-Ե. Մանուկեան 1-5

Կիսաւարտական
 Հարպոյեան-Մերոպեան 2-1
 Ճեմարան-Ե. Մանուկեան 3-2

Երրորդ/Չորրորդ
 Մերոպեան-Ե. Մանուկեան 7-5

Աւարտական
 Ճեմարան-Հարպոյեան 2-3

Մեծեր
 Դ. Յովակիմեան-Ս. Յակոբեան 2-2
 Հարպոյեան-Հռիփսիմեանց 5-1
 Ե. Մանուկեան-Հայ Աւետ. Ք. 2-2
 Ճեմարան-Կ.Բ.Վ. 3-1

Դ. Յովակիմեան-Մերոպեան 3-1
 Ս. Յակոբեան-Ե. Մանուկեան 2-5
 Ճեմարան-Հռիփսիմեանց 3-0

Ճեմարան-Յառաջ 3-0
 Հարպոյեան-Կ.Բ.Վ. 1-2
 Ս. Յակոբեան-Հայ Աւետ. Քոլէճ 0-2
 Մերոպեան-Ե. Մանուկեան 3-3

Քառորդ աւարտական
 Ճեմարան-Հարպոյեան 3-2
 Կ.Բ.Վ.-Հռիփսիմեանց 7-2
 Ս. Յակոբեան-Մերոպեան 1-8
 Հայ Աւետ. Ք.-Մերոպեան 2-0

Կիսաւարտական
 Հայ Աւետ. Ք.-Կ.Բ.Վ. 4-4 (1-2 փենալ-
 թիներով)
 Ճեմարան-Ե. Մանուկեան 4-1

Երրորդ/Չորրորդ
 Հայ Աւետ. Ք.-Ե. Մանուկեան 3-0

Աւարտական
 Ճեմարան-Կ.Բ.Վ. 7-4





Մինի Փուլթպոլի 2014-2015 տարեշրջանի խմբային դասաւորում:-

ՊԱՍՔԵԹՊՈԼ

Փոքրեր

- 1. Մերոպեան
- 2. Ճեմարան
- 3. Խանամիրեան

Միջակներ

- 1. Հարպոյեան
- 2. Ճեմարան
- 3. Մերոպեան

Մեծեր

- 1. Ճեմարան
- 2. Կ.Բ.Վ.
- 3. Հայ Աւետ. Քոլէճ

Փոքրեր (2000/2001/2002-ի ծնունդներ)

- Հարպոյեան-Ս. Ազնէս 45-7
- Յառաջ-Ք. Մանկանց 42-15
- Ե. Մանուկեան-Մերոպեան 13-36
- Ճեմարան-Մերոպեան 18-22

Աղջիկներ

- Հարպոյեան- Ե. Մանուկեան 31-12

Տղաք

- Հարպոյեան-Ե. Մանուկեան 22-13
- Ճեմարան-Ք. Մանկանց 3-13
- Ճեմարան-Ս. Ազնէս 28-8

Հարպոյեան-Մերոպեան 29-23
Հարպոյեան-Մերոպեան 34-28

Ճեմարան-Յառաջ 20-0
Մերոպեան-Ե. Մանուկեան 31-14

Ս. Ազնէս-Մերոպեան 16-3
Ճեմարան-Ե. Մանուկեան 20-0

Կիսաւարտական
Հարպոյեան-Յառաջ 28-26
Ճեմարան-Մերոպեան 38-9

Աւարտական/Աղջիկներ
Ճեմարան-Հարպոյեան 18-21

Միջակներ (1999/2000-ի ծնունդներ)
Թէքէեան-Հարպոյեան 30-65
Ճեմարան-Մերոպեան 41-17

Հարպոյեան-Ե. Մանուկեան 42-35
Հռիփսիմեանց-Մերոպեան 33-27

Ճեմարան-Հռիփսիմեանց 43-30
Ե. Մանուկեան-Թէքէեան 52-20

Կիսաւարտական
Հարպոյեան-Հռիփսիմեանց 72-69
Ճեմարան-Ե. Մանուկեան 56-18

Աւարտական
Ճեմարան-Հարպոյեան 52-45

Մեծեր (1997/1998-ի ծնունդներ)
Ս. Յակոբեան-Հարպոյեան 12-34

Մինի Փուլթպոլի մրցաշարքի առաւելագոյն կոլ նշանակող աշակերտներ:-

- Փոքրեր՝ Սերժ Օսկեան (Մերոպեան) 18 կոլ
- Միջակներ՝ Հէրի Թասլաքեան (Ե. Մանուկեան) 9 կոլ
- Մեծեր՝ Արման Խտրըլարեան (Հայ Աւետ. Քոլէճ) 10 կոլ

Մինի Փուլթպոլի լաւագոյն աշակերտներ:-

- Փոքրեր՝ Սերժ Օսկեան (Մերոպեան)
- Միջակներ՝ Պետիկ Թուրթիկեան (Հարպոյեան)
- Մեծեր՝ Շանթ Գէորգեան (Ճեմարան)



- Ե. Մանուկեան-Յառաջ 44-25
- Ե. Մանուկեան-Մերոպեան 48-16
- Դ. Յովակիմեան.-Մերոպեան 65-13

- Ճեմարան-Յառաջ 70-27
- Դ. Յովակիմեան-Ս. Յակոբեան 33-16
- Հարպոյեան-Մերոպեան 58-20

- Ճեմարան-Մերոպեան 51-19
- Ճեմարան-Ե. Մանուկեան 43-25
- Մերոպեան-Ս. Յակոբեան 20-0
- Դ. Յովակիմեան-Հարպոյեան 21-29

- Կիսաւարտական**
- Հարպոյեան-Ե. Մանուկեան 39-36
 - Ճեմարան-Մերոպեան 55-15

- Աւարտական/Տղաք**
- Ճեմարան-Հարպոյեան 59-35

- Աւարտական/Աղջիկներ**
- Ճեմարան-Ե. Մանուկեան 33-24

- Փոքր Աղջիկներ**
- 1. Հարպոյեան
 - 2. Մերոպեան
 - 3. Ճեմարան

- Մեծ Աղջիկներ**
- 1. Ճեմարան
 - 2. Ե. Մանուկեան
 - 3. Մերոպեան

- Փոքր Տղաք**
- 1. Ճեմարան



- 2. Հարպոյեան
- 3. Յառաջ

- Միջակ Տղաք**
- 1. Ճեմարան
 - 2. Հարպոյեան
 - 3. Ե. Մանուկեան

- Մեծ Տղաք**
- 1. Ճեմարան
 - 2. Հարպոյեան
 - 3. Ե. Մանուկեան

Պասքեթպոլի լաւագոյն աշակերտներ՝
 - Փոքր Աղջիկներ՝ Սերենա Հայէք
 (Հարպոյեան)

- Մեծ Աղջիկներ՝ Սանան Խաչերեան (Ճեմարան)
- Փոքր Տղաք՝ Սերուժ Նորամանեան (Ճեմարան)
- Միջակ Տղաք՝ Ալեքս Կէտիկեան (Ճեմարան)
- Մեծ Տղաք՝ Րաֆֆի Խալոյեան (Ճեմարան)

Հայկազեան համալսարանի արդար խաղի («Fair play») բաժակին արժանացաւ Ազգային Յառաջ-Գ. Կիւլպէնկեան վարժարանը:





ԼԵՎԱՄ-Ի 49-ՐԴ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

Ձեռնարկից ԱՆԹԻԼԻԱՍ

Ով անաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան, ԼԵՎԱՄ-ի 49-րդ տարեշրջանի մարզախաղերու փակման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, 22 Մարտ 2015-ին,

«Աղբալեան-Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրի «Ատոմ եւ Սելլա Թնճուկեան» մարզադաշտին վրայ, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ-ական պատասխանատուներու, վարժարաններու տնօրէններու, հիւրերու եւ մեծ թիւով ծնողներու:

Փակման հանդիսութեան նախաձեռնողի ունեցան պատրաստութիւնը տեղի ունեցան աւարտական մրցումները, ուր

ձեմարանի զոյգ խումբերը փայլուն արդիւնքներ արձանագրեցին Ազգ. Եղիշ Մանուկեանի տղոց (33-24) եւ Հայ Կաթողիկէ Ս. Խաչ-Հարպոյեան վարժարանի աղջկանց դէմ (59-35):

Մրցումներուն յաջորդեցին գեղարուեստական պարեր՝ ԼԵՎԱՄ-ի մասնակից կարգ մը վարժարաններու կողմէ: Ազգ. Եղիշ Մանուկեան Քոլէճ, Հայ Աւետարանական Շամբան-Թաթիկեան վարժարան, Հայ Կաթողիկէ Մեսրոպեան Բարձրագոյն վարժարան, Հայ Կաթողիկէ Ս. Խաչ-Հարպոյեան վարժարան, Հայ Աւետարանական Կեդրոնական Բարձրագոյն վարժարան:

Պարերէն ետք, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ղեկորախումբին առաջնորդութեամբ տողանցեցին ԼԵՎԱՄ-ի մասնակից վարժարաններու մարզական խումբերը:

Օրուան յայտագիրը սկսաւ Լիբանանի եւ Հայաստանի քայքայներով:

ԼԵՎԱՄ-ի յանձնախումբը 2013-2014 տարեշրջանի վահանակի վարժարաններէն ստանձնեց ԼԵՎԱՄ-ի վահանները,

զորս Մալիսեան փառատօնին յանձնեց 2014-2015 տարեշրջանի վահանակի վարժարաններուն:

Խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ԼԵՎԱՄ-ի յանձնախումբի անդամ քոյր Դալար Պէպէճեան: Ան նշեց, որ ԼԵՎԱՄ-ի մրցումները հիմնական միջոց են իրագործելու Հ.Մ.Ը.Մ-ի մայր նպատակները՝ կերտելու առողջ, հայրենասէր, արի եւ ազնիւ հայեր:

Պէպէճեան շեշտեց, որ ԼԵՎԱՄ-ի նպատակն է եղբայրական միջնորդութիւն մէջ մարզական մրցակցութիւն ունենալ, դպրոցական կրթութեան եւ դաստիարակութեան կողքին ջամբել մարմնակրթական դաստիարակութիւն՝ կերտելու համար տիպար հայ քաղաքացիներ:

Հ.Մ.Ը.Մ-ի ԼԵՎԱՄ-ի մասնակից վարժարաններու տնօրէններուն անունով խօսք առաւ Համազգայինի Մեյրան Թոնի եւ Հայկ Արսլանեան ձեմարանի տնօրէն Տիգրան Ժինպաշեան: Ան ըսաւ, որ «Մարզանքի միջոցով մարմնի մշակումը չափազանց կարեւոր է: «Առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ» արտայայտութիւնը ցոյց կու տայ, որ սերտ կապ մը գոյութիւն ունի ֆիզիքական պատրաստութեան եւ տրամաբանութեան զարգացման միջեւ: Մարզական

խաղերու միջոցով կը մշակուին զգայարանները եւ այդ մշակումը կ'առաջնորդէ մտային կարողութիւններու բարելաւման»:

Շարունակելով, ծինպաշեան հաստատեց, որ «Բազմաթիւ երկիրներու մէջ մարզական պատրաստութիւնը կրթական ծրագիրներուն մաս կը կազմէ եւ պետական քննութիւններու ընթացքին նկատի կ'առնուի լեզուական, գիտական ու այլ դաստիարակութեան կողքին: Ասիկա կը նշանակէ, որ ԼԵՎԱՄ-ը միջ-դպրոցական խաղերը կազմակերպելով, ուսումնական ծրագիր մը կ'իրականացնէ եւ աշակերտներու կրթութեան գործին կը մասնակցի»:

Այնուհետեւ, Հայկազեան համալսարանի խօսքը արտասանեց նախագահ դոկտ. Փօլ Հայտոսթեանի ներկայացուցիչ Ռազմիկ Գաբրիէլեան:

Գաբրիէլեան դիտել տուաւ, որ «Հայկազեան համալսարանը միշտ եղած է մարզանքը, մարզիկները, հայկական միութիւնները եւ այս պարագային Հ.Մ.Ը.Մ-ը քաջալերողը»:

Այս առիթով ան յայտնեց, որ «Մարգախաղերը առիթ կու տան անհատին ըլլալու խումբի մը մէջ, որուն անդամները կ'ուզեն դրական արդիւնքներով դուրս գալ խաղէն եւ զիտակցիլ, թէ առանց խմբային աշխատանքի դրական արդիւնք ունենալը կարելի բան չէ: Խմբային աշխատանքի գաղափարը պէտք է միշտ մեր մտքերուն մէջ ունենանք եւ գործածենք զայն ո՛չ միայն մարզախաղերու ընթացքին, այլ նաեւ՝ մեր անձնական, ընկերային ու առօրեայ գործերուն մէջ: Խումբ մը կը յաղթէ

եթէ այդ խումբին մէջ խմբային աշխատանք գոյութիւն ունի, ինչպէս ազգ մը կը գոյատեւէ, երբ այդ ազգին մէջ միասնական աշխատանք գոյութիւն ունի»:

Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան խօսքը արտասանեց ԼԵՎԱՄ-ի եւ աթլետի յանձնախումբի ներկայացուցիչ եղբ. Յարութ Ալաճաճեան:

Եղբայրը ուրախութեամբ յայտնեց, որ ԼԵՎԱՄ-ի մրցաշարքերուն մասնակցող աշակերտութեան թիւը այս տարի աճ արձանագրեց: ԼԵՎԱՄ-ի մրցաշարքերուն իրենց մասնակցութիւնը բերին 23 հայկական վարժարաններէ աւելի քան 950 աշակերտներ: Այս յաջողութեան մէջ իրենց բաժինը ունեցան ԼԵՎԱՄ-ի մասնակցող վարժարաններու մարզանքի ուսուցիչներն ու պատասխանատուները, որոնց բոլորին կ'արժէ ըսել՝ «Ձեր վարձքը կատար»:

Իր խօսքին աւարտին, եղբ. Ալաճաճեան շնորհակալութիւն յայտնեց ԼԵՎԱՄ-ի հովանաւոր՝ Հայկազեան համալսարանին եւ համալսարանի նախագահ վերապատուելի դոկտոր Փօլ Հայտոսթեանին, որ հաւատարմով ԼԵՎԱՄ-ի առաքելութեան, տարիներէ ի վեր նեցուկ կը կանգնի ԼԵՎԱՄ-ին, ներդրում ունենալով հայ աշակերտութեան հայեցի դաստիարակութեան գործին»:

Խօսքերէն ետք կատարուեցաւ մրցանակակիր վարժարաններու մրցանակաբաշխութիւն (խաղերու արդիւնքներն ու մրցանակակիրներու անունները տեսնել առանձին, էջ 53-59): Կատարուեցաւ նաեւ պատրաստութիւն եւ ֆուտբոլի մրցումներու իրաւարարներու յուշանուէրներու յանձնում:





Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻՐԱՆԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՄԱՅԻՍԵԱՆ ՏՊԱԲՈՐԻՉ ՓԱՌԱՏՕՆԸ ԶԱՀԱՎԱՌՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԿԱՏԱՐԷ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵՆԷՆ ՎԵՐԱՊՐԱԾ 105-ԱՄԵԱՅ ՀԱՅՈՒՀԻՆ

Թղթակից ՊՈՒՐՑ ՀԱՍՈՒՏ

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ընտանիքին 2015-ի Մայիսեան փառատօնը սովորական հանդիսու-

թիւն մը չեղաւ: Փառատօնը չնմանեցաւ նախորդ տարիներու փառատօններուն, որովհետեւ իր յայտագրով եւ ջանքերով իր յայտագրով եւ ջանքերով իր յայտագրով եւ ջանքերով իր յայտագրով...

ղասպանութեան ճողոպրածներու սրբազան կտակին եւ 28 Մայիս կերտած նուիրեալներու հերոսական պատգամին:

Փառատօնը տեղի ունեցաւ Կիրակի, 31 Մայիսի երեկոյեան, Պուրճ Համուտի քաղաքապետարանի դաշտին վրայ, նախագահութեամբ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Եպս. Փանոսեանի, հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան:

ՏՊԱԲՈՐԻՉ ԶԱՀԱՎԱՌՈՒԹԻՒՆԸ

Փառատօնը ընթացք առաւ Լիբանանի, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշներուն ծածանումով, Հ.Մ.Ը.Մ.ի շնորհախումբին կողմէ հնչած Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներուն կշռութիւնով: Ապա, հրամցուեցաւ օրուան առաջին անակնկալը, երբ Հայոց Ցեղասպանութեան վերապրած 105-ամեայ Մարի

Միքիլեանի դողողուն ձեռքով բոցավառեցաւ Ծիծեռնակաբերդի մանրակերտին սրբազան կրակը: Կարելի չէր անտարբեր մնալ այդ պահուն: Բոլորին աչքերէն արցունք կը կաթէր, երբ 105-ամեայ մամիկը՝ նոր սերունդի ներկայացուցիչներուն ընկերակցութեամբ կը բարձրացնէր ջահը եւ կը վառէր կրակը յարութեան, կրակը գոյատեւումի եւ կրակը պահանջատիրութեան:

Անմար կրակի բոցավառման գուգահեռ սկսուեցան կը բարձրացնէին դրօշները այն երկիրներուն, որոնք ճանչցած են Հայոց Ցեղասպանութիւնը:

ԽՕՍԲԵՐԸ

Փառատօնին բացումը կատարելով, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան խօսքը փոխանցեց եղբ. Հայկ Թապազեան: Դաշտը լեցուցած ժողովուրդն ու պատկան մարմիններու ներկայացուցիչները ողջունելէ ետք, եղբայրը անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան եւ գերագոյն նպատակներուն: Ան հաստատեց, որ իր հիմնադրութեան օրէն, մարմնակրթութեան կողքին, Հ.Մ.Ը.Մ.ը սատարեց ազգապահպանման եւ հայ անհատի ֆիզիքական ու բարոյական դաստիարակութեան: «Հ.Մ.Ը.Մ.ը եղաւ կամքը հայութեան՝ հայ մնալու ու հայօրէն ապրելու, բաժնեկցեցաւ ժողովուրդին ցաւն ու ցասումը, ուրախացուց եւ ուրախացաւ անոր

հետ՝ իր արձանագրած յաջողութիւններով ու յաղթանակներով»: Եղբ. Թապազեան դիտել տուաւ, որ այս պատուաբեր հանգրուանին հասնելու համար իրենց ներդրումը ունեցան բազմաթիւ արժէքաւոր Հ.Մ.Ը.Մ.ականներ, որոնք իրենց կեանքին գնով ծառայեցին ազգին ու հայրենիքին:

Սերօրեայ բազում մարտահրաւէրներուն անդրադառնալով, եղբ. Հայկ Թապազեան հաստատեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը կը շարունակէ մնալ պատնէշի վրայ:

«Հ.Մ.Ը.Մ.ը աննահանջ ու հաստատ քայլերով պիտի շարունակէ իր առաքելութիւնը՝ շնորհիւ հայ ժողովուրդի գիտակցութեան եւ անոր մշտաթարմ կողմին եւ հաւատքին», նշեց Թապազեան:

Իր խօսքին աւարտին, եղբ. Թապազեան շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք ոչինչ խնայեցին այս փա-





ուսուցիչները յաջողութեան եւ նիւթական ու բարոյական նեցուկ ու ապաւեն հանդիսացան Հ.Մ.Ը.Մ.ին:

Ապա, 100 գայլիկ-արծուիկներ՝ մոմերը իրենց ձեռքին, ուղղուեցան դէպի Ծիծեռնակաբերդի մանրակերտը, ուր գետեղելով մոմերը յարգեցին յիշատակը մէկ ու կէս միլիոն նահատակներուն՝ ուխտելով տէր կանգնիլ անոնց սրբազան դատին:

Անկէ ետք սկսուեցին իրենց մարմիններով գրեցին 100 թուանշանը՝ խորհրդանշելով Հայոց Յեղասպանութեան 100-ամեակը: Անոնք պատկերեցին նաեւ սրբազան լեռը՝ Արարատը: Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի մասնաճիւղի սեւ գո-



տիններու մարզիկները կատարեցին ներկայացում մը, իսկ Լիբանանի Ազգային Առաջնորդարանի վարժարաններէն աշակերտներ հանդէս եկան տպաւորիչ Ֆլէշմոպով մը՝ նուիրուած Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան խօսքը փոխանցեց եղբ. Գրիգորիս Պողարեան: Ան ըսաւ, որ իր հիմնադրութենէն ի վեր Հ.Մ.Ը.Մ.ը կանգնեցաւ բազում դժուարութիւններու դէմ յանդիման՝ դատապարտուելով նոյնիսկ իր սաղմին մէջ խեղդամահ ըլլալու, մանաւանդ իր հիմնադիր հօր՝ Շաւարշ Բրիսեանի անողոք սպանութեամբ: «Բայց որբութեամբ ծնած, որբերէ բաղկա-



ցած, որբանոցներու եւ տարագրութեան յաջորդած, յաճախ թիթեղաշէն դպրոցներու աշակերտներէ կազմուած այս կազմակերպութիւնը, որ Հ.Մ.Ը.Մ. կոչուեցաւ, կարողացաւ դիմագրաւել բոլոր դժուարութիւնները եւ դարձաւ ուժեղ բանակ՝ ջարդարարին տալով շունդալից ապտակ մը: Մահապատիժ ճողոպրած Հ.Մ.Ը.Մ.ը ենթարկուեցաւ նաեւ ակամայ աքսորի, երբ հայրենիքը փոխեց գոյն եւ վարչակարգ: Հակառակ այս բոլորին, սակայն, Հ.Մ.Ը.Մ.ը տակաւ ուռճացաւ՝ շնորհիւ ազգ-կազմակերպութիւն անքակտելի կապին, գաղափարախօսական ամուր հիմունքներու կառչածութեան, ազատ, անկախ ու

միացեալ հայրենիքին հանդէպ անսասան հաւատքին եւ մանաւանդ՝ Հ.Մ.Ը.Մ.ական յաջորդական սերունդներու անձնագոհ նուիրումին եւ վճռակամ պայքարի պատրաստակամութեան», հաստատեց եղբ. Պողարեան:

Այս առիթով եղբայր Պողարեան ներկայացուց օրուան երկրորդ անակրկալը, երբ ուրախութեամբ յայտարարեց Հ.Մ.Ը.Մ.ի 107-րդ մասնաճիւղին՝ Միւնիխի միաւորին հիմնադրութեան լուրը:

Շարունակելով, եղբ. Պողարեան շեշտեց, որ Հ.Մ.Ը.Մ. իր 97-ամեայ գոյութեան ընթացքին միշտ ծառայած է ազգին, զօրացած է անով, լաւ ու վատ օրերուն չէ զլացած իր որդիներուն արեան դնով իսկ կանգնելու հայրութեան եւ հայրենիքին կողքին: Ան հաստատեց, որ ասոր լաւագոյն փաստը այն է, որ Հ.Մ.Ը.Մ.ը իր ներգրուած ունեցաւ վերանկախացած Հայաստանի եւ ազատագրուած Արցախի ամրագրման ու վերելքին մէջ:

Այնուհետեւ, իր խօսքը ներկայ Հ.Մ.Ը.Մ.ականներուն ուղղելով եղբ. Գրիգորիս Պողարեան ըսաւ. «Այսօր Հ.Մ.Ը.Մ.ի ջահը փոխանցուած է ձեզի, սիրելի՛ Հ.Մ.Ը.Մ.ական քոյրեր եւ եղբայրներ: Դո՛ւք էք մեր յոյսը, եւ ձեզմէ կ'ակնկալուի շարունակել Հ.Մ.Ը.Մ.ի յաղթական երթը: Զեզմէ անոնք որոնք առիթը ունեցան մասնակցելու Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ բանակումին, ար-



դէն իսկ ծանօթ են բանակումին նշանաբանին՝ «Արագածէն Արարատ, տէրն ենք մեր դատին»: Դատին տէրն է իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ական եւ, ինչու ոչ, իւրաքանչիւր հայ: Իրականութիւնն է, որ Հ.Մ.Ը.Մ.ական եղբայրներ ցարդ Արարատի լանջերուն թէ՛ գագաթին բարձրացուցած են հայկական Յոագոյնը, սակայն մեզմէ իւրաքանչիւրին երազն է, որ Յոագոյնը յաւերժ ծածանի Արարատի կատարին: Այդ երազին իրականացման ճանապարհին վրայ կատարուելիք աշխատանքին մէջ կարեւոր բա-

ժին մը կ'իյնայ ձե՛ր՝ նոր սերունդի ուսերուն: Ուրեմն, յառաջ, կամաւոր բանակ, դէպի անխուսափելի յաղթանակ», եզրափակեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եղբայրը:

ԲԱԺԱԿԱՏՈՒՉՈՒԹԻՒՆԸ
Եղբայր Պողարեանի խօսքէն ետք, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Բաֆֆի Մուսթոֆեանի եւ ԼԵՎԱՄ-ի ներկայացուցիչ եղբ. Յարութ Ալաճաճեանի ձեռամբ տեղի ունեցաւ ԼԵՎԱՄ-ի վահան-



ներու տուչութիւն. նախակրթարանի բաժնի յատուկ վահանը յանձնուեցաւ



Ազգային Սրբոց Քառասնից Մանկանց վարժարանին, միջնակարգին՝ Ազգային Սուրէն Խանամիրեան Քոլէճին, իսկ երկրորդականին՝ Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան Ճեմարանին:

ԼԵՎԱՄ-ի մասնակցող աշակերտներէն լաւագոյն մարզիկի եւ մարզիկուհիի բաժակներուն տիրացան Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան Ճեմարանէն Քրիստ Բրուտեան եւ Սերին Սարգիսեան, իսկ լաւագոյն արդիւնք արձանագրող մարզիչի բաժակը յանձնուեցաւ Վարդուկ Մարգարեանին:

ՏՈՂԱՆՑՔԸ

Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան շեփորախումբին առաջնորդութեամբ սկսաւ տողանցքը, կարգապահ, խանդավառ եւ յուսալից քայլերով: Դաշտը լեցուցած բազմահազար ժողովուրդը յաջորդաբար ողջունեց Լիբանանի Երիտասարդական Միութեան անդամները, Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրութի, Զահլէի, Պուրճ Համուտի, Այնճարի, Անթիլիասի, Ժըտէյտէի, Պաուլըրիէի եւ Ռաուտայի մասնաճիւղերու սկաուտական խումբերը, որոնց յաջորդեցին միութեան երկար տարիներ ծառայած վեթերանները:


Մարզական շարքերու՝ ներկայացուցչական, կրտսերներու եւ մասնաճիւղերու մարզական խումբերուն տողանցքը ընթացք առաւ Հ.Մ.Ը.Մ-ի Այնճարի շեփորախումբին առաջնորդութեամբ: Տողանցեցին նաեւ ԼԵՎԱՄ-ի

մասնակից վարժարաններու աշակերտները. Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան Ճեմարան, Հայ կաթողիկէ Սրբուհի Ագնէս, Ազգային Քառասնից Մանկանց, Հայ կաթողիկէ Ս. Խաչ-Հարպոյեան, Ազգային Եղիշէ Մանուկեան, Հայ Աւետարանական Թորոսեան, Ազգային Լեւոն եւ Սոփիա Յակոբեան, Հայ կաթողիկէ Մեսրոպեան եւ Ազգային Սուրէն Խանամիրեան:

Տողանցքի աւարտին, հիւրաբար Լիբանան գտնուող երգիչ Մակիչ (Մկրտիչ Մկրտիչեան) հանդէս եկաւ ազգային երգով մը՝ խանդավառելով ներկաները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՊԱՏԳԱՄԸ

Փառատօնին փակման խօսքը արտասանեց եւ իր պատգամը փոխանցեց Լի-





բանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Եպս. Փանոսեան: Հայաստանի անկախութեան 97-րդ տարեդարձին նուիրուած այս փառատօնը Առաջնորդը նկատեց առիթ մը հաղորդուելու հայ ազգի պանծալի պատմութեան հետ եւ վերջիջելու այն պահը, երբ դարաւոր ստրկութենէ եւ Մեծ Եղեռնի ազգակործան արհաւիրքներէն ետք հայու թիւը 28 Մայիս 1918-ին իր անկախութիւնը հռչակեց պապենական հողերուն վրայ:

«Յաւերթօրէն ճառագայթող պատմական այդ առիթէն արդէն իսկ անցած են 97 տարիներ: Եւ այսօր, ազատ հայրենիք ունենալու հպարտանքով եւ անկախ ըլլալու գիտակցութեամբ հաւաքուած ենք տօնական միջնորդի մէջ, խոնարհելու մեզի ազատութիւն եւ անկախու-

թիւն պարգեւած յաւերթալոյս այն նահատակներուն ու անմահ հերոսներուն յիշատակին դիմաց, որպէսզի անոնց շունչը անցնի մեր հոգիներէն եւ անոնց հերոսական ոգիէն մասնիկ մը կաթի մեր արեան մէջ», հաստատեց Առաջնորդը:

Շահէ Եպս. Փանոսեան շեշտեց, որ դարաւոր տագնապներու եւ մեծ մարտահրաւէրներու դէմ յանդիման կանգնած հայու թիւը կը գիտակցի, որ կերտուած անկախութիւնը պսակն է հաւատքով, Արամ Մանուկեանի օրինակով, գաղափարով եւ նուիրումով մարտի դաշտ նետուած այն հայորդիներուն, որոնք մահը արհամարհելով ապրելու կամքը արտայայտեցին ու կառչեցան անոր:

Իր խօսքը եզրափակելով՝ Առաջնոր-

դը կոչ ուղղեց շարունակելու Մայիս 28 կերտած հերոսներու ուղին: Ան ըսաւ. «Ուխտե՛նք պայծառ պահել վասն ազատութեան եւ անկախութեան ինկած մեր նահատակներուն հանդէպ մեր հաւաքական գիտակցութիւնը. ուխտե՛նք հօր պահել հայրենիքը եւ աշխարհի ճանապարհներուն վրայ ջինջ պահել մեր ինքնութիւնը:

«Հաստատ մնանք հայութեան հաւատքին մէջ, հաստատ եւ անշեղ ըլլանք մեր հայրենասիրական կեցուածքներուն մէջ ու հաստատ մնանք մեր ժողովուրդի շինարար, կարգապահ եւ քաղաքացիական հաւատարմութեամբ արտայայտուած նուիրական սկզբունքներուն հանդէպ:

«Գօտեպնդուի՛նք մեր անմահ հերոսներուն ոգիով եւ ապրինք անոնց ազատատենչ ոգիէն ճառագայթող օրինակին հաւատարմութեամբ. ուժեղանանք իրարմով, մեր շունչը նուիրենք հայրենիքին, որպէսզի հասնինք մեր ազգութեան դարաւոր երազներու պսակումին:

«Ապրի՛ն Հ.Մ.Ը.Մ.ի դրօշին տակ գործող բոլոր նուիրեալները. կեցցէ՛ հայ ժողովուրդը եւ յաւիտ անսասան մնայ ազատ ու անկախ Հայաստանը»:

Մայիսեան յաղթանակի, վերապրումի եւ հայօրէն երթը շարունակելու երթին հաւատարիմ մնալու խոստումով, փառատօնը վերջ գտաւ հրավառութեամբ:





ՄԱՅԻՍԵԱՆ ՓԱՌԱՏՕՆ ԱՅՆՃԱՐԻ ՄԷՋ

Թղթակից
ԱՅՆՃԱՐ

Չորեքշաբթի, 27 Մայիս 2015-ի երեկոյեան, Այնճարի մէջ տեղի ունեցաւ Մայիսեան փառատօն՝ կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Այնճարի մասնաճիւղին եւ հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան:

Ձեռնարկին առաջին բաժինը սկսաւ Հ.Մ.Ը.Մ-ի Այնճարի մասնաճիւղի մոկլիներու, գայլիկ-արծուիկներու եւ արի-արենոյշներու տողանցքով, որ ընթացք առաւ Հ.Մ.Ը.Մ-ի Այնճարի



ակումբէն՝ առաջնորդութեամբ մասնաճիւղի շեփորախումբին:

Հոժ բազմութիւն մը, սկաուտական խումբերը եւ շեփորախումբը շրջեցան գիւղին փողոցներուն մէջ՝ հնչեցնելով Մայիս 28-ի անկախութեան յաղթանակը պանծացնող եղանակներ:

Տողանցքի աւարտին, բազմութիւնն ու հայրենակիցները ուղղուեցան Հ.Մ.Ը.Մ-ի ակումբ, ուր տօնակատարութեան երկրորդ բաժինը սկսաւ Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներով, կատարողութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Այնճարի շեփորախումբին:

Ապա, Հ.Մ.Ը.Մ-ի Այնճարի մասնաճիւղի վարչութեան անդամ եղբ. Սեպուհ Պոյաճեան իր բացման խօսքին մէջ ըսաւ. «Մայիս 28-ն հայ ժողովուրդին համար հպարտութեան եւ յաղթանակի տօն է, որովհետեւ Յեղասպանութեան ենթարկուելէ միայն երեք տարիներ ետք, հայ ժողովուրդը յաջողեցաւ պարտութեան մատնել դարաւոր թշնամին եւ, վերականգնելէ ետք Հայաստանի պետականութիւնը, Սարգարապատի մէջ պարզեց եռագոյն դրօշը»: Ան իր խօսքը աւարտեց ըսելով. «Անկախութիւն կերտած սերունդը մեզի աւանդ ձգած է գուրգուրալ մեր երկրին վրայ, պաշտպանել մեր պետականութիւնը բո-

լոր միջոցներով եւ աշխատիլ Հայաստանի հզօրացման համար»:

Այնուհետեւ, ան հրաւիրեց օրուան պատգամախօս Բաֆֆի Տէմիրճեանը՝ փոխանցելու իր խօսքը: Տէմիրճեան ըսաւ, որ հայ ժողովուրդի Մայիսեան յաղթանակի կամքին գրաւականը հայ ժողովուրդին հաւատքն է՝ ազգին, եկեղեցւոյ, ազգային եւ կրօնական արժէքներուն եւ, վերջապէս, 1918 Մայիս 28-ին կերտուած ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի Եռագոյն դրօշին նկատմամբ:

Ան դիտել տուաւ, որ ներկայիս Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի մէջ հայ ժողովուրդին դիմագրաւած դժուարու-





Թիւններուն դէմ յանդիման կանգնելու գրաւականը հայ ժողովուրդի միասնականութիւնն ու հաւաքական ուժն է:

Իր խօսքին աւարտին, Տէմիրճեան կոչ ուղղեց ներկաներուն իրենց հոգիներուն մէջ վառ պահելու Արարատի պատկերը, մեր նահատակներուն հանդէպ ունեցած յարգանքը շարունակելու եւ Արարատի պատկերով սնանելու՝ ձգտելով հասնիլ անոր:

Բանախօսութենէն ետք ազգային-յեղափոխական երգերով հանդէս եկաւ Նժդեհ Պոտրումեան: Ան իր երգերով Մայիս 28-ի անկախութեան ոգին փոխանցեց եւ մեծ խանդավառութիւն ստեղծեց:

Հուսկ, կատարուեցաւ Այնճարի վարժարաններուն միջեւ տեղի ունեցած մարզական խաղերուն յաղթական խումբե-

րուն մրցանակներուն եւ բաժակներուն բաշխումը:

Նշենք, թէ Կիրակի, 24 Մայիսին տեղի ունեցած էր նահատակ Պետիկ Ինճէեանի յիշատակին երկրորդական դասարաններու աշակերտութեան եւ ուսուցչական կազմերուն միջեւ Ֆուլթպոլի մրցում մը: Յաղթող խումբը բաժակը նուիրեց Պետիկ Ինճէեանի ընտանիքին:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԽՈՒՄԲԸ ՄՆԱՅ Բ. ԴԱՍԱԿԱՐԳ

Լիբանանի Ֆուլթպոլի Բ. դասակարգի ախոյեանութեան մրցումներու աւարտին, Հ.Մ.Ը.Մ.Ի Ֆուլթպոլի ներկայացուցչական խումբը չյաջողեցաւ Ա. դասակարգ բարձրանալ, զորն դառնալով լիբանանեան երկու այլ խումբերու ներքին մէկ համաձայնութեան:

Հ.Մ.Ը.Մ. դարձի իր վերջին մրցումը Ռիատա Ուալ Ատապ խումբին դէմ կատարեց Պուրճ Համուտի քաղաքապետարանի դաշտին վրայ եւ 6-0 արդիւնքով փայլուն արդիւնք մը արձանագրեց, սակայն նոյն պահուն Ա. դասակարգի իր տոմսը ապահոված Իթթիմահին սպիտակ հաւասարութիւն մը նուիրեց Սաթէսի եւ երկու խումբերը միասնաբար բարձրացան Ա. դասակարգ:

Յայտնենք, որ Հ.Մ.Ը.Մ.Ի Ֆուլթպոլիստները այդ օր դաշտ ներկայացան Հայկական Յեղասպանութեան զոհե-



րուն յիշատակը ոգեկոչող պաստառով մը:

Հ.Մ.Ը.Մ.Ի վեց կուրերը նշանակեցին Խաժակ Սինանեան (հեթրիք), Ճոնի Կոնճեան, Գէորգ Օհանեան եւ Շանթ Գէորգեան:

Հ.Մ.Ը.Մ. թէեւ Բ. դասակարգ մնաց,

սակայն Լիբանանի Ֆուլթպոլիսէր հասարակութեան յուշեց, որ խումբը վերագտած է իր ճիշդ ուղին եւ մօտ օրէն կրնայ լուրջ վտանգ ներկայացնել իր մրցակիցներուն:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱԼԷՊԻ ՄԱՍՆԱԾԻՒՂԻ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԱՇԽՈՅԺ ԿԵԱՆՔԸ

Հ.Մ.Ը.Մ.ի Հալեպի
Մասնաճիւղի Սկաուտ Խորհուրդ
ՀԱԼԷՊ



ՀԱՅ «ԵՐԷՑԻ ՕՐ»

Կիրակի, 31 Մայիս 2015-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Հալեպի մասնաճիւղի երէց եւ պարման միաւորը կատարեց կիսօրեայ գործունէութիւն մը՝ նուիրուած Հայ «Երէցի օր»-ուան: Դրօշակի արարողութենէն ետք միաւորի պատասխանատու քոյր Մարիանա Համմասեան անդրադարձաւ գործունէութեան նպատակին, որն է՝ հայ երիտասարդին մտային եւ ֆիզիքական զարգացումը: Խմբակային դրուժեամբ տեղի ունեցած դաշտային խաղերը Հ.Մ.Ը.Մ.ականներուն մօտ բարձր պահեցին մրցակցութեան ոգին: Օրուան դասախօս-զրուցավարն էր հոգեբան Նանօր

ԳԱՅԼԻԿ ԵՒ ԱՐԾՈՒԻԿ ՄԻԱԻՈՐՆԵՐՈՒ «ՄՈԿԼԻԻ ՕՐ»Ը
Կիրակի, 24 Մայիս 2015-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Հալեպի մասնաճիւղի գայլիկներն ու արծուիկները կազմակերպեցին գործունէութիւն մը՝ նուիրուած «Մոկլիի օր»-ուան: Գործունէութիւնը տեղի ունեցաւ Ազգ. Կիւլպէնկեան վարժարանին մէջ, մասնակցութեամբ աւելի քան 278 գայլիկ-արծուիկներու, զոյգ յայտագիրներով: Գործունէութիւնը սկիզբ առաւ մեծ կանչով: Յայտագիրները հարուստ էին դասարանային եւ դաշտային խաղերով, ձեռային աշխատանքներով եւ դաստիարակչական ծրագիրով: Քոյրերն ու եղբայրները մօտէն ծանօթացան նաեւ Մոկլիի պատմութեան՝ ճանչնալով անոր բարեկամներն ու թշնամիները: Աւարտին տեղի ունեցաւ յեղափոխական երգերու խրախճանք, ապա գայլիկներն ու արծուիկները բարձր տրամադրութեամբ եւ մեծ խանդավառութեամբ գործունէութիւնը փակեցին «Յառաջ նահատակ» քայլերգով:

Գարայեան-Շահագեան, որ ներկայացուց «Երիտասարդութեան իրաւունքներն ու դիմագրաւած դժուարութիւնները» նիւթը: Քոյրերն ու եղբայրները անվերապահօրէն յայտնեցին իրենց կարծիքները եւ զրուցեցին ներկայ պայմաններուն ստեղծուած դժուարութիւններուն մասին, ապա լուծումներ առաջարկեցին գաղութին երիտասարդութեան կեանքը աւելի արդիւնաւէտ եւ եռուն դարձնելու համար:

Ազգային-յեղափոխական երգերու խրախճանքէն ետք, գործունէութիւնը իր աւարտին հասաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

«ՇԱԽԱՐՇ ՔՐԻՍԵԱՆ» ԱՐԻ-ԱՐԵՆՈՅՇ ՄԻԱԻՈՐԸ ՆՇԵՑ ՄԱՅԻՍ 28-Ի ՅԱՂԹԱՆԱԿԸ

Կիրակի, 31 Մայիս 2015-ին, «Շաւարշ Քրիսեան» արի-արենոյ միաւորը կազմակերպեց միօրեայ գործունէութիւն մը՝ նուիրուած Հայաստանի Ա. Հանրապետութեան անկախութեան: Գործունէութեան մասնակից 46 քոյրերն ու եղբայրները բաժնուեցան խմբակներու, որոնք կը կրէին անկախութեան շրջանի հերոսամարտերու հրամանատարներուն եւ հանրապետութեան առաջին վարչապետներուն անունները: Գործունէութիւնը հարուստ էր դաստիարակչական եւ սկաուտական ծրագիրներով:

Եղբ. Բաֆֆի Չալօղլեան ներկայացուց Հայաստանի Ա. Հանրապետութեան անկախութեան պատմութիւնը, որմէ ետք տեղի ունեցաւ չափական մարզանք, հայրենասիրական երգերու ուսուցում, դաշտային խաղեր եւ օրուան թեմայով պատի թերթի պատրաստութիւն: Քոյրերն ու եղբայրները հետեւեցան վաւերագրական տեսերիզի մը՝ նուիրուած Մայիսեան անկախութեան: Սովորութիւն դարձած սկաուտական խրախճանքով Հ.Մ.Ը.Մ.ականները տողորուեցան ազգային շունչով եւ հայրենասիրութեամբ:

ՔՈՅՐ ՄԻՐԷՅ ԹԻԻԹԻԻՆՃԵԱՆ ՍՈՒՐԻՈՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐՈՒ ՓԻՆԿ-ՓՈՆԿԻ ԱԽՈՅԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Հալեպի փինկ-փոնկի մարզիկուհիներէն քոյր Միրէյ Թիւթիւնճեան, Մայիսին, Սուրիոյ համալսարաններու փինկ-փոնկի ախոյեանութեան մրցումներուն հանդիսացաւ առաջին: Մրցաշարքը տեղի ունեցաւ Յոմսի մէջ, մասնակցութեամբ Սուրիոյ բոլոր համալսարաններէն 15 մարզիկուհիներու եւ 20 մարզիկներու: Անհատական մրցումներուն Միրէյ մաս կազմեց երրորդ խմբակին: Ան յաջողեցաւ արձանագրել մէկ յաղթանակ եւ մէկ պարտութիւն: Չոյզի մրցումներուն, ան Հալեպի համալսարանը ներկայացնելով կարողացաւ պարտութեան մատնել Լաթաքիոյ (3-1), Յոմսի (3-0) եւ Թարթուսի (3-0) համալսարաններու խաղացողները, գրաւելով առաջին դիրքը: Երկրորդ դիրքը գրաւեց Լաթաքիան:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՎԷՊԻ ՄԱՍՆԱԾԻՂԻ ՄԿԱՌԻՏՆԵՐԸ ՅԻՇԵՑԻՆ ԵՒ ՊԱՀԱՆՋԵՑԻՆ

Թղթակից
ՀԱԼԷՊ



Հովանաւորութեամբ Հայոց Յեղասպանութեան 100-ամեակի Սուրբիոյ Կեդրոնական Յանձնախումբին, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրբիոյ Շրջանային Վարչութեան, կատարողութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրբիոյ Շրջանային Սկաուտ-Խորհուրդին եւ մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Հալէպի մասնաճիւղին, Կիրակի, 15 Մարտ 2015-ի առաւօտեան ժամը 9.00-ին, սկսուեցին եւ գայլիկ-արծուիկներ յատուկ օրակարգով գործունէութիւն մը ունեցան Ազգ. Կիւլպէնկեան վարժարանին եւ Հ.Մ.Ը.Մ.Ի պարտէզին մէջ: Անոնց գործունէութեան օրակարգին գլխաւոր կէտը դարձաւ Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին առիթով ունենալ խմբանկար

մը, որուն մէջ իւրաքանչիւրը պիտի բռնէր 100-ամեակն ու հայ ժողովուրդի պահանջատիրութիւնը խորհրդանշող ցուցանակ մը: Շրջանային Խմբապետուհի քոյր Նայիրի Զաքոյեան քոյր-եղբայրներուն բացատրեց անմոռուկ ծաղիկին խորհուրդն ու անոր գոյներուն նշանակութիւնը, իսկ Շրջանային խմբապետ եղբ. Եղիա Քիլէճեան բացատրեց «Կը յիշեմ եւ կը պահանջեմ» կարգախօսին իմաստը,

չեշտելով, որ բոլորս 100 տարիէ ի վեր կը յիշենք Հայոց Յեղասպանութիւնը եւ կը պահանջենք մեր արդար իրաւունքները, իսկ նորահաս սերունդները պիտի շարունակեն մեր պայքարի ուղին: Գործունէութիւնը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ԵՒ ՍՈՒՐԻՈՅ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՆՈՒՐՈՒԹՎ ԿԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Թղթակից
ՀԱԼԷՊ

Հովանաւորութեամբ Հայոց Յեղասպանութեան 100-ամեակի Սուրբիոյ Կեդրոնական Յանձնախումբին, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Հալէպի մասնաճիւղի վարչութեան եւ Սկաուտ-Խորհուրդին, Ուրբաթ, 17 Ապրիլ 2015-ին, Մ. Աստուածածին եկեղեցւոյ ներքնասրահին մէջ, Հալէպի պետական սկաուտական 7-րդ եւ 8-րդ վաշտերը ներկայացուցին արաբերէն յայտագիրով հանդիսութիւն մը՝ նուիրուած Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին: Հանդիսութեան ներկայ էին Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրբիոյ Շրջանային Վարչութիւնն ու Շրջանային Սկաուտ-Խորհուրդը, Հալէպի մասնաճիւղի վարչութիւնն ու Սկաուտ-Խորհուրդը, Հալէպի պետական սկաուտութեան ատենապետը, պետական սկաուտա-

կան վաշտապետներ, անդամներ եւ բազմաթիւ հանդիսականներ: Հանդիսութիւնը բացուած յայտարարուեցաւ Սուրբիոյ եւ Հայաստանի քայլերգներով, ապա Հալէպի մասնաճիւղի խմբապետ եղբ. Ծերուն Գահուէճեան ներկայացուց արաբերէն բացման խօսքը: 7-րդ վաշտէն քոյր Նանօր Տօնոյեան ֆլիւթով նուագեց «Մառութիւնի», «Տէր ողորմեա» եւ «Ատանայի ողբը»: Օրուան բանախօս, Սկաուտ-Խորհուրդի անդամ եղբ. Յովիկ Հապէչեան հանգամանօրէն ներկայացուց Հայոց Յեղասպանութեան ծրագրաւորումը, նպատակներն ու հանգրուանները: Բանախօսը նշեց, որ իբրեւ Յեղասպանութենէն մազապուրծ փրկուած ժողովուրդի զաւակներ, ապրելով ու ծաղկելով սուրիական հայրենիքին մէջ, մենք երախտապարտ ենք անոր եւ Սուրբիոյ ասպնջական ժողովուրդին, որուն հետ մինչեւ օրս կ'ապրինք եւ պիտի շարունակենք ապրիլ եղբայրական ջերմ յարաբերութեամբ: Ան յայտնեց, թէ



նոյն թշնամին այսօր դարձեալ կը շարունակէ իր ոճրագործութիւնները, բայց տարբեր գործելաոճով: Իր խօսքին մէջ ան անդրադարձաւ նաեւ Սուրիոյ անկախութեան տօնին, դրուատելով սուրիացի ժողովուրդին մարտունակ ոգին: Այնուհետեւ տեղի ունեցաւ վաւերագրական տեսերիզներու ցուցադրութիւն, նուիրուած Հայոց Յեղասպանութեան եւ անմոռուկ ծաղիկի բացատրութեան: Ծրագրէն քոյրեր Մարէն Պապեան եւ Թամար Կիլոյեան ասմունքեցին Հայոց

Յեղասպանութեան նուիրուած արաբերէն քերթուած մը, որուն հեղինակն էր Մարէն Պապեան:

Աւարտին, 7-րդ վաշտի վաշտապետ եղբ. Յակոբ Ուրիշիկեան եւ 8-րդ վաշտի փոխ վաշտապետ եղբ. Բաֆֆի Սիւլահեան Հալէպի պետական սկառտական վաշտերու վաշտապետներուն փոխանցեցին Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին առիթով պատրաստուած խորհրդանշական յուշանուէրներ:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱԼԷՊԻ ՍԿԱՌԻՏՆԵՐԸ ՆՇԵՅԻՆ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԸ

Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի Մասնաճիւղի Սկառտ. Խորհուրդ ՀԱԼԷՊ

Հովանաւորութեամբ Հայոց Յեղասպանութեան 100-ամեակի Սուրիոյ Կեդրոնական Յանձնախումբին, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի վարչութեան եւ Սկառտ. Խորհուրդին, Կիրակի, 26 Ապրիլ 2015-ին տեղի ունեցաւ հանդիսութիւն մը՝ նուիրուած Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ ներքնասրահին մէջ: Հանդիսութեան ներկայ էին Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութիւնն ու Շրջանային Սկառտ. Խորհուրդը, Հալէպի մասնաճիւղի վարչութիւնն ու Սկառտ. Խորհուրդը, հալէպահայ միութիւններու ներկայացուցիչներ, անդամներ եւ մեծաթիւ ծնողներ:

Հանդիսութիւնը բացուած յայտարարուեցաւ Սուրիոյ եւ Հայաստանի քայլերգներով, ապա Հալէպի մասնաճիւղի խմբապետ եղբ. Ծերուն Գահուէճեան բացման խօսքով անդրադարձաւ Հայոց Յեղասպանութեան:

Գեղարուեստական յայտագիրը սկսաւ գայլիկ-արծուիկ միաւորներու անդամներուն կողմէ պատրաստուած բացման պատկերով, որմէ ետք քոյր Նանօր Տօնոյեան ֆիլմով նուագեց «Տէր Ողորմեա»ն, ապա եղբ. Սուրէն Աճէմեան մեներգեց Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին նուիրուած նոր երգ մը, կիթառի ընկերակցութեամբ եղբ. Աւօ Եփրեմեանի: Այնուհետեւ, քոյրեր Ալինա Գարբուզեան, Անի Մանսուրեան, Ռիթա Խաչոյեան եւ եղբ. Յովիկ Գանթարեան ասմունքեցին Յեղասպանութեան նուիրուած քերթուածներ:

Ապա, ներկաները հետեւեցան Հայոց Յեղասպանութեան մասին վաւերագրական տեսերիզի մը, որմէ ետք բեմ հրաւիրուեցաւ օրուան բանախօս, Սուրիոյ Հայ Դատի Յանձնախումբի անդամ Արամ Աւագեան: Ան նշեց, թէ «100-ամեակի առիթով պէտք է մեզի վերապահենք զգացական երեւոյթները եւ միջազգային հանրութեան ներկայանանք փաստացի տուեալներով, ինչպէս օրինակ՝ լուսարձակի տակ առնելով Յեղասպանութեան տնտեսական դրդապատճառները, Օսմանեան դրամատան յստակ դերակատարութիւնը հայութեան տնտեսական կարելիութիւնները սիոնիստական կազմակերպու-

թիւններու փոխանցման մէջ: Այս եւ մարդասպանական շարք մը ծրագրերով ի յայտ կու գայ գոյութիւնը Հայոց Յեղասպանութիւնը իրականացուցած ոճրագործ խմբակի մը, որ բաղկացած է ծրագրողներէ, գործադրողներէ եւ օգտուողներէ, որոնք միեւնոյն պատկերներով այսօր անգամ մը եւս կը յայտնուին սուրիական տագնապի ընթացքին»:

Ապա, տեսերիզի վրայ ներկայացուեցաւ անմոռուկ ծաղիկին բացատրութիւնը, որմէ ետք քոյրեր Նարէ Քէշիշեան, Մեղրիկ Ճանէցեան եւ Նորա Սիմոնեան մեներգեցին «Խուժան ասկեար» եւ «Զայն մը հնչեց» երգերը: Մասնաճիւղի խմբապետ եղբ. Ծերուն Գահուէճեան բեմ հրաւիրեց Տ. Պարգեւ Քհնյ. Պալգէորգեանը, որ իր խօսքին մէջ ըսաւ. «Հայը կը գոյատեւէ շնորհիւ Աստուծոյ եւ իր ունեցած հզօր կամքին, որովհետեւ հայը միշտ եղած է պայքարող եւ բոլոր տառապանքները յաղթահարելով կարողացած է շարունակել իր կեանքը: Այսօր, բոլորս վերանորոգեցինք մեր ուխտը՝ հաւատարիմ մնալու Աստուծոյ եւ ազգային մեր պատկանելիութեան»:

Հանդիսութիւնը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով եւ քահանայ հօր «Պահպանիչ»ով:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՍՈՒՐԻՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ՄԱՐԶԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒՐՈՒԱԾ ՊԱՍՔԵԹՊՈՒԻ ՄԻՋ-ՎԱՐԺԱՐԱՆԱՅԻՆ ԽԱՂԵՐ

Շողիկ Ազարիկեան-Ադամեան
ՀԱԼԷՊ

Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին առիթով, Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան մարզական յանձնախումբը կազմակերպեց պասքեթպոլի միջ-վարժարանային խաղեր:

Միջնակարգի բաժնի տղոց աւարտական մրցումը իրարու դէմ հանեց Կրթասիրաց Ս. Չեմպէրճեան երկրորդական վարժարանը եւ Ազգ. Քարէն Եփփէ Ճեմարանը: Խաղը տեղի ունեցաւ Ուրբաթ, 1 Մայիս 2015-ին:

Մրցումէն առաջ, մարզական յանձնախումբէն եղբ. Յարութ Խալպուրճեան տեղեկացուց, որ մեր մէջ կը գտնուի յարգելի հիւր մը՝ քոյր Մարի Սուրատեանը եւ անդրադարձաւ Սուրիոյ մակարդակին անոր արձանագրած պատուաբեր արդիւնքներուն: Ապա հրաւիրեց զայն կատարելու խաղին բացումը:

Խաղը աւարտեցաւ Կրթասիրաց վարժարանի տղոց յաղթանակով, որմէ ետք հասաւ մետալներու տուչութեան պահը, երբ երկու վարժարաններու տղոց կուրծքերը զարդարուեցան մետալներով:

Բաժակին արժանացան Կրթասիրաց Ս. Չեմպէրճեան երկրորդական վարժարանի տղաքը:

Օրուան լաւագոյն խաղացողը եւ առաւելագոյն կէտ արձանագրողը ընտրուեցաւ Ազգ. Քարէն Եփփէ Ճեմարանէն Պետիկ Մահսէրէճեան:

Նոյն օրը տեղի ունեցան երկրորդական եւ միջնակարգ բաժնիներու տղոց եւ աղջկանց shooting-ի մրցումները, որոնք ունեցան հետեւեալ պատկերը:-

- ՏՂԱՔ**
Առաջին հանգրուանի արդիւնքներ.-
 Նարեկ Թահահան 20 կէտ
 Պետիկ Մահսէրէճեան 18 կէտ
 Էլի Պարմաքսըզեան 14 կէտ
 Մաժտ Ժրպարա 12 կէտ
 Անդրանիկ Սարգիսեան 7 կէտ
 Սերժ Գազանճեան 5 կէտ
 Սահակ Իսկէնեան 4 կէտ
 Պոպ Ֆահտ 4 կէտ
 Շանթ Պիթար 4 կէտ
 Ժան Փիէր 3 կէտ

- Աւարտական արդիւնքներ.-**
 Առաջին՝ Մաժտ Ժրպարա 13 կէտ
 Երկրորդ՝ Նարեկ Թահահան 12 կէտ
 Երրորդ՝ Էլի Պարմաքսըզեան 11 կէտ
 Պետիկ Մահսէրէճեան 9 կէտ
 Անդրանիկ Սարգիսեան 6 կէտ

- ԱՂՋԻԿՆԵՐ**
Առաջին հանգրուանի արդիւնքներ.-
 Կալի Պապօղլեան 13 կէտ





Նայա Զըղէյր 11 կէտ
 Նանար Արթինեան 10 կէտ
 Աննա Առաքելեան 10 կէտ
 Ծովակ Սարգիսեան 9 կէտ
 Դայար Կտանեան 6 կէտ
 Նանօր Արթինեան 6 կէտ
 Գառնի Շահինեան 6 կէտ
 Ալին Սարգիսեան 4 կէտ
 Մեղեղի Մուրատեան 4 կէտ
 Ալիք Սարեան 2 կէտ
 Անի Մկրտիչեան 2 կէտ
 Մարմանդ Գազանճեան 2 կէտ

Աւարտական արդիւնքներ.-

Կալի Պապօղլեան
 Նանար Արթինեան
 Նայա Գազանճեան
 Աննա Առաքելեան
 Ծովակ Սարգիսեան

Միջնակարգի բաժնի մրցաշարքին առաւելագոյն կէտ արձանագրող խաղացողն էր Նաթալի Հաթար, իսկ լաւագոյն խաղացողը՝ Լուսի Պուտագեան: Միջնակարգի բաժնի մրցաշարքին լաւագոյն խաղացողներն էին Մաթտ ժըպարա եւ Պետիկ Մահսէրէճեան:

Շաբաթ, 2 Մայիս 2015-ին տեղի ունեցաւ պասքեթպոլի երկրորդական բաժնի տղոց աւարտական խաղը Լ.Ն.-Գ.Կիւլպէնկեան Կեդրոնական Վարժարանի եւ Ս. Չեմպէրճեան Կրթասիրաց երկրորդական վարժարանի աշակերտներուն միջեւ:

Մրցումին ներկայ գտնուեցան Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Յարութ Խաչատուրեան, Լ.Ն.-Գ.Կիւլպէնկեան երկրորդական վարժարանի տնօրէնուհի Գայիանէ Թումպալեան, Կրթասիրաց երկրորդական վարժարանի ներկայացուցիչ Վաչէ Միշոյեան, մարզական յանձնախումբի անդամներ, վարժարաններու ներկայացուցիչներ եւ քաջալերող տղաք ու աղջիկներ:

Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Յարութ Խաչատուրեան խօսք առնելով ըսաւ, թէ Հայոց Յեղասպանութեան հարիւրամեակին նուիրուած այս մրցումները հասած են իրենց աւարտին եւ մեր մէջ կը մնան միայն յիշատակներ: Ան յոյս յայտնեց, որ յառաջիկայ տարիներուն տարբեր յանձնախումբեր կը կազմակերպեն նմանօրինակ մրցումներ: Եղբ. Խաչատուրեան շնորհակալութիւն յայտնեց Լ.Ն.-Գ.Կիւլպէնկեան երկրորդական վարժարանի տնօրէնութեան, որ սիրայօժար սրահը տրամադրեց, ինչպէս նաեւ իրաւարար՝ Յակոբ Թահհանին:

Խաղին բացումը կատարեց Գայիանէ Թումպալեան եւ խաղը աւարտեցաւ ի նպաստ Լ.Ն.-Գ.Կիւլպէնկեան Կեդրոնական վարժարանին:

Մրցաշարքի լաւագոյն խաղացող ընտրուեցաւ Նարեկ Թահհան:

Խաղի աւարտին, բոլոր մասնակիցները անգամ մը եւս միասին բարձրաձայն գոչեցին՝ «ԿԸ ՅԻՇԵՍ ԵՒ ԿԸ ՊԱՀԱՆՋԵՍ»:



Հ.Մ.Ը.Մ.-ԱԼՍՈՒՓՈՒԻ ՖՈՒԹՊՈՒԻ ՄՐՑՈՒՄԸ

ԿԸ ՆՈՒԻՐՈՒԻ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ

Թղթակից
ԱԹԵՆՔ

Աթէնքի Բ. դասակարգի Փոլթալոյի մրցումներու ծիրին մէջ, Կիրակի, 19 Ապրիլին տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ. Աթէնք ընդդէմ Ալսուփոյի մրցումը, որ նուիրուեցաւ Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին:

Մրցումը նախորդեց կուկիկ արարողութիւն մը, ի յարգանք Հայոց Ցեղասպանութեան մէկուկէս միլիոն անմեղ զոհերուն: Հ.Մ.Ը.Մ.ի Փոլթալոյի խումբին հայ եւ յոյն վեթերան մարզիկներ, 100-ամեակի խորհրդանշանը կրող շապիկներ հագած՝ մարզա-

ղաշտ մտան պաստառ մը իրենց ձեռքին: Պաստառին վրայ արձանագրուած էր օրուան խորհուրդը:

Երկու խումբերու մարզիկները շարքի շարուեցան մարզադաշտին կեդրոնը եւ ներկայ մարզասէր ազգայիններուն հետ միասին վայրկեան մը լռութեամբ յարգեցին Մեծ Եղեռնի զոհերուն յիշատակը: Ապա, պաստառը գետեղուեցաւ մարզա-



ղաշտին անկիւնը, որուն առջեւէն տողանցելով բոլորը մէկական ծաղիկ գետեղեցին անոր առջեւ:

Հ.Մ.Ը.Մ.ի մրցակից խումբին՝ Ալսուփոյի պատասխանատուները ծաղկեպսակ մը գետեղեցին պաստառին առջեւ, իսկ Հ.Մ.Ը.Մ.ին յանձնեցին յուշատախտակ մը՝ նուիրուած 100-ամեակին:

Իրաւարարի սուլիչին ազդանշանին հետ սկսաւ մրցումը, որ աւարտեցաւ 2-2 արդիւնքով: Յուզիչ էր մրցումին այն պահը, երբ Հ.Մ.Ը.Մ.ի 2 կուկերը նշանակած մարզիկները ուղղուեցան պաստառին առջեւ, իրենց յաղթանակը ձօնելով 100-ամեակին:



ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒՄԸ ԼՈՂԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ՝ ԱԹԷՆՔԻ ՄԷՋ

Թղթակից
ԱԹԵՆՔ

Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին նուիրուած մարզական զանազան նախաձեռնութիւններու շարքին, Հ.Մ.Ը.Մ.ի Աթէնքի մասնաճիւղի վարչութիւնը կազմակերպեց լողի մրցումներ, որոնք տեղի ունեցան 31 Մայիսի առաւօտեան, Նէա Ջմիրոնիի փակ լողաւազանին մէջ:



Մրցումներուն ներկայ գտնուեցան Հ.Յ.Դ. Հայ Դատի Յանձնախումբի, Հ.Յ.Դ. «Արամ Մանուկեան» կոմիտէի, Հ.Կ.Խաչի «Ռուբինա» մասնաճիւղի եւ Հ.Յ.Դ. Յունաստանի Երիտասարդական Միութեան «Դրօ» խումբի ներկայացուցիչներ, ծնողներ եւ ստուար թիւով մարզասէր հասարակութիւն մը:

Ղովուրդի պահանջներուն եւ Թուրքիոյ շարունակուող մերժումի քաղաքականութեան՝ հայ ժողովուրդի դէմ իր գործած ոճիրին ուրացումով:

Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ.ի լողի 140 մարզիկները, համապատասխան տարիքներու բաժնուած, մրցեցան՝ վայելելով ներկաներու գնահատանքն ու ծափահարութիւնը:

Մրցումէն ետք, մասնակիցները Հ.Մ.Ը.Մ.ի Աթէնքի մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Յովիկ Տէր Յովակիմեանի ձեռամբ ստացան համապատասխան յիշատակի մետալներ եւ պատուոյ գիրքեր, որոնց վրայ տպուած էր 100-ամեակի նշանակը՝ համապատասխան գրութեամբ:

Վերոնիկ Քիւրէքճեանը՝ փոխանցելու օրուան պատգամը:

Քոյր Վերոնիկ Քիւրէքճեան նախ ներկաները հրաւիրեց մէկ վայրկեան լռութեամբ յարգելու մէկ ու կէս միլիոն նահատակներու յիշատակը, ապա անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան եւ առաքելութեան, հայ ժողովուրդի պահանջներուն եւ Թուրքիոյ շարունակուող մերժումի քաղաքականութեան՝ հայ ժողովուրդի դէմ իր գործած ոճիրին ուրացումով:

Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ.ի լողի 140 մարզիկները, համապատասխան տարիքներու բաժնուած, մրցեցան՝ վայելելով ներկաներու գնահատանքն ու ծափահարութիւնը:

Մրցումէն ետք, մասնակիցները Հ.Մ.Ը.Մ.ի Աթէնքի մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Յովիկ Տէր Յովակիմեանի ձեռամբ ստացան համապատասխան յիշատակի մետալներ եւ պատուոյ գիրքեր, որոնց վրայ տպուած էր 100-ամեակի նշանակը՝ համապատասխան գրութեամբ:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՒ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՄԵԾ ԿՈՐՈՒՄՏԸ՝ ԵՂԲԱՅՐ ԿԱՐՊԻՍ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

26 Ապրիլ 2015-ին իր աչքերը յա-

լի տե ն ա պ է ս փակեց յունահայ գաղութի վաստակաշատ անդամ, Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի ընտանիքի պատուակալ նախագահ եղբ. Կարպիս Գույունձեան:

Եղբոր յուղարկաւորութիւնը կատարուեցաւ Երեքշաբթի, 29 Ապրիլին, Նեոս Գոզմոսի Ս. Կարապետ եկեղեցւոյ մէջ, ուր դամբանական խօսքերով հանդէս եկան Յունաստանի Հայոց Թեմի Առաջնորդ Խորէն Արք. Տողրամաձեան, Հ.Յ.Դ.ի կողմէ Յովսէփ Պարազեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի կողմէ եղբ. Յակոբ Եթիմեան:



կան ժողովին ան ընտրուած է Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան անդամ: Իբրեւ ներկայացուցիչ թէ հրաւիրեալ, ան իր մասնակցութիւնը բերած է Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի յետ պատերազմեան ներկայացուցչական թէ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Պատգամաւորական բազմաթիւ ժողովներուն:

1980-էն մինչեւ իր մահը, Հ.Մ.Ը.Մ.ի «Մարգիկ» պաշտօնաթերթին աշխատակցած է իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի շրջանի թղթակից, ստորագրելով շահեկան յօդուածներ եւ թղթակցութիւններ:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

Եղբ. Կարպիս Գույունձեան ծնած է 12 Նոյեմբեր 1927-ին, Ֆիքսի գաղթականին մէջ: Փոքր տարիքէն ան նուիրուած է ազգային գործին, ի մասնաւորի՝ Հ.Մ.Ը.Մ.ին, որուն պատուակալ նախագահի տիտղոսին արժանացած է 1996-ին:

1968-ին, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 50-ամեակին նուիրուած հրապարակային հանդիսութեան ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութիւնը զինք պարգեւատրած է վկայականով մը:

1994-ին, եղբ. Կարպիս Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան կողմէ արժանացած է միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանին: Նոյն տարին իրեն պատիւ ընծայուած է Նէա Զմիռնիի հայկական յուշարձանին առջեւ Մեծ Եղեռնի զոհերուն յիշատակին դափնեպսակ գետեղելու:

Եղբ. Կարպիս երկար տարիներ զբաղած է գաղութին եւ շրջանի Հ.Մ.Ը.Մ.ին պատմութիւնը արձանագրելով, աշխատանք՝ որուն իբրեւ արդիւնք ան հրատարակած է շարք մը գիրքեր, նուիրուած՝ Հաճնոյ հերոսամարտին, Ֆիքսի Ս. Կարապետ եկեղեցւոյ, ողիմպիական մարզախաղերուն, Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան եւ Հայաստանի:

1948-1978, երեսուն տարիներ անընդհատ, իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի Ֆիքսի մասնաճիւղի վարչական, ան իր մասնակցութիւնը բերած է դիւանական, թղթակցական եւ մարզական աշխատանքներու:

1978-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի 44-րդ ներկայացուցչա-

կան ժողովին ան ընտրուած է Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան անդամ: Իբրեւ ներկայացուցիչ թէ հրաւիրեալ, ան իր մասնակցութիւնը բերած է Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի յետ պատերազմեան ներկայացուցչական թէ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Պատգամաւորական բազմաթիւ ժողովներուն:

1980-էն մինչեւ իր մահը, Հ.Մ.Ը.Մ.ի «Մարգիկ» պաշտօնաթերթին աշխատակցած է իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի շրջանի թղթակից, ստորագրելով շահեկան յօդուածներ եւ թղթակցութիւններ:

Անցնող 50 տարիներուն, Հ.Մ.Ը.Մ.էն ներս իր կատարած աշխատանքներուն զուգահեռ, եղբ. Կարպիս իր մասնակցութիւնը բերած է Հ.Յ.Դ. Ֆիքսի կոմիտէին, Հ.Կ.Խաչին, Համազգայինին, «Ազատ Օր»ին, Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան վարժարանի շինարարական աշխատանքներուն, նաեւ՝ Ֆիքսի ակումբի աշխատանքներուն:

1984-2004, քսան տարի ան մաս կազմած է Ֆիքսի թաղային խորհուրդին, ստանձնելով քարտուղարի պաշտօնը: Իսկ 1948-էն սկսեալ մինչեւ առողջական վիճակին վատթարացումը աշխատակցած է Աթէնքի «Ազատ Օր»ին, թէ՛ իբրեւ թղթակից եւ թէ՛ իբրեւ յօդուածագիր: «Ազատ Օր»ի էջերուն հրատարակած է աւելի քան 2500 թղթակցութիւններ ու գրութիւններ, իսկ Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնաթերթ «Մարգիկ»ի մէջ՝ 200-է աւելի թղթակցութիւններ եւ յօդուածներ: Ժամանակ մը ան աշխատակցած է նաեւ Պոլիս հրատարակուող «Գուլիս» գրական-գեղարուեստական պարբերաթերթին:

Յունահայ գաղութի կազմութեանէն՝ 1922-էն մինչեւ 2004, 82 տարիներու ընթացքին ներկայացուած 377 թատերական ներկայացումներու յայտարարութիւնները, անոնց մասնակցած դերակատարներուն անուանացանկերը եւ գրուած գրախօսականները ամփոփած եւ գուրգուրանքով պահած է իր արխիւներուն մէջ:

1996-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութիւնը եղբայր Կարպիսին շնորհած է Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի պատուակալ նախագահի տիտղոսը:

1999-ին, «Ազատ Օր»ի հրատարակութեան 55-ամեակին կազմակերպուած հրապարակային հանդիսութեան ընթաց-

քին, օրաթերթին իր բերած տարիներու հետեւողական ու կանոնաւոր ծառայութեան իբր գնահատանք, եղբայր Կարպիսին յանձնուած է յուշանուէր մը:

Եղբայր Կարպիս երկար տարիներ ընկերային-հոգեբանական յօդուածներու իր շարքը կանոնաւորապէս հրատարակած է «Ազատ Օր»ի Ուրբաթ օրուան թիւերուն մէջ:

ԱՐԽԻՒԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Միութեանական իր առօրեայ սպառիչ աշխատանքին առընթեր, եղբ. Կարպիս Գուլումճեան կատարած է արխիւային լուրջ աշխատանք. ան պահած է Հ.Մ.Ը.Մ-ի աւելի քան 50 տարիներու արխիւները, որոնց մէջ ընդգրկուած են շրջաբերականներ, նամակներ, լուսանկարներ, Հ.Մ.Ը.Մ-ականներու

կենսագրութիւններ, բանակումներ, ներկայացուցչական ժողովներ, այցելութիւններ, շրջապտոյտներ եւ այլն: Պահած է նաեւ Ֆիքսի Ս. Կարապետ եկեղեցւոյ թաղային խորհուրդին արխիւները: Ան իր մօտ կեդրոնացուցած է գաղութային կեանքի եւ գործունէութեան վերաբերող նկատառելի թիւով արխիւային վաւերագրական փաստաթուղթեր եւ նմոյշներ, գաղութային տարեկան վիճակագրութիւններ եւ բաղդատական եզրեր, «Տիրունի»ներու ցանկ եւ մեր կեանքի երեւելի անձնաւորութիւններու կենսագրութիւններ:

Ան թարգմանած է սպանացի թատերագիր Ալեքսանդր Քասոնայի «Ծառերը ոտքի կը մեռնին» եղբրական թատերգութիւնը, 1977-ին:

ԱՆՆՄԱՆ ԵՂԲ. ԿԱՐՊԻՍԸ

(Հ.Մ.Ը.Մ-Ի ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ՅԱԿՈԲ ԵԹԻՄԵԱՆԻ ԴԱՄԲԱՆԱԿԱՆԸ՝ ԵՂԲ. ԿԱՐՊԻՍ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ)

Մեր ցաւը այսօր մեծ է, կորուստը՝ զոր ունեցանք, ալ աւելի մեծ է, բայց եղբայր Կարպիսին ձգած յիշատակը, ժառանգութիւնը եւ փայլուն անձնաւորութեան օրինակները աննման են:

Գաղութին մէջ շատ մը հայրենակիցներ, իրենց ցուցաբերած գործունէութեամբ, իրենց անունը համապատասխան դարձուցած են այն միութեան, որուն ծառայած են.՝ այդպիսի՝ օրինակ մըն է եղբ. Կարպիսը:

Երբ Կարպիս Գուլումճեան անունը լսես՝ միտքդ անմիջապէս Հ.Մ.Ը.Մ-ը կու գայ, իսկ հակառակը՝ եթէ Հ.Մ.Ը.Մ. լսես, անմիջապէս եղբ. Կարպիսին ժպտուն դիմագիծը աչքիդ առջեւ կու գայ:

Այս մէկը պատահականութեան արդիւնք չէ: Այս մէկը կերտուեցաւ բազմաթիւ տարիներու եւ բազմատեսակ ջանքերէ ետք:

- Խումբերը լրիւ եւ կարգապահ ձեւով դաշտ ուղարկել:
 - Չափահաս մարզիկները կամաց-կամաց վարչականի վերածել:
 - Սկսուածները իրենց բոլոր կարիքներով ապահովել:
 - Յունական ֆետերասիոններու հանդէպ անսխալ դիրք եւ պատկեր ունենալ:
 - Հ.Մ.Ը.Մ-ի բոլոր գրութիւնները բծախնդրօրէն պահել:
- Եւ, եւ, եւ... իր գործունէութեանց շարքը երկար եւ անվերջ է:

Եւ այս բոլորը միմիայն Հ.Մ.Ը.Մ-ի փառքին եւ ո՛չ թէ իր անձնական համբաւը գորացնելու համար կ'ընէր:

Ընդհանրապէս կ'ըսէր.՝ Հ.Մ.Ը.Մ-ականները ճառ արտասանելու ձիրք չունին եւ իրենց ունեցած ըսելիքները միմիայն սրտանց կ'ըսեն:

Այսպէ՛ս, պարտք կը զգամ այս վայրկեանիս խոստովանիլ՝ ըսելով, թէ ես եւ իմ սերունդէս շատ մը տղաք հայ մնացինք

եղբ. Կարպիսի ջանքերով: Ինք եղած է մեր Հ.Մ.Ը.Մ-ական Հայրը: Եւ պատահական չէ, որ յոյն թղթակիցները եղբ. Կարպիսէն լսած են... «Ի իսթորիա դիս Արմէնիքիս»ը՝ Հ.Մ.Ը.Մ-ի պատմութիւնը:

Հ.Մ.Ը.Մ-ի Յունաստանի Շրջանային Վարչութեան եւ Հ.Մ.Ը.Մ-ի ամբողջ ընտանիքին կողմէ ջերմ ցաւակցութիւններ իր ընտանիքին, զաւակներուն եւ հարազատներուն:

Սիրելի եւ անմոռանալի եղբ. Կարպիս, Վստահ եղիր, որ փայլուն օրինակովդ պիտի յառաջանանք միշտ:

Ճիշդ է, որ մեզի հետ պիտի չըլլաս այլեւս, բայց ո՞վ կրնայ մոռնալ քեզ, երբ ամէն օր ու ամէն վայրկեան մեր միտքով քեզի պիտի հարցնենք՝ «հոս ի՞նչ ընեմ», «ասիկա ինչպէ՞ս դասաւորեմ»... Եւ պատասխանները պիտի առնենք մեզի ձգած քու ժառանգութենէդ:

Երթաս բարով եղբ. Կարպիս, Աստուած լուսաւորէ ճամբադ, գիտնաս՝ թէ յաւիտեան անմոռանալի ես մեզի համար:

ՄԱՀԱՉԳ

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութիւնը կը գուժէ Հ.Մ.Ը.Մ-ի «Արժանեաց» շքանշանակիր, վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ-ական, միութեան «Մարզիկ» պաշտօնաթերթի երկարամեայ աշխատակից՝

ԵՂԲ. ԿԱՐՊԻՍ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ


մահը, որ պատահեցաւ Կիրակի, 26 Ապրիլ 2015-ին, Աթէնքի մէջ:

ԵՂԲ. ԿԱՐՊԻՍ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ՅՈՎՍՖ ՊԱՐԱԶԵԱՆԻ ԿՈՂՄԷ,
ԵՂԲ. ԿԱՐՊԻՍ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ)

Հիներու մեկնումով ամէն օր քիչ մը աւելի կը կորսնցնենք մեր ազգի գոյատեւման գրաւը չահելու հեռանկարն ու ազնուկալութիւնը:

Հիներէն մէկը՝ Կարպիսը. Կարպիս Գոլյումճեանը: Անձ մը, որ յունահայ գաղութին անցեալը խորագնին հետեւողականութեամբ մը պեղեց եւ մինչեւ մեր օրերը կենդանի պահեց՝ գաղութի բազմաճիւղ մարմիններու մէջ իր աշխոյժ գործունէութեամբ. Հ.Յ.Դ., Հ.Մ.Ը.Մ., թաղականութիւն, Համագային, շինարարական յանձնախումբեր, յողուածագրութիւն եւ թղթակցութիւն «Ազատ Օր»ի ու «Մարգիկ»ի, գիրքերու եւ յուշագրութիւններու հեղինակում, արխիւային աշխատանք եւ այլն, եւ այլն:



Քոյներ ստեղծեց, առանց անոնց փոփոխութեան սակարկութիւնը կատարելու:

Կարպիսը երկար տարիներ սորվեցաւ ապրիլ իր լուծեան ու առանձնութեան մէջ: Ան երբեք թոյլ չտուաւ որ իր անձը առանձինն մնայ: Իր փնտռածը հաւատարիմ պրպտումի ճամբով գտաւ գրականութեան, յողուածագրութեան, արխիւային արձանագրութեան, ցուցակագրութեան, դասաւորման ու կարգաւորման մէջ եւ օրը-օրին գաղութային թէ համագաղութային գործունէութեան կանոնաւոր ցանկագրումին մէջ:

Ամէն օր քիչ մը աւելի կը մըցէր ժամանակին մէջ, ժամանակին հետ, եւ չէր արտօներ որ որեւէ պարագայի ժամանակը իրմէ առաջ անցնի:

Ամէն հարցի շուրջ ունէր գրելիք, եւ իւրաքանչիւր գրութիւն կը պատրաստէր ճշդապահօրէն, իր ժամանակին կը հասցնէր՝ շնորհիւ նկարագրային իր տոկոսնութեան, անդուլ աշխատասիրութեան, հետեւողականութեան եւ գիտելիքներ ամբարելու աներեւակայելի կիրքին ու մարմաջին:

Ընկեր Կարպիսը: Յատկանշական է, երբ մէկը միայն իր անունով կը կոչես, եւ ամէն մարդ անմիջապէս կը հասկնայ թէ որո՞ւ մասին կը խօսիս.

- Երէկ Կարպիսը տեսայ եւ ինծի ըսաւ որ...
- Այսօր Կարպիսին քովէն անցայ եւ ինծի պատմեց որ...
- Այս նամակը Կարպիսին խանութը ձգէ, ան պէտք եղած տեղը կը հասցնէ...
- Երէկուան թղթակցութիւնը Կարպիսը գրեց...
- Եթէ գաղութի անցեալին մասին թուական, դէպք, եղելութիւն, լուսանկար կ'ուզես, Կարպիսին գնա՛, ան կ'օգնէ քեզի:

Կարպիսին գործը կը պատկանի մեր առօրեայ հեւքոտ ժամանակին, իր յիշատակի անդարձ թէ ապագայ ժամանակներուն:

Իբրեւ մարդ, իբրեւ հա՛յ մարդ, ան շարունակական եւ իրարու հրմշտկող թիրախներ ունէր եւ այդ թիրախները արժեւորեց ու ապրեցուց մտքով, գիրով, ժողովական կանոնաւոր մասնակցութեամբ, իրեն յատուկ պարտաճանաչութեամբ եւ պարտաճանաչութեան կարգապահ ու բծախնդիր հետեւողականութեամբ, քանի իր անձին համար, իր անձին շուրջ կարգապահական կանոններ եւ իւրապատուկ փրոթո-

Իբրեւ մարդ նպատակասլաց թիրախներ ունէր եւ այդ թիրախները արժեւորեց այնպիսի ձեւով մը, որ յունահայ գաղութին մէջ ոեւէ մէկը չըրաւ, պարտաճանաչութեան այն չափանիշով ու արժեչափով, որ ընկեր Կարպիսը, եղբայր Կարպիսը, թաղական Կարպիսը, թղթակց Կարպիսը, գիրքերու հեղինակ Կարպիսը ըրաւ, մարդկային ստեղծագործ հետեւողականութեամբ մը, որ քիչերու յատուկ էր եւ այդ քիչերէն մէկն ալ յատկապէս ինքը եղաւ:

- Ո՛վ որ կը կարծէ որ յողուած գրելը դիւրին բան է, չարաչար կը սխալի, իսկ կանոնաւոր հերթականութեամբ գրելը՝ ա՛լ աւելի դժուար ու մաշեցուցիչ աշխատանք մըն է, կ'ըսէր յաճախ:

Կարպիսը այս մէկը ըսելու իրաւունք ունէր, քանի «Ազատ Օր»ի ու «Մարգիկ»ի մէջ իր հրատարակած գրութիւններուն, յողուածներուն եւ թղթակցութիւններուն թիւը 2,500-ի կը մօտենար: Գրելու անսահման սէրը զինք կանգուն կը պահէր կեանքին մէջ, ինչպէս կեանքը զինք կանգուն կը պահէր գրելու եւ գիր ու գրականութեան ճամբով ստեղծագործելու եւ ստեղծագործութիւնը կեանքի երկարող ճանապարհի վերածելու տեսլականով:

Իրեն մասին, պիտի ըսէի, որ գործի մը, թէկուզ գրութեան մը՝ հարիւրէն իննսուն տոկոսը իրականացելու համար առնուլազն տասը առ հարիւր տոկոսի ճիգ պէտք էր: Իսկ մնացեալ տասը առ հարիւրի տոկոսը ամբողջացնելու համար ալ՝ իննսուն առ հարիւրի:

Այս պարտաճանաչութիւնը ինք սորվեցաւ գաղութի մեծե-

րու, ղեկավարներու շուքին տակ հասակ առնելով եւ յաճախ վկայակոչելով այդ նուիրեալ մեծերը:

Երբ հարկ զգացուէր՝ քննադատութիւն եւ ցուցմունք կ'ընդունէր, առանց նեղուելու ու անբարդոյթ կերպով յաճախ իր անձին ու գործին ալ քննադատը ինք դառնալով, քանի ունէր ճանաչման ու ինքնաճանաչման զգացում, նկարագրային հնազանդութիւն եւ մշակոյթ:

Երբեմն-երբեմն գոհ չէր ըլլար ինքն իրմէ եւ լուռ կերպով կը փորձէր իր այսպէս ըսած տկարութիւնները սրբագրել յամառ ու անսպառ աշխատանքով, գրելով-ջնջելով, բառարաններ պրպտելով, հարցնելով ու դարձեալ հարցնելով, լաւագոյնին ձգտելու անկեղծ տրամադրութեամբ:

Չեմ գիտեր, եթէ իր բոլոր երազները իրականացուց: Վստահ չեմ, եթէ իր կեանքի աւարտին, իր նպատակասլաց կեանքին գործը վերջաւորութեան հասցուցած ըլլալու գոհունակութեան զգացում մը ապրեցաւ: Այս գաղտնիքը իր հետը տարաւ:

Հայաստանը երբեք չբացակայեցաւ իր ներաշխարհէն, իր առօրեայ կեանքէն: Նոյնիսկ երբ կը գտնուէր իր առանձնասենեակին մէջ եւ անոր մոտեքին, ուր կ'անցընէր իր օրուան բոլոր ժամերը, Հայաստանէն ներշնչուած նկարներ գետեղած էին պատերուն վրայ, գեղեցիկ շրջանակներով պատրասարուած: Մէկ խօսքով, Կարպիսը հայրենասիրութեան Ա.Բ.Գ.ը լաւ սորված էր: Իր տունը հայրենասիրական զգացումներու թանգարանի մը վերածած էր:

Ան՝ առասպելի մարդը չէր, աւանդութեան մարդն էր: Իր կեանքը նոյնացուցած էր այդ փոքրիկ ու նեղ սենեակին հետ, այդ փոքրիկ ու նեղ սեղանին հետ, կանոնաւոր շարուած գրադարանին գիրքերուն հետ: Կը հաւատար, որ գրելով, պրպտելով եւ ստեղծագործելով պիտի կասեցնէր մեր քաղաքակրթութեան հետզհետէ ուռճացող տագնապը՝ աւելի գեղեցիկ աշխարհ մը պատկերացնելու ակնկալութեամբ:

Չեմ գիտեր, յաջողեցա՞ւ իր նպատակին մէջ:

Իրեն համար Հայաստանը, հայրենիքը, հայը համապարփակ այն իմաստներն էին, որոնք կը վերակենդանացնէին մեր ժողովուրդի անցեալի ու ներկայի պատմութիւնը իր ողբերգութիւններով ու հերոսապատումներով: Անձ մըն էր, որ հայրենիքը ընտրեց իր կեանքի կամաւոր թէ պարտադիր բոլոր իրականութիւններուն մէջ: Իր բուն ու հարազատ հայրե-

ԵՂՔ. ԿԱՐՊԻՍ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ ՍՐԱՀ ԵՒ ԱՐԽԻՒՆԵՐՈՒ ԹՈՒԱՅՆԱՅՈՒՄ

Եղբ. Կարպիս Գույումճեանի մահուան տխուր առիթով, Զ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութիւնը որոշեց.-

1) Եղբ. Կարպիս Գույումճեանի մեծ գուրգուրանքով եւ բծախնդրութեամբ պատրաստած եւ Զ.Մ.Ը.Մ.ի վերաբերեալ մօտ 70 տարուան արխիւային աշխատանքը առնել Շրջանային Վարչութեան պատասխանատուութեան տակ՝ այն առաջադրանքով, որ զայն ապահով տեղ մը տեղաւորէ եւ միեւնոյն ժամանակ արդիականացընէ ու թուայնացնէ (Digital scanning):

2) Վարչութիւնս արդէն ապահոված է այս աշխատանքին սրահը, Սուրբ Յակոբ եկեղեցւոյ բակին մէջ, եւ որոշած է զայն կոչել Կարպիս Գույումճեանի սրահ: Հոն պիտի տեղաւորուի, պիտի պահեստաւորուի, պիտի արդիականացուի եւ ի վերջոյ պիտի ցուցադրուի եղբ. Կարպիս Գույումճեանի պատրաստած արխիւային գանձը:

3) Այս աշխատանքներուն ձեռնարկելու եւ գանձը յաջողութեամբ պսակելու համար, կը ըստեղծուի յատուկ հիմնադրամ (ֆոնտ), որուն հասոյթը պիտի յատկացուի սրահի պատրաստութեան եւ արխիւային բոլոր աշխատանքներուն:

Զ.Մ.Ը.Մ.Ի ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

նիքը միայն Հայաստանն էր: Մնացեալ հայրենիքները երկրորդական էին եւ այդ ընտրութեան թէ նախընտրութեան մէջ գիտէր գերակշռել իր զգացումներուն խորքը: Ճերմակ թուղթին վրայ իր վարժ մատներով մէկ վայրկեանէն կրնար խորհրդանշական գինանշան մը իր բովանդակ հայրենիքով ու հայրութեամբ գծել, ձեւաւորել իր ամենահարազատ գոյներով: Իր սրտին խորը շատ լաւ գիտէր, թէ ո՞րն է իր հայրենիքը եւ այդ հայրենիքին շուրջ իր եւ իր շուրջիններով աշխարհը յարմարեցնելու գաղտնիքը ունէր, քանի հայկականութիւնը իրեն համար եւ զգացում էր, եւ խիղճ, եւ ուրիշ շատ մը բաներ:

Յունահայ գաղութի միութենական եւ հաւաքական կեանքին մէջ, ան երբեք չհաշուեց ուրախութիւններ թէ տխրութիւններ, քանի իր կապը սիրոյ ու նուիրումի անսպառ եւ ընդհանուր շղթայի մը անքակտելի յարաբերութիւնը եղաւ:

Կարպիսը սիրեց Յունաստանը, սիրեց յունահայրութիւնը, սիրեց մարդկութիւնը, բայց չսիրեց թուրքը, քանի իր ընտանիքն ալ արեան տուրք տուաւ թուրքին անգութ եաթաղանին:



Կարպիսին ամբողջ կեանքը ճամբորդութիւն մը եղաւ սկսող ու չվերջացող ժամանակին մէջ, որմէ պարտուեցաւ վերջ ի վերջոյ: Բայց երբեք չխզեց իր կապը անցեալին հետ, ո՛չ ալ պատմութեան հետ, յուշագրութեան, գաղութի տարեգրութեան հետ: Անցեալը կենդանի պահեց իր սրտին մէջ եւ ճգնեցաւ զայն փոխանցել ու վարակել յետնորդ սերունդներուն, այն չափով ու համեմատութեամբ, որ նոր սերունդը իր ժամանակակից տուեալներով կրնայ ընկալել զայն:

Հաւատաց որ բոլոր հայերը Հայաստանի ու հայութեան միեւնոյն երազը ունին, եւ այդ յոյսով ակնկալեց որ յետնորդ սերունդներուն մէջ միշտ ալ գտնուի մէկը, որ ազգին ջահը վառէ իր գրպանին մէջ պահուած հրահրուած լուցկիով մը, մեր դատը առկայժ պահելու, մեր կեանքի բոցկլտացող պահանջատիրութեան շարունակութիւնը ապահովելու համար:

Այսօր նորերը կամ համեմատաբար աւելի նորերը կը պատուեն հիները եւ անոնց ապրած մտաւորական մտորումներու նախատեսութիւններուն վտանգը: Անոնք որ գիտցան, որ չկարողացան յաղթահարել տիրող մտաւորական



թմրութիւնը, քանի մեր կեանքի շարունակուող անորոշութիւնը կրնայ տատանող վերիվայրումներու ապագայ մը ունենալ:

Յարգելի՛ ընկեր,

Կ'ուզեմ, որ երբ ասկէ վերջ խօսուի քու մասիդ, քու պատրաստած արխիւային հսկայ աշխատանքիդ ընդմէջէն ներկայացուի այս գաղութի կենսագրութիւնն ալ, իր բովանդակ պատմութեան տարբեր՝ փայլուն թէ՛ նահանջ


ջող մարզերով:

Այս գաղութի կեանքին ճամբորդութիւնը վերջ գտած չէ, քանի կեանքի յիշատակը վկայակոչողներու արուեստը կը գուզադիպի մեր կեանքի յարատեւութեան գաղտնիքին հետ:

Յարգելի՛ ընկեր Կարպիս,

Թաղումիդ ներկայ ըլլալու համար երբ եկեղեցի կու գայի՝ ճամբուդ վրայ հանդիպեցայ թաղիդ նամակաբերին եւ իրմէ խնդրեցի, որ ասկէ վերջ «Ազատ Օր»ն ու «Մարզիկ»ը քեզի բերէ քու նոր հասցէիդ:

ARMENIAN GENOCIDE 100

1915-2015  100th Year of Remembrance

Հ.Մ.Ը.Մ.
ԱՆԹՈՒԼԻԱՍ
ԱՅՆԹՈՒՐԱՅԻ
ՏԽՐԱՀՌՉԱԿ
ՈՐԲԱՆՈՑԻՆ
ՄԷՉ





ՄԻՏՆԻ.
ԿԸ ՅԻՇԵՆՔ ՈՒ
ԿԸ ՊԱՀԱՆՁԵՆՔ